



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

2 (78)

ԵՐԵՎԱՆ

2018

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

2 (78), 2018

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արա Մարջանյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.

Արամ Սաֆարյան

«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, ք.գ.թ.

Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն,

ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր

Հրանտիկ Հակոբյան

Իրավաբանության դոկտոր

Միհրան Դաբալ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Միջուկի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Ջորջ Կոստոպուլու

Կիրենանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)

Մամվել Մանուկյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, տ.գ.թ.

Սերգեյ Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

Տնտեսագիտության թեկնածու

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 2 (78), 2018թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
<i>Գլխավոր խմբագիր</i> Գագիկ Հարությունյան	Աղասի Թավադյան ՀՀ արտահանման ներուժը և մրցունակության բարելավման հիմնախնդիրները 4
<i>Գլխավոր խմբագրի տեղակալ</i> Արա Մարջանյան	Գայանե Հարությունյան Հայաստանի ռազմարդյունաբերության զարգացման ներուժը 13
<i>Պատասխանատու խմբագիր</i> Խոնարհիկ Քարառլյանյան	Անուշավան Բարսեղյան Ադրբեջանի տնտեսությունը 2017թ. 29
<i>Պատասխանատու քարտուղար</i> Լուսինե Բաղրամյան	Վահրամ Հովյան Պետություն-սփյուռք գործակցության իրանական փորձից 42
Արեստակես Միմավորյան Դիանա Գալստյան Կարեն Վերանյան Սամվել Սանուկյան Վահագն Ազյան Վահրամ Հովյան	Կարեն Վերանյան Պետություն-սփյուռք գործակցությունը հրեությունում. հնարավորություններ և խնդիրներ 59
	Վահե Սարգսյան Հայոց ցեղասպանության խնդրի արձարծումը հետխորհրդային Վրաստանում (մաս 2) 72
	Սարիամ Սաժեշ Պարսկական երաժշտական մշակույթի վրա հայկականի ազդեցության սոցիոլոգիական ուսումնասիրություն 87
	Նունուֆար Ստեփանյան Կոալիցիաների դերը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում 94
	Միսակ Սարգսյան Լեզբիտիմությունը որպես պոզիտիվ իրավունքի բնութագրական հատկանիշ 109
	Վահե Պողոսյան Քաղաքական լիդերը որպես քաղաքական կուսակցության հաջողության գրավական 116

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աղասի Թավադյան՝

Բանալի բառեր՝ առևտրային հաշվեկշիռ, կանխատեսում, մրցունակություն, փոխարժեք, պատրաստի արտադրանք:


Մրցունակության աստիճանի բարելավումն առաջնահերթ խնդիր է: Այն առաջին հերթին արտահայտվում է ՀՆԱ աճով և առևտրային հաշվեկշռի բարելավմամբ, հատկապես փոքր տնտեսությամբ երկրի համար: ՀՀ արտահանման իրական ներուժը, արտահանման առանցքային ճյուղերը գնահատելու և մրցունակությունը բարելավելու համար անհրաժեշտ է դիտարկել ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկայի ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա:

Փոխարժեքի համեմատական կայունությունն արդյունավետ է, երբ տնտեսությունը գտնվում է հավասարակշռության վիճակում: Եթե, իհարկե, առկա չեն տնտեսությունում կուտակված ճգնաժամային միտումներ, որոնք ի վիճակի են զսպանակի պես մի քանի օրվա ընթացքում էապես փոփոխել փոխարժեքը: Ճգնաժամի պարագայում արհեստականորեն պահպանվող թվացյալ կայուն փոխարժեքի լայն տատանումը մեծ բացասական հետևանքներ է բերում միջնաժամկետ կտրվածքով, որոնք արտահայտվում են հիմնականում արտադրության, բիզնես ակտիվության և առևտրային հաշվեկշռի անկմամբ: Ինչպես երևում է *Գծապատկեր 1*-ից, ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկան ունի հիմնականում հակառակ կախվածություն ներմուծում/արտահանում հարաբերությունից: Այսինքն՝ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման պարագայում երկարաժամկետ կտրվածքով բարելավ-

* ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի «Դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը ՀՀ տնտեսության մրցունակության վրա» հետազոտության ղեկավար, ՀՊՏՀ դասախոս, տ.գ.թ.:

վում է առևտրային հաշվեկշիռը: Իսկ կարճաժամկետ կտրվածքով արտահանման և ներմուծման ցուցանիշները փոխարժեքի կտրուկ արժեզրկման դեպքում վատթարանում են: Հատկապես դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկման պարագայում առկա է արտադրական և առևտրային ցուցանիշների անկում մինչև մեկ տարի կտրվածքով: Դրանից հետո գործում է վերականգնողական աճ, որի հետևանքով ոչ միայն վերականգնվում է տնտեսությունը, այլ նաև կրճատվում է ներմուծում/արտահանում բացասական հարաբերակցությունը:

Գծապատկեր 1
ՀՀ փոխարժեքի ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա¹



Տնտեսական կայունության պայմաններում փոխարժեքի սահուն փոփոխությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ առկա է առևտրային հաշվեկշռի բարելավման խնդիր: Տվյալ դեպքում փոխարժեքի արժեզրկումը պետք է ունենա հստակ տեսանելի միտում: 2004-2008թթ. ՀՀ դրամի փոխարժեքի 570 դրամից մինչև 305 դրամ սահուն արժևորման պայմաններում տնտեսվարող սուբյեկտները ժամանակ ունեին հարմարվելու նոր

¹ Գծապատկերը և կանխատեսումը կազմված են հեղինակի կողմից, արտահանման և ներմուծման յուրաքանչյուր կետն ամսվա կտրվածքով ներկայացնում է վերջին 12 ամիսների գումարային արժեքը (մլն ԱՄՆ դոլար): Տեղեկատվական աղբյուր՝ cba.am, armstat.am:

իրականությանը: Այս միտումը բացասաբար չանդրադարձավ ՀՆԱ իրական աճի վրա, սակայն, ինչպես երևում է *Գծապատկեր 1*-ից, 2004-2008թթ. փոխարժեքի արժեզրկումը հստակորեն վատթարացրեց առևտրային հաշվեկշռի վիճակը: Ներմուծում/արտահանում հարաբերակցությունն այս ժամանակաընթացքում կտրուկ աճեց՝ 2-ից հասնելով 4 անգամի:

2004 թվականից գրանցվել է ՀՀ դրամի փոխարժեքի՝ ճգնաժամով պայմանավորված 2 կտրուկ արժեզրկում. 2009թ. սկզբին և 2014թ. վերջին: Առաջին ճգնաժամային արժեզրկումը բացասաբար անդրադարձավ և՛ ներմուծման, և՛ արտահանման վրա, 2009թ. դրանք համապատասխանաբար կրճատվեցին 25% և 32.8%: Կարճաժամկետ ընթացքում փոխարժեքի կտրուկ փոփոխությունը բացասաբար է անդրադառնում առևտրային հաշվեկշռի վրա: Նշենք, որ արտահանման կրճատումն ավելի էական էր, սակայն 1 տարի անց արտահանումը և ներմուծումը սկսեցին դրսևորել վերականգնողական աճ: Ներմուծում/արտահանում բացասական հարաբերակցությունը կրճատվեց 4-ից մինչև 3 անգամի, ինչը դրական էր առևտրային հաշվեկշռի բարելավման տեսանկյունից:

2014թ. վերջին գրանցված ՀՀ դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկումը բացասաբար անդրադարձավ առաջին հերթին ներմուծման վրա, 2015թ. ընթացքում այն կրճատվեց 26.8%: Այնուամենայնիվ, արտահանման ցուցանիշը մեծ փոփոխություն չարձանագրեց, ինչը պայմանավորված էր հիմնականում արտահանման ավելի մեծ բազմազանեցմամբ՝ 2009թ. համեմատ: Պետք է նշել, որ տվյալ ճգնաժամային փուլում տեղի ունեցան արտահանման կառուցվածքային փոփոխություններ, արտահանման որոշակի ուղղություններ կտրուկ փոփոխվեցին, սակայն գումարային փոփոխությունը համեմատաբար մեծ չէր: Այդ տարի մեծացավ գումարային մետաղների հանքաքարի արտահանումը դեպի Չինաստան, ի հաշիվ որի արտահանման գումարային ցուցանիշը մնաց համեմատաբար անփոփոխ:

2014թ. վերջին տեղի ունեցած դրամի կտրուկ արժեզրկումից 1 տարի անց և՛ արտահանման, և՛ ներմուծման ցուցանիշները սկսեցին արձանագրել վերականգնողական աճ, իսկ ներմուծում/արտահանում հարաբերակցությունը բարելավվեց՝ դառնալով 1.8: Նշենք, որ մեր կանխատեսումը ցույց չի տալիս տվյալ ցուցանիշի հետագա բարելավում, քանի որ կայուն փոխարժեքի դեպքում ներմուծման և արտահանման ցուցանիշների աճի տեմպերը գրեթե հավասար են: Առևտրային հաշվեկշռի հետագա բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել նպատակաուղղված արտահան-

ման աջակցման ռազմավարություն, որը նպաստավոր կլինի առաջին հերթին պատրաստի արտադրանք ապահովող ճյուղերի համար: Նպաստավոր է նաև ՀՀ դրամի փոխարժեքի սահուն արժեզրկումը: ՀՀ դրամի փոխարժեքի սահուն արժեզրկումը ներուժ ունի բարելավելու առևտրային հաշվեկշիռը, ինչպես նաև կարող է նպաստել ներմուծվող ապրանքատեսակները տեղական արտադրությամբ փոխարինելուն:

Արտահանմանն ուղղված քաղաքականության վերանայումը և արդիականացումը առաջնահերթ հիմնախնդիր են: «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության 100 օր» փաստաթղթում «Արտահանում» բաժնում ընդգծվում է, որ Հայաստանը, հանդիսանալով փոքր շուկայով երկիր և ունենալով մասշտաբի էֆեկտի բացակայություն, զարգացման մոդելը պետք է կառուցի արտահանմամբ պայմանավորված տնտեսական աճի վրա: Այդպիսի աճն է արտահայտում տնտեսության արդյունավետ բազմազանեցումը և ապահովում երկրի մրցունակության բարձրացումը:

2015 թվականից ապրանքների արտահանում/ՀՆԱ հարաբերությունը դրսևորում է բարելավման միտում՝ 2014թ. 14%-ից հասնելով 20% 2017թ., ինչը ցույց է տալիս ՀՀ տնտեսության արտադրության ներուժի աճը: Սակայն, ըստ մեր կանխատեսման, տվյալ հարաբերության աճը դանդաղելու է և լինելու է 23%-ի շրջանակում: Սա պայմանավորված է հիմնականում նրանով, որ, ըստ կանխատեսման, արտահանման և ՀՆԱ աճի տեմպերը հավասարվելու են: Այս պարագայում ապրանքների արտահանում/ՀՆԱ հարաբերության թիրախային 30% միջակայքին մինչև 2020թ. հասնելու համար անհրաժեշտ է արտահանման քաղաքականության հետագա բարելավում:

Վերջին 3 տարիներին գրանցված՝ ՀՀ դրամի փոխարժեքի (480 դրամի շրջանակում) համեմատական կայուն լինելն արդյունավետորեն է անդրադարձել արտահանման աճի վրա, հատկապես երբ այն գտնվում է վերականգնողական աճի փուլում: Սակայն վերականգնողական աճի դադարումից հետո արտաքին և ներքին ճգնաժամային ազդեցությունների պարագայում անարդյունավետ է փոխարժեքի տվյալ միջակայքում նպատակաուղղված պահպանումը: Ըստ մեր կանխատեսման, առևտրային ցուցանիշների բարձր տեմպով աճն առավել հավանականությամբ կշարունակվի մինչև 2018թ. 3-րդ եռամսյակը: Սա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ մեր տնտեսությունը տեխնոլոգիապես դեռ հազե-

ցած չէ երկարաժամկետ կտրվածքում արտահանման ցուցանիշի այսպիսի աճ ապահովելու համար: Իսկ 2019թ. արտահանման և ներմուծման աճի տեմպը, ելնելով առևտրային հաշվեկշռի դինամիկայից, լինելու է 3-5% շրջանակներում:

2017թ. կտրվածքով արտահանումն առաջին անգամ գերազանցեց \$2 մլրդ-ի սահմանը՝ կազմելով \$2.2 մլրդ: 2017թ. ընթացքում գրանցվել է արտահանման 25% էական աճ, իսկ 2016թ.՝ 17%: 2 տարիների ընթացքում արտահանումն աճել է մոտ 50%, դեպի ԵԱՏՄ նույն ժամանակահատվածում այն ավելի քան կրկնապատկվել է: Գրանցված արտահանման աճը կարևոր գործոն է ՀՀ մրցունակության բարելավման տեսանկյունից, և այն փաստը, որ վերականգնողական աճն առաջին հերթին դրսևորվել է դեպի Ռուսաստան աճով, ցույց է տալիս, որ ԵԱՏՄ-ին անդամակցությունն արդյունավետ է մեր տնտեսության համար, հատկապես արտահանման աճի տեսանկյունից:

Եթե համեմատենք հետխորհրդային տնտեսությունների 2014թ.՝ մինչ ազգային արժույթների փոխարժեքների կտրուկ փոփոխության և 2017թ. առևտրաշրջանառության ցուցանիշը, ապա Հայաստանի Հանրապետությունը միակ պետությունն է, որը գերազանցել է 2014թ. մակարդակը: Սա խոսում է նաև մեր տնտեսության համեմատաբար բարձր առաձգականության մասին:

Առաջնահերթ խնդիր է նաև արտահանման հետագա բազմազանեցումը: Հարկ է օգտագործել ինտեգրացիոն գործընթացների բոլոր հնարավորությունները՝ ապրանքների արտահանումը \$3 մլրդ-ի հասցնելու համար: Նշենք, որ արտահանման նոր թիրախային \$3 մլրդ մակարդակին, ըստ մեր կանխատեսման, հնարավոր է հասնել 2020թ. վերջին:

Դիտարկենք ՀՀ արտահանումը Ռուսաստան, քանի որ Ռուսաստանը ՀՀ հիմնական առևտրային գործընկերն է և ԵԱՏՄ ամենախոշոր տնտեսությունը: ՀՀ արտահանումը Ռուսաստան 2016թ. կազմել է \$374,5 մլն՝ ընդհանուրի 20.9%-ը: Իսկ 2017թ. արտահանումը Ռուսաստան կազմել է \$541,6 մլն՝ ընդհանուրի 24.1%-ը, մեծացել է արտահանման տեսակարար կշիռը: 2016թ. ՀՀ արտահանումը Ռուսաստան աճել է 53%, իսկ 2017թ. արտահանման աճը տվյալ ուղղությամբ եղել է 44.6%: Ինչպես նշեցինք, 2 տարիների ընթացքում ՀՀ արտահանումն աճել է մոտ 50%, իսկ դեպի Ռուսաստան արտահանումն ավելի քան կրկնապատկվել է՝ 2015թ. կազմել է \$256 մլն, իսկ 2017թ. հասել է \$555 մլն-ի:

Գծապատկեր 2

ՀՀ-ից Ռուսաստան արտահանման, ՌԴ ռուբլու և տրանսֆերտների դինամիկան¹



Կա որոշակի կախվածություն նաև դեպի Ռուսաստան արտահանման և ռուսական ռուբլու փոխարժեքի դինամիկայի միջև (Գծապատկեր 2): Ինչպես երևում է գծապատկերից, 2009 և 2014-2015թթ. ճգնաժամերի հետևանքով տեղի ունեցած՝ ռուսական ռուբլու փոխարժեքի կտրուկ արժեզրկումները երկու ժամանակահատվածում էլ բացասաբար են անդրադարձել ՀՀ-ից Ռուսաստան արտահանման վրա:

Վերջին մեկ տարվա ընթացքում ռուսական ռուբլին գտնվել է շուկայական նոր՝ համեմատական կայունության կետում և տատանվում է \$1-ը մոտ 57 ռուբլու շրջանակում: Այն շարունակելու է սահուն կերպով տատանվել տվյալ միջակայքում, և միջնաժամկետ կտրուկ տատանումների հավանականությունը ցածր է: Քանի որ առկա է որոշակի կախվածություն ռուսական ռուբլու փոխարժեքի և ՀՀ-ից Ռուսաստան արտահանման մեջ, ապա սա շարունակելու է դրականորեն ազդել ՀՀ արտահանման վրա:

Ակնառու է նաև ռուսական ռուբլու փոխարժեքի դինամիկայի փոփոխության և ՀՀ եկող տրանսֆերտների կապը, որի դինամիկան որոշակիոր-

¹ Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից: ՀՀ-ից Ռուսաստան արտահանման յուրաքանչյուր կետն անսվա կտրվածքով ներկայացնում է վերջին 12 ամիսների գումարային արժեքը: Տեղեկատվական աղբյուր՝ cba.am, armstat.am:

րեն համեմատական է դեպի Ռուսաստան արտահանման դինամիկայի հետ: Նշենք, որ տրանսֆերտները Հայաստան հիմնականում ստացվում են Ռուսաստանից՝ 63%: 2015թ. տրանսֆերտները գրանցել են կտրուկ անկում՝ պայմանավորված առաջին հերթին ռուբլու փոխարժեքի փոփոխությամբ: Ինչպես երևում է *Գծապատկեր 2*-ից, տրանսֆերտների դինամիկան արդեն գտնվում է վերականգնողական փուլում, 2017թ. գրանցվել է տրանսֆերտների մոտ 7% աճ:

Նկատվում է արտահանման, հատկապես պատրաստի արտադրանքի արտահանման զգալի աճ: Դեպի Ռուսաստան արտահանման աճն ընթանում է առաջանցիկ տեմպերով: Արտահանման աճի մեջ առանցքային դեր ունի դրա կառուցվածքը: Ավելացված արժեքի բարձր տոկոս ունեցող պատրաստի արտադրանքի արտահանման հիմնական հեռանկարը կապվում է Ռուսաստանի հետ: Հարկ է օգտագործել ԵԱՏՄ հնարավորությունները դեպի միության այլ երկրներ նույնպես արտահանման զգալի աճ ապահովելու համար:

Հարկ է նշել, որ գունավոր մետաղների հանքաքարի արտահանման տեսակարար կշիռն ամենամեծն է: 2017թ. ՀՀ արտահանման 25%-ը կազմել է հանքաքարը, որը հումք է, չի հանդիսանում պատրաստի արտադրանք և ունի ցածր ավելացված արժեք: Տվյալ հոդվածի արտահանման հարաբերական կշիռը տարիների ընթացքում աճում է և ունի աճի հետագա միտում: ՀՀ արտահանման բազմազանեցման և բարելավման տեսանկյունից անհրաժեշտ է նաև հանքաքարի խտանյութի վերամշակման իրականացում ՀՀ-ում: Այս միջոցառումը կմեծացնի գունավոր մետաղների արտահանումը, որի ավելացված արժեքն ավելի մեծ է: Մետաղագործության զարգացումը կարող է ստեղծել նոր հարակից ճյուղերի ներդրման հնարավորություններ, որն իր հերթին ունի ՀՆԱ-ն և արտահանումը մեծացնելու ներուժ: Այս տեսանկյունից նպատակահարմար է ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության որոշակի ճշգրտում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետությունը համեմատաբար լավ է հակազդել մեր տարածաշրջանում գրանցված 2014-2015թթ. փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ պայմանավորված ճգնաժամին: Սակայն դեռ առկա են բացասական առևտրային հաշվեկշռի բարելավման, արտահանում/ՀՆԱ հարաբերակցության աճի ապահովման, արտահանման ապրանքատեսակների հետագա բազմազանեցման, մեծ ներուժ և բարձր ավելացված արժեք ունեցող պատրաստի արտադրանքի խթանման խնդիրներ:

Մարտ, 2018թ.

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աղասի Թավադյան

Ամփոփագիր

ՀՀ արտահանման ներուժը, առանցքային ճյուղերը գնահատելու և մրցունակության մակարդակը բարձրացնելու համար հողվածում դիտարկվել է ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկայի ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա: Առկա է արտահանման ծավալի էական աճ, սակայն անհրաժեշտ է բացասական առևտրային հաշվեկշռի և արտահանում/ՀՆԱ հարաբերակցության հետագա բարելավում:

Առևտրային հաշվեկշռի բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել պատրաստի արտադրանքի արտահանման էական աճի և բազմազանեցման նպատակաուղղված ռազմավարություն: ՀՀ դրամի փոխարժեքը դրական ազդեցություն ունենալու ներուժ ունի առևտրային հաշվեկշռի վրա, ինչպես նաև կարող է նպաստել ներմուծվող ապրանքատեսակները տեղական արտադրությամբ փոխարինելուն:

ЭКСПОРТНЫЙ ПОТЕНЦИАЛ И ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ УРОВНЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ РА

Агаси Тавадян

Резюме

Для оценки экспортного потенциала ключевых отраслей и для повышения уровня конкурентоспособности РА в статье исследовано влияние динамики курса драма на торговый баланс. При существенном росте экспорта необходимо дальнейшее улучшение состояния торгового баланса и соотношения экспорта к ВВП.

Для улучшения состояния торгового баланса необходима разработка стратегии существенного роста экспорта готовой продукции и его диверсификация. Курс драма имеет потенциал позитивного воздействия на торговый баланс, а также может способствовать замещению импортируемых товаров продуктами местного производства.

**THE EXPORT POTENTIAL AND THE COMPETITIVENESS
IMPROVEMENT ISSUES IN RA**

Aghasi Tavadyan

Resume

The article examines the impact of AMD exchange rate fluctuations on the trade balance in order to assess the potential of exports and key industries as well as to increase the level of competitiveness of Armenia. With a significant increase in exports, further improvements in the trade balance and the ratio of exports to GDP is necessary.

To improve the state of the trade balance, it is necessary to develop a strategy for a substantial increase in the export of finished products and for its diversification. The AMD exchange rate has the potential to have a positive impact on the trade balance and can also help substitute local products for imported goods.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

*Գայանե Հարությունյան**

Բանալի բառեր՝ ռազմարդյունաբերություն, Կրաուզեի աղյուսակ, համեմատական առավելություններ, մասնագիտացում, մարդկային կապիտալ, հետազոտություն և մշակումներ:

ՀՀ «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում ռազմարդյունաբերական գործունեություն է համարվում ռազմական պետական պատվերի հիման վրա սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման, արդիականացման, արտադրության, վերականգնման, նորոգման, ծառայությունների մատուցման և սպասարկման աշխատանքների տնտեսական գործունեության ձևերի համակցությունը [1]: Մահմանումն ընդհանուր է և քիչ ինֆորմատիվ՝ ոլորտում մասնագիտանալու ուղղությունները տարբերակելու համար: Այդ առումով առավել լայն հնարավորություն է տալիս, այսպես կոչված, Կրաուզեի աղյուսակը [2], որը ներկայացնում է ոլորտում հնարավոր մասնագիտացման աստիճանակարգը.

1. Պարզագույն սպասարկման ծառայություններ
2. Կապիտալ վերանորոգում և տարրական (ռուդիմենտար) ձևավորություններ
3. Ներմուծված բաղադրիչների հավաքում, պարզ լիցենզավորված արտադրություն
4. Բաղադրիչների կամ հումքի տեղական արտադրություն
5. Ոչ բարդ (ոչ առաջադեմ-*less sophisticated*) սպառազինությունների բաղադրիչների վերջնական հավաքում, որոշ բաղադրիչների տեղական արտադրություն

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ակադ. Մ.Քոթանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող:

6. Ոչ բարդ սպառազինությունների համատեղ կամ լրիվ լիցենզավորված արտադրություն
7. Տեղական լիցենզավորված արտադրությունների համար սահմանափակ գիտահետազոտական մշակումներ
8. Ոչ բարդ սպառազինությունների տեղական անկախ արտադրություն, առավել առաջադեմ սպառազինությունների (*advanced arms*) սահմանափակ արտադրություն
9. Ոչ բարդ սպառազինությունների անկախ ԳՀՓԿԱ-ների (գիտահետազոտական և փորձնակոնստրուկտորական աշխատանքներ) իրականացում և արտադրություն
10. Արտասահմանյան բաղադրիչներով առավել արդիական սպառազինությունների անկախ հետազոտական և նախագծային աշխատանքներ
11. Անկախ ԳՀՓԿԱ կազմակերպում և սպառազինությունների ինքնուրույն արտադրություն:

Թեև ներկայացված աստիճանակարգը կարող է լավ կողմնորոշիչ հանդիսանալ երկրներում ռազմարդյունաբերության փուլային զարգացման համար, այնուամենայնիվ, հետազոտողներն այն զերծ չեն համարում թերություններից: Մասնավորապես, Բրաուները գտնում է, որ պարտադիր չէ մասնագիտանալ առաջին փուլից և հասնել մինչև վերջին փուլ, ռազմարդյունաբերության զարգացումը կարելի է սկսել ցանկացած փուլից՝ կախված երկրի զարգացման աստիճանից և առկա խնդիրներից: Բացի այդ, նա գտնում է, որ այն չի արտացոլում մասնագիտացման բոլոր հնարավորությունները, օրինակ՝ երկիրը կարող է արտադրել սպառազինությունների հենահարթակներ (օրինակ, ռազմանավեր), սակայն ներկրել այն սպառազինությունները, որոնք տեղակայվելու են դրանց վրա, կամ երկիրը կարող է մասնագիտանալ կառավարման ավտոմատացված համակարգերի արտադրությունում, բայց չունենալ սեփական ռազմարդյունաբերություն [3]:

Գնահատման մեթոդաբանությունը: Թեև ռազմարդյունաբերության զարգացման ներուժի ձևավորումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց մեծամասնությունը ոչ տնտեսական բնույթ ունի, մեր կողմից վերլուծվել են միայն այն գործոնները, որոնք կարևոր են ոլորտի համեմատական առավելությունների ձևավորման համար: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ Հայաստանը, ունենալով փոքր, բաց տնտեսություն, ցանկացած արտադրական ոլորտի ներուժի բացահայտման և հեռա-

նկարային զարգացման հիմքում պետք է դնի արտահանման հնարավորությունների գնահատումը: Այս տեսանկյունից կարևորել ենք աշխատուժի, արտադրության այլ գործոնների և շուկայական պահանջարկի գնահատումը: Արտադրության այլ գործոնների գնահատման համատեքստում անդրադարձել ենք նաև հարակից և սպասարկող արտադրություններին:

Նշված մեթոդաբանությամբ ոլորտի ներուժի գնահատումն, անշուշտ, չի ենթադրում ճշգրիտ ու հստակ քանակական գնահատականներ մի քանի պատճառով: Նախ՝ ռազմարդյունաբերության վերաբերյալ վիճակագրական տվյալները Հայաստանում գրեթե չեն հրապարակվում, ուստի, չենք կարող ուսումնասիրել աշխատուժի արտադրողականության, գործող ձեռնարկությունների ֆոնդազինվածության, թողարկվող արտադրանքի տեսականու, պետական պատվերի, արտահանման ծավալների և այլ ցուցանիշները: Բացի այդ, ռազմական նշանակության արտադրանքի թողարկման ներուժ կարող են ունենալ նաև այն ձեռնարկությունները, որոնք տվյալ պահին արտադրում են քաղաքացիական նշանակության արտադրանք, սակայն բավական ճկուն տեխնոլոգիաներ ունեն արտադրության արագ կոնվերսիայի համար: Նման արտադրությունների անտեսումն արհեստականորեն կարող է նեղացնել ռազմարդյունաբերության ներուժի իրական պատկերը: Հետևաբար, մեր կողմից իրականացվող գնահատումն ավելի շուտ կողմնորոշիչ բնույթ է ունենալու՝ հնարավորություն տալով նախանշել ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները:

Աշխատուժ: Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացման հիմնասյունը բարձրորակ աշխատուժն է, որի մասին բազմիցս է խոսվել: Այն հատկանշվել է գիտատեխնիկական նվաճումներն արագ յուրացնելու և բարձրտեխնոլոգիական արտադրություններ նախաձեռնելու իր ունակությամբ: Սակայն նկատենք, որ դա Հայաստանում չի նպաստել նորարարական տնտեսության ձևավորմանը, որտեղ գերակշռում են գիտատար արտադրական ոլորտները, ինչը կասկած է հարուցում, թե արդյոք բարձրորակ մարդկային կապիտալը, որը Խորհրդային Հայաստանի կարևոր համեմատական առավելությունն էր, շարունակում է պահպանվել նաև այսօր:

Համաձայն ՄԱԿ Զարգացման ծրագրի կողմից մշակված Մարդկային զարգացման ինդեքսի, 1990-ից մինչ օրս Հայաստանում այդ ցուցանիշի զգալի աճ է արձանագրվել՝ 0,634-ից 0,734, թույլ տալով 2016-ին 188 երկրների շարքում զբաղեցնել 84-րդ տեղը, թեև անմիջական հարևաններն այդ ցուցանիշով ավելի շահեկան վիճակում են (Իրան՝ 69-րդ, Վրաստան՝ 70-րդ,

Թուրքիա՝ 71-րդ, Ադրբեջան՝ 78-րդ): Ինդեքսի մեջ ներառվող կրթության մակարդակի ցուցանիշով (0.730՝ 60-րդ տեղում) Հայաստանը գերազանցում է Ադրբեջանին (64-րդ տեղում), Իրանին (77-րդ) և Թուրքիային (92-րդ), բայց զգալիորեն զիջում է Վրաստանին (43-րդ), իսկ ինդեքսի մեկ այլ բաղադրիչի՝ մեկ շնչին բաժին ընկնող ազգային եկամտի գծով Հայաստանն այս երկրների շարքում վերջին տեղում է [4]: Համեմատության համար ներկայացնենք նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի հաշվարկած Մարդկային կապիտալի ինդեքսի (ՄԿԻ) տվյալները: Այն ներառում է չորս հայտանիշ՝ *կարողություններ* (ձեռք են բերվել նախկինում կրթության վրա կատարված ներդրումների արդյունքում), *որակավորում* (հմտությունների կիրառումը և կուտակումը աշխատանքային գործունեության ընթացքում), *գարգացում* (ապագա սերնդի կրթության մակարդակը, ինչպես նաև ընթացիկ աշխատուժի վերաորակավորման և որակավորման բարձրացման հնարավորությունը), *նոս-հաու* (աշխատանքի ընթացքում օգտագործվող հատուկ ունակությունների և հմտությունների կիրառումը): Ինչպես տեսնում ենք, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ կամ ազգային եկամտի ցուցանիշը հաշվի առնված չէ, ինչով էլ պայմանավորված՝ Հայաստանն այս ինդեքսով 130 երկրների շարքում զբաղեցնում է 49-րդ տեղը [5]: Նշված հայտանիշների գծով Հայաստանի տվյալները բերված են *Աղյուսակ 1*-ում: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդկային կապիտալի զարգացման բարձր ցուցանիշը խորհրդային տարիներին կրթության վրա կատարված ներդրումների ու ձեռքբերումների արդյունք է (3-րդ տեղում), այն դեպքում, երբ բարձրորակ աշխատուժի պահպանման համար ներկայումս ձեռնարկվող քայլերի տեսանկյունից երկրի դիրքերը հուսադրող չեն (114-րդ տեղում): Նման պայմաններում ակնհայտ է, որ մոտ ապագայում Հայաստանը կարող է կորցնել բարձրորակ աշխատուժի առավելությունը, որի վերականգնման համար անհրաժեշտ կլինի ոչ մեկ տասնամյակ: Միաժամանակ, ռազմարդյունաբերության զարգացումը կարող է բարձրորակ աշխատուժի վերարտադրության լրացուցիչ խթան դառնալ՝ ձևավորելով համապատասխան պահանջարկ: Այդ ուղղությամբ արմատական քայլերի հապաղումն անշրջելի բացասական հետևանքներ կունենա ոչ միայն ոլորտի զարգացման հնարավորությունների կորստի, այլ նաև մարդկային կապիտալի դեգրադացման տեսանկյունից: Նկատենք նաև, որ մեր երկրում աշխատավարձի ցածր մակարդակի առավելությունների մասին տեսակետները ռազմարդյունաբերության պարագայում այլ նշանակություն են

ստանում, քանի որ ՌԱՀ-ում աշխատելու համար պահանջվում են բարձր որակավորում և մասնագիտական ունակություններ, բայց եթե դա զուգակցվի ցածր աշխատավարձով և սոցիալական ապահովության ցածր մակարդակով (օրինակ, ՏՏ և բանկային ոլորտի համեմատ), կնվազի աշխատանքի հեղինակությունը, ինչի արդյունքում կկրճատվեն ոլորտում գիտաշխատողների թիվը և որակական կազմը՝ արգելակելով զարգացումը: Ուստի, անհրաժեշտ են սկզբունքային փոփոխություններ «Էժան աշխատուժը երկրի առավելությունն է» մոտեցումներում:

Աղյուսակ 1

Հայաստանի ցուցանիշները Մարդկային կապիտալի զարգացման ինդեքսում

Հայտանիշը	Ցուցանիշ	Դիրքը 130 երկրների շարքում
Կարողություններ (capacity)	83.3	3
Որակավորում (deployment)	54.1	114
Զարգացում (development)	65.4	61
Նոու-հաու (know-how)	55.0	47
Մարդկային կապիտալի ինդեքս Human Capital Index	64.46	49
<i>Աղբյուրը՝ The Global Human Capital Report 2017</i>		

Արտադրության այլ գործոններ: Սա բավական ընդգրկուն հասկացություն է, որը ներառում է բնական ռեսուրսների առկայությունը, ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը, ֆոնդազինվածությունը, ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների վիճակը, հարակից և սպասարկող արտադրությունների առկայությունը: ՀՀ ռազմարդյունաբերության ոլորտի արտադրական հզորությունների վերաբերյալ թերևս միակ հասանելի տեղեկատվությունից ցիտենք որոշ հատվածներ. «...ռազմարդյունաբերական ձեռնարկությունների արտադրական և գիտատեխնիկական ներուժի օգտագործումը տարեկան կտրվածքով կազմում է միջինը 50-60%: Ձեռնարկությունների գրեթե 90%-ը կատարում է միայն ռազմական պատվեր... Վերջին 25 տարիների ընթացքում ներդրումներ չեն կատարվել և չեն թարմացվել արտադրության միջոցները... Պետական բաժնեմատով ձեռնարկությունների գործունեությունը հիմնված է միայն պետական պատվերների ֆինանսական միջոցների վրա և բացակայում են այլ ֆինան-

սական հոսքերը, արդյունավետ չի գործում կառավարման վարչական ապարատը, ցածր է շահութաբերությունը... Մարքավորումները գրեթե ամբողջությամբ ֆիզիկապես և բարոյապես մաշվել ու արգելակում են գիտատեխնիկական առաջընթացը... Միննույն ժամանակ, այն բավարար է ԽՄԿԿ ժամանակների արտադրության սպառազինության և ռազմական տեխնիկայի նորոգման աշխատանքների կատարման համար: Ձեռնարկությունների միջև բացակայում է համագործակցությունը, որը բերում է աշխատանքների որոշ մասերի կրկնության..., չի գործում արտադրական կոռպորացիան... Ներքին շուկայում հումքի, նյութերի և կոմպլեկտավորող մասերի սեփական արտադրանքը բացակայում է, ուստի ՌԱՀ ինքնուրույն զարգացումը կախվածության մեջ է արտերկրի մատակարարներից» [6]: Եթե այս բնորոշմանը հավելենք նաև, որ ոլորտն, ըստ էության, ռեսուրսատար է (չնայած իր բարձրտեխնոլոգիական բնույթին), նյութատար ու էներգատար, ապա «արտադրության այլ գործոնների» մասով ոլորտի ներուժի գնահատականը լավատեսական չէ: Այնուամենայնիվ, ներկայացնենք այս գործոնի առանձին բաղադրիչների գծով երկրում առկա ներուժային այն հնարավորությունները, որոնք կարող են արդյունավետ կիրառում գտնել ռազմարդյունաբերության զարգացման պարագայում:

Բնական ռեսուրսներ: Հայաստանն, ինչպես գիտենք, հարուստ է պղնձի, մոլիբդենի, ոսկու, արծաթի, կապարի, ցինկի, վոլֆրամի, բիսմութի և հարակից այլ մետաղների, ինչպես նաև ոսկի բազմամետաղային, կապար-ցինկային հեռանկարային հանքավայրերով: Այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են պղինձը, մոլիբդենը, կապարը, ցինկը և դրանց հարակից տարրերը՝ ռենիումը, սելենը, գալիումը, գերմանիումը, տանտալը, կադմիումը, մագնեզիումը, ինդիումը, տիտանը, ցիրկոնիումը, կարող են բավարարել Հայաստանի նման մի քանի տասնյակ երկրների պահանջները: Խնդիրն այն է, որ բացակայում են այս ռեսուրսների հիմքով պատրաստի արտադրատեսակների արտադրությունները, չեն կորզվում հանքաքարում պարունակվող հազվագյուտ տարրերը, որոնք համաշխարհային շուկայում հաճախ ավելի մեծ պահանջարկ ունեն և ավելի թանկ արժեն, քան գունավոր մետաղները: Մինչդեռ Հայաստանում արտադրվող գունավոր մետաղները բավական լավ հումք են ռազմարդյունաբերության, այն սպասարկող և հարակից արտադրությունների համար: Ինչ վերաբերում է ռազմարդյունաբերությունում լայն կիրառություն ունեցող այլումինին, ապա, թեև երկրում այլումինի պաշարներ չկան, այնուամենայնիվ, ներմուծված հումքով արտադրվում և արտահանվում է («Ռուսալ-Արմենալ» ընկերությունը) զգա-

լի ծավալներով այլումինե արտադրանք՝ փայլաթիթեղ, և ըստ անհրաժեշտության, կարելի է հաջողությամբ նախաձեռնել նաև այլ տեսականու արտադրություն [7]:

Ժամանակակից սպառազինությունների արտադրությունում լայն կիրառություն ունեն հազվագյուտ մետաղական տարրերը [8]՝ ռենիումը (հրակայուն համաձուլվածքներում և ծածկույթներում), տիտանը (անփոխարինելի են ինքնաթիռաշինության, հրթիռաշինության և նավաշինության մեջ), սելենը (օպտիկական և ազդանշանային սարքերում), կադմիումը (միջուկային ռեակտորներում), մագնեզիումը (ինքնաթիռաշինությունում, որպես ամենաթեթև կառուցանյութ) և այլն: Հաշվի առնելով, որ Հայաստանում բավական ինտենսիվ սկսել է քննարկվել լեռնամետալուրգիական թափոնների (որոնք պարունակում են զգալի չափով հազվագյուտ տարրեր) ներուժի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը, ապա դրանք վերամշակող տեխնոլոգիաների ներդրման պարագայում կարելի է միաժամանակ մի քանի հարց լուծել (բնապահպանական, տնտեսության խթանման և արտադրողականության աճի): Օրինակ, «Մաքուր երկաթ» ընկերության կողմից արտադրվում է ամոնիումի պերոքսիդ, որը հումք է հանդիսանում մետաղական ռենիումի ստացման համար [9]: Բացի այդ, հատուկ տեխնոլոգիայով ստացվող նանոամորֆ մետաղների հիման վրա «*Nanoamorph technology*» ընկերությունը մշակել է տարբեր կոմպոզիտային նյութեր, որոնց ամրությունը մոտ 10 անգամ գերազանցում է հիմնային մետաղների ամրությունը [10]: Դրանք կարող են արդյունավետ կիրառում գտնել ռազմարդյունաբերական նոր տեխնոլոգիական տեսականու արտադրությունում: Ռազմարդյունաբերության հարակից ու սպասարկող ոլորտների (ՏՏ, էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային) աշխուժացումը նույնպես կարող է մեծ պահանջարկ ստեղծել հազվագյուտ մետաղների նկատմամբ և բարձրացնել դրանց կորզման աստիճանը՝ նկատելիորեն մեծացնելով լեռնամետալուրգիական ոլորտում ավելացված արժեքի ստեղծման հնարավորությունները: Կարելի է նաև նախաձեռնել արտաքին շուկայում մեծ պահանջարկ ունեցող թռչող ապարատների և սարքերի բաղկացուցիչների արտադրություն և միջազգային արտադրական արժեզրթաններում մասնակցության հայտ ներկայացնել (մասնագիտանալով Կրաուզեի աղյուսակի չորրորդ աստիճանում):

Ֆինանսական ռեսուրսներ: Ֆինանսական միջոցների ներգրավման խնդիրը բավական սուր է դրված՝ պայմանավորված թողարկվող արտադրանքի սպառման շուկայի մենաշնորհացման բարձր աստիճանով (ՌԱՀ

ձեռնարկությունների 90%-ն աշխատում է միայն պետական պատվերի համար), երբ որպես ոլորտի միակ ֆինանսավորող, փաստորեն, հանդես է գալիս պետությունը: Մասնավոր ներդրումների համար բացակայում են լրացուցիչ խթանները, քանի որ ներքին շուկան փոքր է, իսկ արտաքին շուկա դուրս գալը՝ դժվար: Խնդիրն ավելի մեղմ է երկակի նշանակության արտադրությունների պարագայում, քանի որ թողարկվող արտադրանքը կարելի է իրացնել նաև պետական պատվերի շրջանակներից դուրս՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Ինչ վերաբերում է միջազգային ներդրումների ներգրավմանը, ապա վիճելի է դրանց նպատակահարմարության հարցը: Հայաստանում գերակշռող ռուսական կապիտալի ներկայությունը նաև ռազմարդյունաբերության ոլորտում, ըստ էության, չի լուծի սպառազինության ներկրման աղբյուրների դիվերսիֆիկացման խնդիրը և նկատելիորեն կսահմանափակի այլ հեռանկարային նախագծերի իրականացման հնարավորությունները, ինչպես տեղի է ունենում ռուսական կապիտալով այլ ոլորտների պարագայում (գազատրանսպորտային և հեռահաղորդակցության ոլորտում ռուսական մենաշնորհի): Սակայն, եթե երկրնտրանքը Ռուսաստանից զենք ներկրելու և ռուսական կապիտալով զենք արտադրելու միջև է, ապա միանշանակ, նախընտրելի է երկրորդ տարբերակը:

Մյուս կողմից, ռազմարդյունաբերության ոլորտում նորարարական արտադրությունների նախաձեռնության նախագծերը պահանջում են երկարաժամկետ ներդրումներ, մեծ կապիտալատարություն, ենթադրում են վենչուրային հսկայական բաղադրիչ, լավագույն դեպքում՝ ներդրված միջոցների հետգնման երկար ժամանակահատվածով: Արդյունքում՝ ձեռնարկությունների շահութաբերությունը հաճախ գտնվում է բավական ցածր մակարդակում: Օրինակ, այնպիսի խոշոր ռազմարդյունաբերական երկրում, ինչպիսին Ռուսաստանն է, ՌԱՀ ձեռնարկությունների 45%-ն աշխատում է գրոյական շահութաբերությամբ, և միայն ձեռնարկությունների 8%-ի պարագայում է, որ շահութաբերությունը գտնվում է 13-14%-ի շրջանակներում [11, c. 49]: Իհարկե, Հայաստանում ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների շահութաբերության որոշման մոտեցումներն էապես տարբերվում են Ռուսաստանում ընդունված մոտեցումներից, քանի որ ռուսական ընկերություններն առաջնորդվում են առավելապես շուկայական գնագոյացման օրինաչափություններով, մինչդեռ Հայաստանում, նման գնագոյացումը մեկ սպառողի շուկայի պայմաններում, պարզապես չի կարող տեղի ունենալ: Սակայն ֆինանսական կապիտալը միտում ունի հոսելու այն ոլորտներ, որոնք նորարարական են և հեռանկարային, ուստի,

համապատասխան հիմնավորումների, ոլորտի զարգացման նախապայմանների, մասնավոր ձեռներեցության խրախուսման ու արտոնությունների տրամադրման պարագայում ներդրումներն ինքնաբերաբար կհոսեն այդ ոլորտ: Ոլորտի զարգացման ներկա փուլում հիմնավոր բիզնես-նախագծերի ֆինանսավորման համար կարելի է օգտագործել նաև համազգային ֆինանսավորման (քրաուդֆանդինգի «հայկական տարատեսակը») մեթոդը՝ ֆինանսական միջոցներ ներգրավելով սփյուռքից: 2016-ի ապրիլյան դեպքերից հետո ակնհայտ դարձավ համայն հայության պատրաստակամությունն աջակցելու ռազմարդյունաբերության զարգացմանը:

Առկա արտադրական հզորությունները և տեխնոլոգիաները, ինչպես արդեն նշեցինք, բնորոշվում են ֆիզիկական և բարոյական զգալի մաշվածությամբ: Ըստ վերլուծաբանների՝ Հայաստանում «արդեն 12 տարուց ավելի է՝ չի ձեռնարկվել արտադրական կարողությունների հաշվառում», բացի այդ՝ «սեփականաշնորհված ձեռնարկությունների տերերին ոչ ոք չի կարող պարտադրել ներկայացնել պետական մարմիններին, օրինակ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, իրենց ունեցվածքի, հիմնական և շրջանառու միջոցների, այլ հողվածների վերաբերյալ հաշվետվություններ» [12]: Ներկայում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակում է տվյալներ՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների արդյունաբերա-արտադրական հիմնական միջոցների փոփոխության վերաբերյալ [13]: Համեմատության համար նշենք, որ արտադրության հիմնական միջոցների մաշվածության աստիճանը ՌԴ պաշտոնական տվյալներով ավելի քան 48% է, որոշ ոլորտներում՝ նույնիսկ 55% [14], իսկ ոչ պաշտոնական աղբյուրներն այդ ցուցանիշը գնահատում են 60-65% [15]: Ակնհայտորեն, Հայաստանում այդ ցուցանիշը զգալիորեն ավելի բարձր կլինի:

Կարևորելով ռազմարդյունաբերության նորարարական զարգացման հնարավորությունները՝ հատկանշական ենք համարում այն, որ գլոբալ նորարարությունների ինդեքսով 2017թ. Հայաստանը 127 երկրների շարքում զբաղեցրել է 59-րդ տեղը, ինչը տվյալ եկամտային խմբում (միջինից ցածր) 5-րդ ցուցանիշն է, իսկ տարածաշրջանում (Հս. Աֆրիկա և Արմտ. Ասիա)՝ 8-րդ ցուցանիշը: Թեև նորարարությունների համար անհրաժեշտ ռեսուրսների ու պայմանների (ինստիտուտներ, մարդկային կապիտալ և հետազոտություններ, ենթակառուցվածքներ, ներքին շուկայի զարգացվածություն) գծով Հայաստանի ցուցանիշներն այնքան էլ բարձր չեն (82-րդ դիրքում), այնուամենայնիվ, նորարարությունների գործնական արդյունքի մակարդակով բավական լավ դիրքում է (47-րդ), իսկ նորարարությունների

արդյունավետության գործակցով (0.8) 17-րդ տեղում է աշխարհում [16]: Նման գնահատականը միանշանակ վկայում է ՀՀ տնտեսությունում, այդ թվում նաև ռազմարդյունաբերությունում նորարարական արտադրանքի թողարկման մեծ ներուժի վերաբերյալ:

Հարակից և սպասարկող արտադրությունների առկայությունը ցանկացած ոլորտի արդյունավետ գործունեության և մրցունակության կարևորագույն գործոններից է՝ բնորոշելով դրա կլաստերացման հնարավորությունները, որը կարող է ապահովել ոլորտում և հարակից ճյուղերում արտադրողականության սիներգետիկ աճ: Մեր գնահատմամբ, Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացման ներուժը որոշ չափով պայմանավորված է բարձրտեխնոլոգիական այնպիսի արտադրությունների (SS արտադրության, քիմիական, ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական արդյունաբերության) գործարկման հնարավորություններով: Ներկայացնենք նորարարական և բարձրտեխնոլոգիական մի շարք ուղղություններ, որոնց զարգացումը կարող է պայմանավորել ռազմարդյունաբերության զարգացումը. տարբեր տեսակի միակցիչների արտադրություն, գերբարձր հաճախականային սարքերի (ֆիլտրեր, գումարիչներ, բաժանիչներ, կամրջակներ, ճյուղավորիչներ, պտտական անցումներ) նախագծում և արտադրություն, ռադիոտեխնիկական և անտենային համակարգերի, լազերային տեխնիկայի և կապի միջոցների, չափիչ սարքերի, կատարող հանգույցների, կոմպոզիտային նյութերի, քիմիական միացությունների, հատուկ նշանակության ապակու, փոքր հեռավորության հրթիռների, անօդաչու թռչող սարքերի արտադրություն, ռորոտաշինություն, բյուրեղների աճեցում և այլն [17]: Իսկ SS ոլորտը ռազմարդյունաբերությունը կարող է ապահովել ավտոմատացված կառավարման համակարգերով, քարտեզագրման և օբյեկտների ճանաչման տեխնիկական միջոցներով, երաշխավորել տեղեկատվական անվտանգությունը: Սակայն ռազմարդյունաբերական ու հարակից ոլորտների ձեռնարկությունների միջև համագործակցության աստիճանը շատ ցածր է: Բացակայում են արտադրական շղթաները, լավագույն դեպքում հայկական ձեռնարկությունները մասնակցում են արտասահմանյան (հիմնականում ռուսական) ընկերությունների արտադրական շղթաներին, ինչը խոչընդոտում է ոլորտների փոխկապակցված զարգացման սիներգետիկ էֆեկտի դրսևորմանը:

Ենթակառուցվածքները: Ռազմարդյունաբերությունը պահանջում է զարգացած տրանսպորտային, էներգետիկ և հեռահաղորդակցական ենթա-

կառուցվածքներ: 2015թ. դրությամբ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերի 22,7%-ն ուղղվել է էներգետիկ ենթակառուցվածքներ, 20,2%-ը՝ հեռահաղորդակցության, իսկ 8%-ը՝ տրանսպորտային ոլորտ, ընդ որում՝ ՕՈՆ-երը կազմել են համապատասխանաբար՝ ընդհանուրի 32,7%-ը, 21.9%-ը և 8%-ը [18]: Ակտիվ աշխատանքներ են տարվում նաև երկրի Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի ուղղությամբ, որը ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի կողմից [19]: Այնուամենայնիվ, Հայաստանը տրանսպորտային ենթակառուցվածքների հետ կապված հայտնի խնդիրներ ունի՝ պայմանավորված Ադրբեջանի և Թուրքիայի կողմից արդեն ավելի քան քառորդ դար տևող շրջափակմամբ, որը Համաշխարհային բանկի դեռ 2003թ. գնահատումներով՝ տարեկան կազմում է \$720 մլն [20]: Շրջափակման բացասական հետևանքների մեղմելուն ուղղված նախաձեռնություն կարելի է համարել Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման նախագիծը, ինչպես նաև Չինաստանի հետ «Մեկ գոտի՝ մեկ ուղի» խոշոր նախագծի շրջանակներում համագործակցության ուղիների որոնումը:

Պահանջարկ (ներքին և արտաքին): Հայաստանի ազգային վիճակագրությունը և պետական այլ իրավասու մարմինները չեն հրապարակում տեղեկատվություն ներկրվող ՄՌՏ ցուցանիշների վերաբերյալ, հետևաբար դժվար է լիարժեք պատկերացում կազմել դրանց ներքին պահանջարկի վերաբերյալ: Թեև ոչ պաշտոնական աղբյուրների հրապարակած տեղեկությունների հիման վրա կարող ենք որոշ եզրակացություններ կատարել, այնուամենայնիվ, դրանք նույնպես բավական քիչ են ներքին պահանջարկն ուսումնասիրելու համար: *Աղյուսակ 2*-ում ներկայացված է երկրների կործանարար ուժի համաթիվը, որը ներառում է տեղեկություններ ռազմական հզորությունը պայմանավորող ութ խումբ գործոնների վերաբերյալ (մարդկային կամ կենդանի ուժ, օդային ուժ, բանակային սպառազինություն, ծովային ուժ, ֆինանսական ռեսուրսներ, լոգիստիկ ռեսուրսներ, բնական ռեսուրսներ և աշխարհագրական բնորոշիչներ): Համեմատության համար ներկայացրել ենք նաև նույն հետազոտության Ադրբեջանի մասին հրապարակած տվյալները, քանի որ ՄՌՏ պահանջարկը պայմանավորել ենք ադրբեջանական զինուժին համարժեքության ապահովմամբ: Թեև այս մոտեցումը կարող է ռազմավարական խնդիրների լուծման առումով մակերեսային թվալ, մեր հետազոտության շրջանակներում, հասանելի տվյալների սղության պայմաններում, ներքին պահանջարկի գնահատման,

թերևս, միակ հնարավոր մոտեցումն է: Ուստի, գոյություն ունեցող ցուցանիշներից ընտրել ենք միայն այն տեղեկությունները, որոնք, ըստ մեզ, կարող են բնորոշել ռազմարդյունաբերական արտադրանքի նկատմամբ ներքին պահանջարկն այդ մոտեցմանը համապատասխան¹:

Աղյուսակ 2

Հայաստանի և Ադրբեջանի ռազմական հզորությունն ըստ ոչ պաշտոնական՝ Երկրների կործանարար ուժի համաթվի (Global Firepower Index)

Խումբը	Տեսակը	Քանակը		Համարժեքը՝ ցվիտոցման դոմեկից
		ՀՀ	ԱՀ	
Օդային ուժ	հարձակողական ինքնաթիռ	11	29	1.77
	տրանսպորտային ինքնաթիռ	18	64	2.38
	ուսումնամարզական ինքնաթիռ	12	19	1.06
	ուղղաթիռներ	42	93	1.48
	որից՝ ռազմական նշանակության	15	17	0.76
Բանակային սպառազինություն	մարտական տանկեր	229	520	1.52
	զրահապատ մարտական մեքենաներ	636	1590	1.67
	ինքնագնաց հրետանի	38	119	2.09
	քարշակային հրետանի	150	240	1.07
	հրթիռային պրոեկտորներ	150	191	0.85
Ռազմական ծառայության մեջ գտնվող բնակչության թիվը		44800	67000	
Աղբյուրը՝ https://www.globalfirepower.com/ կայք				

Ըստ այդմ՝ մեր կողմից մշակվել է համարժեքության գործակից՝ մեկ միավոր կենդանի ուժին բաժին ընկնող սպառազինությունների ցուցանիշների համեմատության սկզբունքով: Համարժեքության գործակիցները թույլ

¹ Օրինակ, Ադրբեջանը տիրապետում է նաև ծովային ռազմուժի, որի համարժեքը Հայաստանը չունի, բայց որի պահանջարկը նույնպես բացակայում է, ուստի դրա վերաբերյալ տվյալներն աղյուսակում ներկայացված չեն:

են տալիս եզրակացնել, որ թեև որոշ սպառազինությունների գծով Հայաստանն ապահովել է համարժեքության բավարար մակարդակ, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ընդհանուր առմամբ, ռազմական համարժեքության ապահովման խնդիրը շարունակում է հրատապ մնալ: Բացի այդ, ռազմարդյունաբերական արտադրանքի ներքին պահանջարկը չի սահմանափակվում թվարկվածներով, հաշվի չեն առնված թեթև հրազենային զինատեսակների, զինամթերքի, կրակի կառավարման և ռադիոտեղորոշումային հայտնաբերման սարքավորումների, նշանառու հարմարանքների, հետախուզության ապահովման միջոցների, «խելացի» ռազմական արտադրանքի անհրաժեշտությունը և պահանջարկը:

Անշուշտ, սպառազինությունների համաշխարհային շուկա մուտք գործելը բավական դժվար է, սակայն գնային ու որակական առավելության դեպքում Հայաստանը ներուժային հնարավորություն ունի ռազմական արտադրանք արտահանել Պարսից ծոցի երկրներ: Այդ երկրներն «ավանդական» ամերիկյան սպառազինությունների իրացման շուկաներն են, այն դեպքում, երբ Հնդկաստանը, Վիետնամը և Չինաստանը Ռուսաստանի «ավանդական» շուկաներն են: Հայաստանը կարող է օգտագործել ԵՏՄ անդամակցության առավելությունները՝ ինտեգրվելու ռուսաստանյան արդյունաբերական շղթաներին և Պարսից ծոցի երկրներ ռուսական ռազմական արտադրանքի արտահանման հնարավորությունները զարգացնելու համար: Նման մեխանիզմներով համագործակցության հեռանկարներ կարելի է ուրվագծել նաև Չինաստանի հետ «Մեկ գոտի՝ մեկ ուղի» նախագծի շրջանակներում ռազմատեխնիկական փոխգործակցությունը խորացնելու պարագայում: Նոր նախագծեր են նախատեսվում նաև ԵՄ-ի հետ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին ընդառաջ, մասնավորապես՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը նախաձեռնել է նախագծի մշակում, որի նպատակն է գնահատել «Մեկ գոտի՝ մեկ ուղի» նախաձեռնության համատեքստում Իրանի տարածքով անցնող Չինաստան-Եվրոպա նոր այլընտրանքային երկաթուղու գործարկման հնարավորությունը՝ Չինաստան-Իրան ծովային տարանցիկ ուղին «Պարսից ծոց-Սև ծով» մուլտիմոդալ տրանսպորտային միջանցքին ինտեգրելու միջոցով [21]:

Ամփոփելով ՀՀ ռազմարդյունաբերության ներուժի գնահատումը՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած ոլորտի զարգացումը պահանջելու է զգալի ֆինանսական միջոցներ՝ արտադրական ենթակառուցվածքներն արդիականացնելու և վերազինելու, ԳՀՓԿԱ-ներն արդյունավետ կազմա-

կերպելու համար, պետական համարժեք քաղաքականություն (հարկային արտոնությունների տրամադրում և բիզնես նախաձեռնությունների գործընթացի դյուրինացում) ռազմարդյունաբերության և հարակից ճյուղերի աշխուժացման նպատակով, իրական փոփոխություններ գիտակրթական ոլորտում, այնուամենայնիվ, երկիրն ունի զգալի ներուժ ռազմարդյունաբերության զարգացման համար: Վերջինս փոխկապված է արտադրական այլ ոլորտների զարգացման հեռանկարների հետ, և ներկա պահին ներկայանում է որպես Հայաստանի ընդհանուր տնտեսական համակարգի զարգացման նախապայման ու ակնկալվող լավագույն նվաճում՝ միաժամանակ:

Վերադառնալով Կրաուզեի աստիճանակարգին՝ նկատենք, որ Հայաստանի համար մասնագիտացման կարևորագույն ուղղության պետք է վերածվի հենց ամենավերջին մակարդակում ներկայացված, ամենաբարդ՝ «լրիվ անկախ ԳՀՓԿԱ և սպառազինությունների ինքնուրույն արտադրություն» ուղղությունը: Աստիճանական մասնագիտացման համար ժամանակը խիստ սահմանափակ է, քանի որ աշխարհաքաղաքական իրողություններին համարժեք՝ անհրաժեշտ են արագ ու բեկումնային փոփոխություններ: Միաժամանակ, ոլորտի գիտատար ուղղությունների զարգացումը չի բացառում լիցենզավորված արտադրության, սպառազինությունների առանձին բաղադրիչների արտադրության, ներմուծված բաղադրիչների տեղում հավաքման և օտարերկրյա ընկերությունների հետ կոոպերացման հնարավորությունները, հակառակը՝ կարող է դրանց համար նախապայման ստեղծել՝ նպաստելով բազմապրոֆիլ ռազմարդյունաբերության զարգացմանը:

Մարտ, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2015 թվականի մարտի 25-ին, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154>
2. Krause K., Arms and the State: Patterns of Military Production and Trade. Cambridge University Press, 1992, p. 171.
3. Brauer J., The Arms Industry in Developing Nations: History and Post-Cold War Assessment. *Arming the South*, pp. 101-127.
4. ՄԱԿ Զարգացման ծրագրի պաշտոնական կայք, <http://hdr.undp.org/en/composite/trends>.
5. The Global Human Capital Report 2017. World Economic Forum. ISBN 978-1-944835-10-1, p. 61.
6. Թովմասյան Ա., «Ռազմարդյունաբերական համալիրի ձևավորման և կառավարման առանձնահատկությունները տարածքային հակամարտություն ունե-

- ցող երկրներում (ՀՀ օրինակով)» թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2017թ., էջ 59-60:
7. «Ռուսալ» ընկերության պաշտոնական կայք, <https://rusal.ru/about/9/>.
 8. *Дегтерева Е.А.*, Редкоземельные металлы в производственных цыпочках военно-промышленного комплекса США. Вооружение и экономика №3 (19), 2012, стр. 85-91.
 9. «Մաքուր երկաթ» ընկերության կայք, <http://pureironplant.am/am/our-products/ammonium-perrenat>.
 10. «Նանոմորֆ տեքնոլոջի» ընկերության կայք, <http://www.nanoamorph.com/>
 11. *Мязитов И.Р.*, “Финансовые и кадровые ресурсы ОПК как институциональной структуры экономики России”, Российское предпринимательство, №12(234), июнь, 2013г., стр. 48-57.
 12. *Մանասերյան Թ.*, ՀՀ տնտեսական զարգացման առանձնահատկությունները և հեռանկարները, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 3, 2016, էջ 37-54:
 13. Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2017, էջ 274-276:
 14. Ռուսաստանի Դաշնության Պետական վիճակագրության դաշնային ծառայության պաշտոնական կայք, http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/enterprise/fund/#.
 15. *Чичкин А.*, Уровень износа основных фондов в России намного выше, чем в других странах БРИКС, Российская газета-экономика, №5519 (143), 2011г.
 16. Cornell University, INSEAD, and WIPO (2017): The Global Innovation Index 2017: Innovation feeding the world. 10th edition, Ithaca, Fontainebleau, and Geneva.
 17. *Մարկոսյան Մ.*, Էլույթ Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովում, http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/24/Mher_Markosyan.pdf.
 18. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-փետրվարին, էջ 93-94:
 19. ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պաշտոնական կայք, http://mtcit.am/main.php?lang=1&page_id=568#.
 20. ԱՄՆ Մենատի Արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահն արտահայտվել է հոգուտ հայ-ամերիկյան առևտրային հարաբերությունների նորմալացման, 2003թ., սեպտեմբեր, <http://panarmenian.net/arm/news/9245>.
 21. *Քոթանջյան Հ.*, Ջեկոյց ՀՀ ԱԺ-ում «Հայաստան-ԵՄ. Համապարփակ և ընդլայնված գործընկերություն» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ, <https://razmavaraget.wordpress.com/>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Գայանե Հարությունյան

Ամփոփագիր

Ռազմարդյունաբերությունը երկրի ռազմապաշտպանական ներուժի կարևոր բաղադրիչն է, իսկ դրա զարգացումը ոչ միայն երկրի պաշտպանունակության բարձրացման գրավականն է, այլ նաև տնտեսության զարգացման: Հոդվածում

փորձ է արվել ոլորտի վերաբերյալ առկա սահմանափակ տեղեկատվության հիման վրա գնահատել Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացման ներուժը՝ համեմատական առավելությունների ձևավորման տեսանկյունից: Այդ նպատակով գնահատվել են ռազմարդյունաբերության ոլորտում աշխատուժի, արտադրության այլ գործոնների և պահանջարկի առանձնահատկությունները: Առաջարկվել են ոլորտում մասնագիտացման առավել նպատակահարմար ուղղություններն ըստ Կրաուզեի աղյուսակի:

ПОТЕНЦИАЛ РАЗВИТИЯ ОБОРОННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ АРМЕНИИ

Գայե Արուտյան

Резюме

Оборонная промышленность является важной составляющей военно-оборонного потенциала страны, а ее развитие является гарантией не только обороноспособности страны, но и экономического развития. В статье предпринята попытка оценить потенциал развития оборонной промышленности Армении с точки зрения формирования сравнительных преимуществ на основе имеющейся ограниченной информации. С этой целью были оценены особенности рабочей силы и других факторов производства, а также спроса в оборонной промышленности. Были предложены наиболее целесообразные направления специализации в этой сфере с точки зрения таблицы Краузе.

THE DEVELOPMENT POTENTIAL OF THE DEFENSE INDUSTRY OF ARMENIA

Gayane Harutyunyan

Resume

The defense industry is an important component of the military-defense potential of the country, and its development is an imperative not only for the country's defense capability, but also for the economic development. Based on the available limited information, the article attempts to assess Armenia's development potential of the defense industry from the viewpoint of comparative advantages. For this purpose, the characteristics of the labor force and other factors of production, as well as the demand in the defense industry, were evaluated. The most worthwhile specialization directions are suggested in accordance with the Table of Krause.

ԱՌՐԲԵԶԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2017Թ.


Անուշավան Բարսեղյան*

Բանալի բառեր՝ ԱՀ ՀՆԱ, պետական բյուջե, SOFAZ բյուջե, արտաքին առևտրաշրջանառություն, գնաճ, բանկային ոլորտ:

ԱՀ 2017թ. համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)

Ադրբեջանի վիճակագրական պետական կոմիտեի տվյալների համաձայն, ԱՀ ՀՆԱ-ն 2017թ. կազմել է 70,1 մլրդ մանաթ (\$41,5 մլրդ), ինչը 0,1%-ով ավելի է 2016թ. ցուցանիշից, մեկ անձին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 7,2 հազար մանաթ (\$4,2 հազար)¹:

ԱՀ 2017թ. ՀՆԱ կառուցվածքը



2016թ. ընթացքում ՀՆԱ 3,1%-անոց անկման համեմատ 2017թ. ցուցանիշներն արտացոլում են դրական միտումներ, սակայն դա հիմնականում

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:
¹ <https://www.stat.gov.az/news/macroeconomy.php?>

պայմանավորված է նավթի գնաճով. *Brent* տեսակի նավթի միջին գինը 2017թ. կազմել է \$54, ինչը 23,4%-ով բարձր է 2016թ. ցուցանիշից (\$43,76)¹:

Հարկ է նշել, որ 2017թ. առաջին ինն ամիսների արդյունքում ԱՀ Վիճակագրության պետական կոմիտեն պաշտոնապես արձանագրել էր ՀՆԱ 0,6% անկում 2016թ. նույն ժամանակահատվածի համեմատ, և դժվար է պատկերացնել վերջին եռամսյակում այնպիսի տնտեսական աճ, որը կարող էր տարվա կտրվածքով բեկումնային նշանակություն ունենալ: Ադրբեջանի տնտեսական ուղղվածության առաջատար «ուղեղային կենտրոնի»՝ *CESD*-ի (Տնտեսական և սոցիալական ուսումնասիրությունների կենտրոն) փորձագետները կասկածի տակ են առնում անգամ վերոնշյալ 0,6%-անոց անկումը. նրանց հաշվարկներով՝ անկումը կազմել է 1%³: Ավելին, Ադրբեջանի 2017թ. առաջին կիսամյակի ՀՆԱ-ն, Ասիական բանկի փորձագետների հաշվարկներով, նվազել է 1,3%-ով:

ԱՀ 2017թ. ՀՆԱ 62,8%-ը արտադրվել է ոչ նավթային ոլորտում, 37,2%-ը՝ նավթայինում: 2016թ. համեմատ ոչ նավթային ոլորտի արտադրողականությունը բացարձակ արժեքով աճել է 2,7%-ով, այդ թվում 8,5%՝ տրանսպորտի և պահուստավորման, 6,6%՝ հասարակական սննդի, 4,2%՝ գյուղատնտեսության, անտառաբուծության և ձկնաբուծության, 2,5%՝ տրանսպորտային միջոցների վերանորոգման, 1,5%՝ սոցիալական և այլ ծառայությունների ոլորտներում⁴:

Նավթային ոլորտի արտադրողականությունը նույն ժամանակահատվածի համեմատ բացարձակ արժեքով նվազել է 5%-ով: Ադրբեջանը նավթի արդյունահանման օրական 0,85 մլն բարելից 0,83 մլն նվազումը⁵ պայմանավորում է նավթի արդյունահանման նվազեցման մասին Նավթ արտահանող երկրների միության (*OPEC*) անդամների և այդ կազմակերպության անդամ չհանդիսացող երկրների միջև 2016թ. նոյեմբերին ձեռք բերված համաձայնությամբ⁶՝ փորձելով շրջանցել ԱԶԳ նավթադաշտի ներքին ճնշման անկման հետևանքով առաջացած նավթարդյունահանման անխուսափելի անկման հանգամանքը (իր հերթին, դա պայմանավորված էր դեպի դաշտ հա-

¹ <https://www.eia.gov/todayinenergy/detail.php?id=34492>

² *CESD*-ը մշտապես բարձր դիրքեր է զբաղեցնում տարածաշրջանի ոչ պետական «ուղեղային կենտրոնների» գնահատման սանդղակներում՝ միաժամանակ ԱՀ կառավարության հետ իրականացնելով բազմաթիվ համատեղ ծրագրեր:

³ Azerbaijan Economy in the first nine months of 2017; Brief Overview. http://cesd.az/new/wp-content/uploads/2017/10/Azerbaijan_Economy_in_the_first_nine_months_2017.pdf

⁴ <https://www.stat.gov.az/news/index.php?id=3736>

⁵ <http://cesd.az/new/wp-content/uploads/2017/11/CESD-Research-2018-Budget-Projections.pdf>

⁶ <https://www.eia.gov/todayinenergy/detail.php?id=34492>

րակից գազի ոչ բավարար ծավալի հետմղումով):

Հարկ է նշել, որ 2017թ. առաջին ինն ամիսների նավթային և ոչ նավթային ՀՆԱ-ների պաշտոնական ցուցանիշները նույնպես *CESD* փորձագետները կասկածի տակ են առնում. մասնավորապես, ոչ նավթային ՀՆԱ 2,5% աճի փոխարեն ավելի հավաստի են համարում 2,2%-անոց աճը, իսկ նավթային ոլորտի 6,5%-անոց նվազման փոխարեն՝ 6,9% անկումը:

ԱՀ 2017թ. պետական բյուջեն

2016թ. դեկտեմբերի 16-ին ԱՀ նախագահ Ի.Ալիևի հաստատած «ԱՀ 2017թ. պետական բյուջեի մասին օրենքի»¹ համաձայն, այն պետք է ունենար 16,255 մլրդ մանաթ (\$9,2867 մլրդ) եկամտային և 16,9 մլրդ մանաթ (\$9,7 մլրդ) ծախսային մաս: Հաշվի առնելով 2016թ. բյուջեի կատարման հետ կապված դժվարությունները՝ ԱՀ իշխանությունները 2017թ. պետական բյուջեն կազմելիս զգուշավորություն էին հանդես բերել, հիմք ընդունելով նավթի համեմատաբար ցածր գին (1 բարել = \$40) և սահմանելով բյուջեի հնարավորինս փոքր պակասորդ՝ այդպիսով փորձելով նախապես նվազեցնել 2017թ. բյուջեի կատարման ռիսկերը: Սակայն 2017թ. ընթացքում միջազգային շուկայում նավթի գնի աճման միտումները և մանաթի համեմատաբար կայուն փոխարժեքը հիմք ընդունելով՝ ԱՀ իշխանությունները գնացին բյուջեի վերակազմավորման, ավելացնելով նախատեսվող եկամուտները և ծախսերը: 2017թ. հուլիսի 13-ին ԱՀ պետական բյուջեում կատարված փոփոխությունների արդյունքում եկամտային մասը կազմեց 16,766 մլրդ մանաթ (\$9,9 մլրդ), իսկ ծախսայինը՝ 17,941 մլրդ մանաթ (\$10,6 մլրդ), համապատասխանաբար աճելով 3,1% և 6,1%-ով²: Վերակազմավորված բյուջեի պակասորդն աճեց 495 մլն մանաթով՝ հասնելով 1,14 մլրդ մանաթի, որը ծածկվել է պետական պարտատոմսերից (384,6 մլն մանաթ) և սեփականաշնորհումից (106,5 մլն մանաթ) ստացած եկամուտների, ինչպես նաև պետական միասնական գանձարանի (650,3 մլն մանաթ) հաշվին³:

ԱՀ ֆինանսների նախարարության հրապարակած տվյալների համաձայն⁴, 2017թ. պետական բյուջեի եկամտային և ծախսային մասերը թերակատարվել են համապատասխանաբար 1,9% և 2%-ով:

¹ Закон АР «О государственном бюджете Азербайджанской Республики на 2017г.».

² О внесении изменений в Закон Азербайджанской Республики «О Государственном бюджете Азербайджанской Республики на 2017 год», <http://president.az/articles/24674>

³ <http://interfax.az/view/723175>

⁴ <http://www.maliyye.gov.az/>, <http://interfax.az/view/723175>

Եկամտային մասի թերակատարումը պայմանավորված է ԱՀ հարկերի նախարարության կողմից՝ նախատեսվածից 8,8% պակաս հարկեր հավաքելով, ինչի արդյունքում 2017թ. դեկտեմբերի 16-ին ԱՀ հարկերի նախարար Ֆազիլ Մամեդովը պաշտոնանկ արվեց: Միաժամանակ, ԱՀ Մաքսային պետական կոմիտեն 15,9%-ով գերակատարել է իր պարտավորությունները, ինչը հիմնականում պայմանավորված է արտահանվող նավթի գնաճով: Հարկահավաքության նախատեսվածից ցածր ցուցանիշները հիմնականում պայմանավորված են տնտեսության աճի տեմպերի (նախատեսված է եղել 1% աճ) և հարկային դաշտի ընդլայնման արդյունավետության սխալ կանխատեսումներով: Այստեղ շարունակում է խնդրահարույց մնալ Ադրբեջանի տնտեսության ստվերայնության բարձր մակարդակը: Միջազգային հեղինակավոր Արտոնագրված հաշվապահների միություն (*Association of Chartered Certified Accountants, ACCA*¹) կազմակերպության հաշվարկներով՝ ԱՀ ընդհանուր տնտեսության 66,12%-ը գտնվում է ստվերում²:

ԱՀ 2017թ. պետական բյուջեի ծախսային մասի 62,1%-ը կազմել են ընթացիկ, 29,3%-ը՝ կապիտալ ծախսերը, իսկ 8,6%-ը հատկացվել է արտաքին պարտքի սպասարկմանը:

Ադրբեջանի նավթային պետական հիմնադրամի (SOFAZ) 2017թ. բյուջեն

2017թ. հունվարին ԱՀ նախագահի կողմից հաստատվել էր SOFAZ-ի բյուջեն³, ըստ որի՝ նախատեսվում էր 8,4 մլրդ մանաթի (\$4,97 մլրդ) եկամուտ և 14.5 մլրդ մանաթի (\$8,58 մլրդ) ծախս, սակայն միջազգային շուկայում նավթի գնաճը հիմք հանդիսացավ փոփոխություններ մտցնելու համար նաև այստեղ (2017թ. հոկտեմբերին): Արդյունքում՝ եկամուտները սահմանվեցին 10,8 մլրդ մանաթ (\$6,4 մլրդ), իսկ ծախսերը՝ 15,2 մլրդ մանաթ (\$9 մլրդ)⁴: Եկամտային մասի 2,4 մլրդ մանաթի ավելացումը հնարավոր եղավ ապահովել հիմնականում նավթի վաճառքից ստացած 2,3 մլրդ մանաթի

¹ Կազմակերպությունը հիմնադրվել է 1904թ., կենտրոնակայանը գտնվում է Լոնդոնում, միավորում է ֆինանսների, հաշվապահության և աուդիտի ոլորտի մասնագետների:

² Association of Chartered Certified Accountants, Emerging from the shadows https://secure.accaglobal.com/content/dam/ACCA_Global/Technical/Future/pi-shadow-economy.pdf

³ SOFAZ 2017 budget approved (10.01.2017)

http://www.oilfund.az/en_US/hesabatlar-ve-statistika/buedce-melumatlari/azerbaycan-respublikasi-doevlet-neft-fondunun-2016-ci-il-buedcesi-tesdiq-edildi-2.asp

⁴ AZERBAIJAN ECONOMIC REFORMS REVIEW, October 2017

http://ereforms.org/store//media/ekspert_yazilari/islahat%20icmali/oktyabr/DNF_en.pdf

եկամուտների հաշվին: Հիմնադրամի եկամուտներն ապահովող մյուս կետերով ավելացումները չնչին են եղել. դրանք են արտերկրյա ներդրողների կողմից ածխաջրածիներին մշակման նպատակով վարձակալված տարածքների համար կատարված վճարումները, ԱՀ տարածքում նավթի, գազի տեղափոխումից և *SOFAZ*-ի ակտիվների կառավարումից ստացված եկամուտները և այլն: Ինչպես երևում է, կատարված փոփոխությունների արդյունքում ծախսերն ավելացել են ընդամենը 0.7 մլրդ մանաթով, ինչը հնարավորություն է տվել բյուջեի պակասորդը 6,1 մլրդ մանաթից նվազեցնել մինչև 4,4 մլրդ մանաթ¹, ինչը, սակայն, 2016թ. բյուջեի պակասորդից մեծ է 11 անգամ (2016թ. եղել է 0,4 մլրդ մանաթ²):

Հիմնադրամի բյուջեի ծախսերի գերակշիռ մասը դեպի ԱՀ պետական բյուջե և ԱՀ Կենտրոնական բանկ կատարված փոխանցումներն են, որոնք համապատասխանաբար կազմել են 6,1 մլրդ մանաթ (2016թ. եղել է 7,6 մլրդ մանաթ) և 7,5 մլրդ մանաթ: Դեպի պետական բյուջե արված հատկացումների 24,5% նվազումը կդիտվեր նավթային եկամուտներից պետական ծախսերի կախվածության թուլացման միտում, եթե չլիներ նման ահռելի փոխանցումը ԱՀ ԿԲ: Ի դեպ, սա առաջին դեպքն է, որ *SOFAZ*-ի բյուջեից հատկացումներ են արվել ԱՀ Կենտրոնական բանկին, ինչը բացատրվել է ԱՀ տնտեսության մակրոտնտեսական կայունության ապահովման անհրաժեշտությամբ: Հարկ է նշել, որ, *SOFAZ*-ի բյուջեից 7.5 մլրդ մանաթի հատկացման պայմաններում ԱՀ ԿԲ արտարժույթային պահուստները 2017թ. ընթացքում աճել են ընդամենը \$1,3 մլրդ-ով կամ 34,22%-ով, \$3,9 մլրդ-ից հասնելով \$5,3 մլրդ-ի (\$3,1 մլրդ)³:

SOFAZ-ի բյուջեից նման խոշոր հատկացումները և այսպիսի մեծության պակասորդը հակասում են հիմնադրամի հիմնական առաքելությանը, այն է՝ նավթի արդյունահանումից ստացված եկամուտները սերունդների համար պահպանելը:

Մյուս, համեմատաբար խոշոր, հատկացումներն են. Հարավային գազային միջանցքի նախագծում ԱՀ բաժնեմասի ֆինանսավորում՝ 496,2 մլն մանաթ (\$293,8 մլն), (2016թ. եղել է 797 մլն մանաթ) և Բարու-Թբիլիսի-Կարս

¹ Այս և հետագա համեմատություններն արվել են՝ հիմք ընդունելով *SOFAZ*-ի 2016թ. բյուջեի կատարողականի մասին պաշտոնական տվյալները: http://www.oilfund.az/en_US/huequqi-senedler/fondun-buedcesine-dair/azerbaycan-respublikasi-doevlet-neft-fondunun-2015-ci-il-buedcesinin-icrasi-haqqinda-azerbaycan-respublikasi-prezidentinin-serencami.asp

² http://www.oilfund.az/en_US/huequqi-senedler/fondun-buedcesine-dair/azerbaycan-respublikasi-doevlet-neft-fondunun-2015-ci-il-buedcesinin-icrasi-haqqinda-azerbaycan-respublikasi-prezidentinin-serencami.asp

³ <http://abc.az/ru/news/5695>

երկաթգծի նախագծի ֆինանսավորում՝ 165,8 մլն մանաթ (\$98,2 մլն, 2016թ.՝ 66 մլն մանաթ):

Ուշագրավ է նաև 2017թ. հոկտեմբերին հիմնադրամի բյուջեում կատարված այն փոփոխությունը, որով 744 մլն մանաթ (\$440,5 մլն) ուղղվում է Թուրքիայում STAR նավթավերամշակման գործարանի կառուցման ԱՀ բաժնեմասի ֆինանսավորմանը, ինչն անցած տարվա նույն ցուցանիշից ավելի է 412 մլն մանաթով: Հայտնի է, որ թուրքական STAR ապրանքանիշը, այդ թվում Թուրքիայում գործող համանուն հողիինգը, կապվում է Ռ.Էրդողանի տղայի անվան հետ:

2017թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ SOFAZ-ի ակտիվները կազմել են \$36 մլրդ՝ նույն թվականի հունվարի դրությամբ աճելով 8,67%-ով¹:

Արտաքին առևտրաշրջանառություն

ԱՀ Մաքսային պետական կոմիտեի պաշտոնական տեղեկատվության համաձայն, ԱՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2017թ. կազմել է \$22.6 մլրդ, այդ թվում արտահանումը՝ \$13,8 մլրդ, ներմուծումը՝ \$8,8 մլրդ²: Այն նախորդ տարվա համեմատ ընթացիկ գներով աճել է 27,8%-ով, ընդ որում, արտահանումը՝ 51,1%-ով, ներմուծումը՝ 2,9%-ով: Արտաքին առևտրաշրջանառության իրական դինամիկան լավագույնս արտացոլվում է համադրելի գներով իրավիճակը ներկայացնելու պարագայում: ԱՀ Վիճակագրության պետական կոմիտեի պաշտոնական տեղեկատվության հիման վրա կազմվել է 2017թ. հունվար-նոյեմբեր ամիսների (ավելի թարմ տեղեկատվությունը դեռևս բացակայում է) արտաքին առևտրաշրջանառության համեմատական պատկերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընթացիկ և համադրելի գներով (տե՛ս *Աղյուսակ 1*)³:

Աղյուսակ 1

	Դինամիկան գործող գներով	Դինամիկան համադրելի գներով
Արտաքին առևտրաշրջանառություն	+11,6%	-10,9%
Արտահանում	+11,8%	-6,5%
Ներմուծում	+0,9%	-7,6%

¹ http://www.oilfund.az/az_AZ/hesabat-arxivi/rublukh/2017_1/2017_1_3/

² http://customs.gov.az/modules/pdf/pdffolder/56/FILE_AA28EF-712081-B355C1-37724A-E40246-2FAAF8.pdf

³ <https://www.stat.gov.az/news/macroeconomy.php?page=1>

Արտահանման կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է դրանում նավթագազային ոլորտի լիակատար գերակայության մասին, մասնավորապես՝ նշված ոլորտին բաժին է ընկնում ընդհանուր արտահանման 88,62%-ը (այդ թվում, 77,52%՝ նավթ, 8,64%՝ գազ, 2,46%՝ նավթամթերք): Համեմատության համար նշենք, որ հաջորդ առավել մեծ մասնաբաժին ունեցող ոլորտը կազմում է 3,64% (բանջարեղենի և մրգերի արտահանում):

Ադրբեջանի ներմուծումների մեջ առաջնային տեղ են զբաղեցնում մեքենաները, էլեկտրական սարքավորումները և դրանց պահեստամասերը (21,26%), սննդամթերքը (15,99%), տրանսպորտային միջոցներն ու պահեստամասերը (12,8%) և այլն:

Արտաքին առևտուրն ըստ երկրների. Ադրբեջանից իրականացվող արտահանումների մեծ մասը բաժին է ընկնում Իտալիային (31,9%), Թուրքիային (9,89%), Իսրայելին (4,63%), Ռուսաստանին (4,25%), Չեխիային (4,03%), Կանադային (3,87%) և Վրաստանին (3,41%): Ներմուծումները հիմնականում իրականացվում են Ռուսաստանից (17,7%), Թուրքիայից (14,5%), Չինաստանից (9,73%), ԱՄՆ-ից (8,21%), Ուկրաինայից (5,24%) և Գերմանիայից (5,05%):

Ուշագրավ է այն փաստը, որ Ադրբեջան-Իրան ապրանքաշրջանառությունը կազմել է ընդամենը \$257 մլն, որից արտահանումը՝ \$16,8 մլն (ԱՀ արտահանման 0,12%-ը), ներմուծումը՝ \$240,2 մլն (ներմուծումների 2,74%-ը): Առևտրաշրջանառության այսպիսի ծավալները կասկածի տակ են դնում Իրան-Ադրբեջան երկաթգծի տնտեսական նպատակահարմարության վերաբերյալ պաշտոնական Բաքվի հիմնավորումները:

Գնաճ

ԱՀ Վիճակագրության պետական կոմիտեի տվյալների համաձայն, սպառողական ապրանքների և ծառայությունների գները 2017թ. աճել են 12,9%-ով, ընդ որում՝ պարենային ապրանքներինը՝ 16,4%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 11,6%-ով, վճարովի ծառայություններինը՝ 9,3%-ով:

Նույն պաշտոնական աղբյուրները 2017թ. առաջին ինն ամիսների արդյունքում արձանագրել էին 13,9% գնաճ, ինչի հավաստիությունը վիճարկվել է *CESD* փորձագետների կողմից: Նրանց հաշվարկների համաձայն, վերոնշյալ ժամանակահատվածում գնաճը կազմել է 19,7%, ինչը 5,8%-ով ավելի է ԱՀ Վիճակագրության պետական կոմիտեի տվյալներից:

¹ <https://www.stat.gov.az/news/index.php?id=3726?lang=en>

Եթե համադրենք առաջին ինն ամիսների և տարվա վերջնական պաշտոնական ցուցանիշները, ապա կատարվի, որ վերջին երեք ամսվա ընթացքում նույնիսկ գնանկում է տեղի ունեցել, ինչն անհամադրելի է վերը բերված պաշտոնական տվյալների հետ, ըստ որոնց՝ նոյեմբեր-դեկտեմբերին ԱՀ ՀՆԱ-ն բեկումնային աճ է գրանցել:

Այսպիսով, նույնիսկ պաշտոնական նվազեցված արդյունքները վկայում են երկնիշ գնաճի մասին, ինչը *CESD* փորձագետները բացատրում են հետևյալ փաստարկներով.

Շարունակվող գնաճի վրա մեծ ազդեցություն են թողել 2015թ. փետրվար և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած մանաթի երկու փլուզումները: ԱՀ տնտեսության ոչ նավթային հատվածը, մասնավորապես՝ տեղական արտադրությունը, մեծապես կախված են ներկրվող ապրանքներից: Բնականաբար, մանաթի արժեզրկման պայմաններում ներմուծվող ապրանքները սպառողների համար թանկանում են, իսկ տեղական արտադրողները ստիպված են լինում բարձրացնել վերջնական արտադրանքի գները, ինչն էլ իր հերթին բերում է ընդհանուր գնաճի: 2015-2016թթ. ԱՀ կառավարությունը վարչական լծակների կիրառմամբ կանխել է արտադրողների կողմից գների՝ մանաթի արժեզրկման տեմպերին համապատասխան բարձրացումը: Արդյունքում՝ 2015թ. մանաթի փլուզումների հետևանքները շարունակել են զգացվել նաև 2017թ., երբ արտադրողները աստիճանաբար ադապտացվել են ազգային արժույթի ընթացիկ փոխարժեքին:

Չնայած այն հանգամանքին, որ մանաթը 2017թ. ընթացքում կայուն է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ, սակայն արժեզրկվել է եվրոյի (8,22%-ով), ռուբլու (0,68%-ով), չինական յուանի (1,92%-ով) և բրիտանական ֆունտի (4,55%-ով) նկատմամբ: ԱՀ Մաքսային պետական կոմիտեի ներկայացրած տվյալների համաձայն, Ռուսաստանից, Եվրոպայից և Չինաստանից իրականացված ներկրումները կազմում են Ադրբեջանի 2017թ. ներմուծումների 49,55%-ը:

ԱՀ Հարկային նոր օրենսգիրքը գործատուներից պահանջում է աշխատավարձերը վճարել բանկային հաշիվների միջոցով, ինչն իջեցրել է հարկերից խուսափելու և այլ անօրինական գործունեություն իրականացնելու հնարավորությունները, ինչն էլ իր հերթին բերել է տեղական արտադրանքի ինքնարժեքի բարձրացմանը:

2017թ. հուլիսի 15-ից 28,6%-ով թանկացել է ԱՄ-92 բենզինը՝ 0,7 մանաթից դառնալով 0,9 մանաթ, որը նույնպես ազդեցություն է ունեցել գնաճի վրա:

Բանկային ոլորտ

Ադրբեջանի տնտեսության խնդրահարույց ոլորտներից մեկը մնում է ֆինանսաբանկային համակարգը: Ինչպես նշում է ԱՀ ֆինանսական շուկաների վերահսկողության պալատի գործադիր տնօրեն Ի.Ալիշովը, մանաթի 2015թ. փուլումները խնդիրներ են առաջացրել ֆինանսաբանկային ոլորտում, ինչի արդյունքում բանկերը կորցրել են իրենց կապիտալի 60%-ը, իսկ 2016թ. ընթացքում շուկայից հեռացել է 11 բանկ: 2017թ. առաջին ինն ամիսների ընթացքում բանկերին հաջողվել է իրենց ընդհանուր կապիտալն ավելացնել 24%-ով¹:

Չնայած 2017թ. արձանագրված համեմատական դրական միտումներին, ոլորտը չի կարողանում դուրս գալ առաջացած ճգնաժամից: Ադրբեջանում հայտնի բանկային փորձագետ Ա.Հասանովի պնդմամբ, ԱՀ-ում գործող բոլոր 31 բանկերը անառողջ են, սակայն դրանցից հատկապես 10-ը ծանր հիվանդ է, որոնք բացասաբար են ազդում շուկայի ընդհանուր իրավիճակի վրա²:

ԱՀ Վիճակագրության պետական կոմիտեի տվյալների համաձայն, 2017թ. ընթացքում նվազել են բնակչության ավանդները (3,1%-ով) և բանկերի կողմից տրվող վարկերը (24,9%-ով): Միաժամանակ, 31,1%-ով աճել են ժամկետանց վարկերը, որոնք կազմում են բոլոր վարկերի 15,5%-ը (1,89 մլն մանաթ): Ա.Հասանովի կարծիքով՝ նույնիսկ այս թվերը չեն արտացոլում օբյեկտիվ իրականությունը, որովհետև բանկերը նվազեցնում են խնդրահարույց վարկերի ցուցանիշներն իրենց վարկանիշը պահպանելու նպատակով: Ա.Հասանովի կարծիքով՝ այս ցուցանիշները հետագայում նույնպես կաճեն, քանի որ պետությունը չի ցանկանում միջամտել, իսկ բանկերը վարկառուներին արտոնություններ չեն տրամադրում: Արդյունքում՝ հաճախակիացել են անվճարունակ վարկառուների ձերբակալությունները, որոնք դատարաններում չեն կարողանում իրացնել սնանկ ճանաչվելու՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքը: Նմանատիպ ձերբակալությունների առնչությամբ բողոքներն արդեն գտնվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, որտեղից համապատասխան հարցում է արվել ԱՀ կառավարությանը³: Ստեղծված իրավիճակի շտկման համար 2017թ. սեպտեմբերին ստեղծվել է «Ադրբեջանի Հանրապետության վարկային երաշխի-

¹ <http://interfax.az/view/719057>

² <http://ru.echo.az/?p=66215>

³ <https://www.meydan.tv/ru/site/news/26902/>

քային հիմնադրամը՝ փոքր և միջին բիզնեսի, հատկապես գյուղատնտեսության ոլորտում վարկավորմանը նպաստելու նպատակով¹:

Ֆինանսաբանկային ոլորտին մեծ հարված էր նաև ԱՀ խոշորագույն՝ Միջազգային բանկի սնանկացումը 2017թ. մայիսին, ինչը հետևանք էր ոչ արդյունավետ կառավարման, անհամարժեք ներդրումային քաղաքականության, լիկվիդայնության ցածր մակարդակի և, իհարկե, լայն տարածում գտած խոր կոռուպցիայի: Միջազգային բանկի \$3,3 մլրդ պարտքի վերականգնվող մասն արդյունքում ԱՀ արտաքին պարտքը աճել է \$2,45 մլրդ-ով²:

Ադրբեջանի տնտեսության գնահատականները միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից

Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը 2017թ. սեպտեմբերին հրապարակած զեկույցում արձանագրում է նավթի գներից ԱՀ տնտեսության, պետական ֆինանսների և բանկային համակարգի խոցելի կախվածությունը³:

Նավթի գների անկումը բերել է ԱՀ տնտեսության երկարատև ճգնաժամի, իսկ ՀՆԱ 90%-ին հավասար ֆինանսական միջոցներ տնօրինող պետական բարեկեցության հիմնադրամի առկայությունը ԱՀ կառավարությունը չի կարողացել ճկուն օգտագործել նավթի գների անկման հետևանքները մեղմելու համար: Նշված զեկույցում *Moody's*-ի փորձագետները կանխատեսել են 2017թ. ԱՀ տնտեսության կրճատում (1,4%-ով) երկրորդ տարին անընդմեջ: Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից ՀՆԱ 30%-ին համարժեք ֆինանսական միջոցների օգտագործման (ԱՀ Միջազգային բանկի վերականգնվողում և այլն) պարագայում անգամ ֆինանսաբանկային համակարգը շարունակում է թույլ մնալ: Տնտեսական առանցքային խնդիրների թվում առաջնային է մնում նաև տնտեսության և արտահանման կախվածությունը նավթագազային ոլորտից:

«Համաշխարհային բանկը» «Բիզնես վարելու դյուրինության» (*Ease of doing business ranking*) մասին զեկույցում Ադրբեջանի վարկանիշը 65-ից բարձրացրել է 57-րդ հորիզոնական: Այս դրական փոփոխությունը բացատրվում է վարկային տեղեկատվության հասանելիության բարձրաց-

¹ Указ Президента АР об обеспечении деятельности Открытого акционерного общества «Гарантийный фонд Азербайджанской Республики», <http://www.president.az/articles/26086>

² Center for Economic and Social Development (CESD), “International Bank of Azerbaijan: Why the South Caucasus’s largest bank has requested restructuring?”, http://cesd.az/new/wp-content/uploads/2017/08/CESD_Research_Paper_International_Bank_Azerbaijan.pdf

³ https://www.moody's.com/research/Moody's-Azerbaijans-credit-profile-reflects-countrys-vulnerability-to-volatile-oil--PR_372002

մամբ, փոքրածավալ ներդրումներ կատարած գործարարների պաշտպանությամբ և սնանկացման գործընթացի բարելավմամբ¹:

Fitch գործակալությունը 2018թ. համար պահպանել է բացասական կանխատեսումները Ադրբեջանի բանկային ոլորտի համար²:

«Համաշխարհային տնտեսական ֆորումի» (*The World Economic Forum*) վերջին զեկույցում նույնպես Ադրբեջանը բարելավել է դիրքերը՝ 37-րդ հորիզոնականից տեղափոխվելով 35³: Նշված զեկույցում բիզնեսի վարման հիմնական խոչընդոտներ են համարվում ֆինանսավորման ցածր հասանելիությունը (թիվ մեկ խոչընդոտն է, գնահատվել է 16,5 ցուցիչով), արտարժույթային քաղաքականությունը (14,8), հարկային օրենսդրությունը (11,5), գնաճը (10,4), պետական անարդյունավետ վարչարարությունը (7), որակյալ կադրերի բացակայությունը (6,7), կոռուպցիան (5,4), հարկային դրույքաչափերը (5,1), աշխատուժի անբարենպաստ աշխատանքային էթիկան (4,9), ենթակառուցվածքների անհամարժեքությունը (4,4) և այլն:

Այսպիսով, Ադրբեջանի տնտեսության 2017թ. մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը, տնտեսական ուղղվածության վերլուծական առաջատար կենտրոնների, փորձագետների և միջազգային տնտեսական վարկանիշային կազմակերպությունների գնահատականների համադրումը թույլ են տալիս եզրակացնել, որ չնայած 2016թ. համեմատ գրանցված որոշակի դրական միտումներին, ԱՀ իշխանություններին չի հաջողվում տնտեսական իրական աճ արձանագրել: Տնտեսության սովերայնության բարձր մակարդակն էականորեն ազդում է հարկերի հավաքման գործընթացի վրա, իսկ ոչ նավթային ոլորտի զարգացմանն ուղղված բարեփոխումները չեն կարողանում ապահովել ակնկալվող տնտեսական դիվերսիֆիկացիան: 2017թ. ընթացքում նավթի գնի աճի արդյունքում ստացված եկամուտների մեծ մասն ուղղվել է մակրոտնտեսական կայունության ապահովմանը, սակայն դրանով հանդերձ գնաճի մակարդակը մնացել է բարձր: Ներկայում ԱՀ տնտեսության գլխավոր մարտահրավերներ են մնում նավթազագային ոլորտից տնտեսության և արտահանման խոցելի կախվածությունը, ինչպես նաև ֆինանսաբանկային ոլորտի ճգնաժամային վիճակը:

Ապրիլ, 2018թ.

¹ World Bank, Doing Business 2018

<http://www.doingbusiness.org/~media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>

² <http://interfax.az/view/721723>

³ <http://reports.weforum.org/global-competitiveness-index-2017-2018/countryeconomy-profiles/#economy=AZE>

ԱՂԴԲԵՋԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2017Թ.

Անուշավան Բարսեղյան

Ամփոփագիր

Աղբյուրային տնտեսության համար լուրջ մարտահրավեր էր 2015-2016թթ. նավթի գնանկումը: 2017թ. մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը, տնտեսական ուղղվածության վերլուծական առաջատար կենտրոնների, փորձագետների և միջազգային տնտեսական վարկանիշային կազմակերպությունների գնահատականների համադրումը թույլ են տալիս եզրակացնել, որ չնայած 2016թ. համեմատ գրանցված որոշակի դրական միտումներին, ԱՀ իշխանություններին չի հաջողվել տնտեսական իրական աճ արձանագրել: Դա հիմնականում պայմանավորված է տնտեսության ստվերայինության բարձր մակարդակով, ինչն էականորեն ազդում է հարկերի հավաքման գործընթացի վրա, ոչ նավթային ոլորտում հոչակված բարեփոխումների անարդյունավետությամբ, նավթագազային ոլորտից տնտեսության և արտահանման խոցելի կախվածությամբ, ինչպես նաև ֆինանսաբանկային ոլորտի ճգնաժամային վիճակով:

ЭКОНОМИКА АЗЕРБАЙДЖАНА 2017Г.

Анушаван Барсегян

Резюме

Падение цен на нефть в 2015-2016гг. стало серьезным вызовом для экономики Азербайджана. Исследование основных макроэкономических показателей 2017г., сопоставление оценок ведущих аналитических центров экономической направленности, экспертов и международных экономических рейтинговых организаций позволяют заключить, что, несмотря на зарегистрированные по сравнению с 2016г. некоторые положительные тенденции, властям АР не удалось добиться реального экономического роста. Это в основном обусловлено масштабом теневой экономики, который существенно влияет на процесс сбора налогов, неэффективностью объявленных реформ в нефтяной сфере, уязвимостью экономики и экспорта от нефтегазовой отрасли, а также кризисным состоянием финансово-банковской системы.

THE ECONOMY OF AZERBAIJAN IN 2017

Anushavan Barseghyan

Resume

The decline of oil prices in 2015-2016 was a serious challenge for the economy of Azerbaijan. The 2017 macroeconomic indicators, and a combined analysis of assessments by leading economic analysis centers, experts and economic ranking organizations lead to a conclusion that despite certain positive trends compared to 2016, the government of the Azerbaijani Republic was not able to ensure a real economic growth. The main reasons for this are high level of shadow economy that impacts the tax collection, ineffectiveness of the reforms in non-oil sectors, vulnerability caused by the dependence of the economy and exports on oil and gas industry, as well as the crisis situation in the finance and banking sector.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

Վահրամ Հովյան՝

Բանալի բառեր՝ սփյուռք, պետություն, Իրան, քաղաքականություն, տեղեկատվական ոլորտ, գիտություն, միջուկային և հրթիռաշինական ծրագրեր, տնտեսություն, սփյուռքի կապիտալ, Հայաստան:

Չնայած իրանական սփյուռքի՝ այդ երկրի համար ոչ միանշանակ դերին, ինչպես նաև պետություն-սփյուռք հարաբերություններում առկա որոշակի խնդիրներին, ԻԻՀ իշխանությունները նույնպես փորձում են օգտագործել արտերկրի հայրենակիցների ներուժը սեփական երկրի զարգացման և նրա առջև ծառայած խնդիրների լուծման համար: Սույն հետազոտության շրջանակներում դիտարկումները կենտրոնանում են Իրան-սփյուռք համագործակցության քաղաքական, տեղեկատվական, տնտեսական և գիտական ոլորտների վրա:

Քաղաքական ոլորտում հայրենի երկրին աջակցության տեսակետից իրանական սփյուռքի օրակարգում են երեք փոխկապակցված խնդիրներ. ա) աջակցությունն իրանական միջուկային ծրագրին, բ) Իրանի դեմ տնտեսական պատժամիջոցների վերացումը և գ) Իրանի դեմ հնարավոր պատերազմի կանխումը: Այստեղ Իրանին աջակցության հարցում կան ինչպես չափավոր, այնպես էլ արմատական դրսևորումներ:

Չափավոր մոտեցումները հանգում են Արևմուտքին ուղղված կոչերին և խորհուրդներին՝ զերծ մնալ Իրանի նկատմամբ ուժի դիմելու քաղաքականությունից, մեղմել դիրքորոշումը և հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով: Հայրենի պետությանն աջակցության այս դրսևորումները հիմնականում տեղ են գտնում տեղեկատվական-վերլուծական ասպարեզում: Օրինակ՝ Ջոն Հոփքինսի համալսարանի Մերձավոր Արևելքի

՝ «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

գծով փորձագետ, ամերիկյան իրանցիներին միավորող խոշոր կազմակերպության՝ Իրանա-ամերիկյան խորհրդի (Վաշինգտոն) ղեկավար Թրիթա Փարսին ղեռնա Ջ.Բուշի վարչակազմին խորհուրդ էր տալիս փոխել Իրանի նկատմամբ կարծր դիրքորոշումը՝ նշելով, որ հակառակ պարագայում հետևանքներն ավելի տխուր կլինեն ինչպես աշխարհի, այնպես էլ ԱՄՆ-ի համար: Ըստ փորձագետի, եթե ԱՄՆ-ը չփոխի քաղաքականությունն Իրանի նկատմամբ, ապա իրադարձությունները կզարգանան երկու սցենարով՝ հյուսիսկորեական կամ իրաքյան: Առաջինի դեպքում աշխարհում կհայտնվի մի նոր միջուկային տերություն՝ ի դեմս Իրանի, ինչն աշխարհում որևէ մեկը չի կարող կանխել և որի հետ հարաբերություններում նույնպես անհնար կլինի որևէ դրական արդյունքի հասնել, երկրորդ դեպքում ԱՄՆ-ը կներխուժի Իրան, որից հետո ամբողջ աշխարհը կզղջա դրա համար¹:

Այսպիսով, չափավոր մոտեցման կողմնակիցները փորձ են անում տեղեկատվական-վերլուծական ասպարեզում համադրել Իրանի և Արևմուտքի շահերը՝ ձգտելով համոզել արևմտյան աշխարհի որոշում ընդունողներին, որ բանակցությունների միջոցով Իրանի հետ փոխհամաձայնության հանգելը բխում է հենց Արևմուտքի և գլոբալ անվտանգության շահերից:

Միյուտքի վերոհիշյալ մոտեցումն ամրապնդվում է միջուկային ծրագրի վերաբերյալ Իրանի վարած տեղեկատվական քաղաքականությամբ: Այնտեղ պարբերաբար հնչում են հայտարարություններ Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրից դուրս գալու անհրաժեշտության մասին, ինչը, համաձայն փորձագիտական գնահատականի, կրում է զուտ պրոպագանդիստական բնույթ: Դրանք կոչված են ընդամենը ցույց տալու արտաքին աշխարհին, որ Իրանում կան ուժեր, որոնք պատրաստ են դուրս բերել երկիրը միջուկային զենքի չտարածման միջազգային-իրավական կարգավորման ոլորտից: Իսկ դա նշանակում է, որ համաշխարհային հանրությունը, որդեգրելով «ապակառուցողական» դիրքորոշում իրանական միջուկային ծրագրի նկատմամբ, կարող է ստիպել վերջինիս գնալ կորեական ճանապարհով: Եվ նման մոտեցումը երբեմն ազդեցություն է ունենում միջազգային հանրության դիրքորոշման վրա [1, c. 61]:

Արմատական մոտեցման կողմնակիցները կիրառում են ավելի կոշտ մեթոդներ՝ ցույցեր, բողոքի ակցիաներ և այլն: Օրինակ՝ 2006թ. հունիսին Բրյուսելում Եվրոպայի տարբեր երկրների իրանական համայնքների ներկայացուցիչներն ի պաշտպանություն Իրանի միջուկային ծրագրի կազմա-

¹ *Е.Шилов*, Кто влияет на отношение США к Ирану, http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_5039000/5039274.stm

կերպել էին բողոքի ցույց՝ այդ կերպ իրենց վրդովմունքն արտահայտելով Արևմուտքի կողմից Իրանի նկատմամբ վարվող կոշտ քաղաքականության հանդեպ և պահանջելով արևմտյան երկրներից խնդիրները կարգավորելու նպատակով անմիջապես բանակցությունների սեղանի շուրջ նստել այդ երկրի հետ¹:

Վերջին շրջանում իրանական սփյուռքից ակնկալվում է նաև ավելի մեծ չափով նպաստել իրանական փափուկ ուժի քաղաքականությանն արտերկրում: Դրա հիմնական միջոցը պետք է լինի իրանական լեզվի, մշակույթի և քաղաքակրթության տարածումն արտերկրում, որի միջոցով էլ պետք է ձևավորվի Իրանի (իրանական քաղաքակրթության) գրավչությունն օտարերկրացիների մեջ: Այս հարցում ակնկալվում է սերտ համագործակցություն իրանական սփյուռքի գիտական և գործարար շրջանակների միջև: «Իրանցիները և իրանական գիտնականները սփյուռքում,- գրում է հետազոտող Սամ Մասան Շոամանեշը,- աջակցություն ստանալով իրանական բիզնեսի կողմից, կարող են համագործակցել աշխարհի լավագույն համալսարանների հետ՝ հիմնելու ծրագրեր, որոնք կմասնագիտանան իրանական պատմության, քաղաքականության և լեզուների (ներառյալ՝ նախա-, հին և միջին իրանական լեզուները) մեջ, հետևելով Կոլումբիայի և Մորբոնի պես առաջատար դպրոցների նման ծրագրերին»²:

Չի բացառվում, որ սույն ակնկալիքը վերցված է նաև հայկական սփյուռքի օրինակից, քանի որ վերջինիս կողմից նույնպես արտերկրում, այդ թվում նաև աշխարհի առաջատար համալսարաններում ու գիտական հաստատություններում ստեղծվել ու գործառում են հայոց լեզվի, մշակույթի, պատմության և քաղաքակրթության բնագավառներում մասնագիտացած բազմաթիվ հայագիտական կենտրոններ (ամբիոններ, ծրագրեր և այլն) [տե՛ս 2]: Վերջիններիս ավանդական գործառույթներին (հայապահպանություն և այլն) ավելանում են արդի աշխարհին համահունչ այնպիսի նոր գործառույթներ, ինչպիսիք են հայոց լեզվի, մշակույթի և քաղաքակրթության տարածումն աշխարհում և այլն [մանրամասն տե՛ս [3, էջ 49-55], որոնց հանրագումարն արդի տերմիններով կոչվում է փափուկ ուժի քաղաքականություն:

Տեղեկատվական ոլորտում իրանական սփյուռքի՝ հայրենի երկրին աջակցության ձևերն են սեփական և միջազգային լրատվամիջոցներով.

¹ Տե՛ս Иранская диаспора в Европе провела в Брюсселе митинг в защиту права ИРИ на мирный атом, http://www.iran.ru/news/politics/40436/Iranskaya_diaspora_v_Evropa_provela_v_Bryussele_miting_v_zashchitu_prava_IRI_na_mirnyy_atom

² Sam Sasan Shoamaneh, Iran is a riddle, wrapped in a mystery, inside an enigma. But what of the over three million Iranians outside Iran?, <http://globalbrief.ca/blog/2009/11/01/on-the-iranian-diaspora/>

ա) *իրանամետ և հակաարևմտյան հրապարակումները*, որոնցում հիմնավորվում է Իրանի միջուկային ծրագիր ունենալու իրավունքը, քննադատվում Արևմուտքի կոշտ քաղաքականությունը վերջինիս նկատմամբ: Իրանի նկատմամբ Արևմուտքի կոշտ քաղաքականությանը հակադարձելու հարցում առավել ակտիվ են իրանական սփյուռքի գիտական և փորձագիտական հանրությունների ներկայացուցիչները: Օրինակ՝ ԱՄՆ-ում աշխատող իրանցի գիտնական Ա.Թարզին դեռևս 2000-ականների սկզբին գտնում էր, որ Իրանն ունի բավարար պատճառներ միջուկային զենք ունենալու համար¹,

բ) *կոչերը իրանական սփյուռքին՝ օգնելու հայրենիքին*: Այս հարցում նշանակալի է, օրինակ, 2012թ. հեղինակավոր «Հաֆինգթոն փոսթ» պարբերականում իրանցի վերլուծաբան Հոլի Դագրեսի հրապարակած հոդվածը, որում ԱՄՆ իրանական համայնքը քննադատվում է ինչպես ինքնակազմակերպվածության թույլ մակարդակի, քաղաքական մասնակցության (ընտրություններին) գործում պասիվության, այնպես էլ հայրենի երկրին օգնելու հարցում թերացման մեջ: Հեղինակը քննադատում է ԱՄՆ իրանական համայնքին միայն Իրանի ժողովրդին սնունդ, դեղորայք և այլ մարդասիրական օգնություն տրամադրելու հարցի վրա կենտրոնանալու համար և կոչ անում աշխատանքներ տանել նաև այլ կարևոր ուղղություններով, մասնավորապես՝ Իրանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության փոփոխության ուղղությամբ: Որպես օրինակ վկայակոչելով ԱՄՆ հրեական համայնքը՝ հեղինակն իրանական սփյուռքին կոչ է անում ավելի ակտիվ գործողություններին²:

Տնտեսական ոլորտում ԻԻՀ ջանքերն ուղղված են սփյուռքի կապիտալի ներգրավմանը երկրի զարգացման մեջ:

Դատելով տեղեկատվական դաշտում առկա հրապարակային նյութերից՝ կարող ենք նշել, որ իրանական սփյուռքը տիրապետում է հսկայական տնտեսական ներուժի: 2006թ. դրությամբ արտերկրի իրանական կապիտալը գնահատվում էր մոտ \$1.3 տրիլիոն³: Համաձայն նախագահ Հասան Ռոհանիի՝ այն հասնում է \$2 տրիլիոնի⁴:

Սակայն այդ հնարավորությունն Իրանի տնտեսության մեջ ներդնելու և այդ կերպ երկրի տնտեսական զարգացմանը նպաստելու հարցում կան

¹ *Сажин В.И.*, 2004. Война против Ирака и проблема нераспространения ядерного оружия, <http://www.iimes.ru/?p=353>

² Տե՛ս *Holly Dages*, *Diaspora Blues: Why the Iranian Diaspora in the United States Disappoints Me*, http://www.huffingtonpost.com/holly-dages/iranian-americans_b_2219651.html

³ *Iranian diaspora*, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora; Sam Sasan Shoamaneh, նշվ. աշխ.:

⁴ *Иран попросил денег у зарубежных соотечественников*, <https://pronedra.ru/globaleconomics/2015/10/10/iran-poprosil-deneg-u-sootechestvennikov/>

մի շարք լուրջ խոչընդոտներ, որոնցից արժե հիշատակել հատկապես հետևյալները.

ա) Արևմուտքի կողմից վարվող պատժամիջոցների քաղաքականությունը, որն օրենսդրորեն սահմանափակում է արտերկրից, այդ թվում նաև՝ արտերկրի իրանցիների կողմից ֆինանսների, կապիտալի և տեխնոլոգիաների ներհոսքը Իրան: Պատժամիջոցների հետևանքով կանխվում են հատկապես արևմտյան երկրների իրանական սփյուռքից ուղղակի ներդրումներն այդ երկրի տնտեսության մեջ: Օրինակ՝ 1997թ. ԱՄՆ նախագահ Բիլ Կլինթոնի հրամանագիրը, որով արգելվում էին ներդրումներն Իրանում¹, անհնարին է դարձնում ամերիկաբնակ իրանցի գործարարների կողմից ներդրումներն իրենց հայրենիքում:

բ) ԻԻՀ կոշտ քաղաքականությունն Արևմուտքի նկատմամբ,

գ) պետության կողմից մասնավոր սեփականության և այլ ակտիվների բռնագրավումը ազգայնացման քաղաքականության համատեքստում,

դ) երկրի կայունության խաթարման հետ կապված սպառնալիքները²: Վերջիններից հիշատակելի են ներքաղաքական ցնցումներն այդ երկրում 2009թ. նախագահական ընտրություններից հետո, ահաբեկչական գործողությունը Իրանի խորհրդարանում և այաթոլա Խոմեյնիի դամբարանի մոտ 2017թ. և այլն:

Այս է պատճառը, որ արտերկրի իրանական գործարար համայնքը ներդրումներ է կատարում ոչ թե հայրենի, այլ ուրիշ երկրներում: Իրանի մամուլի ծառայության 2000թ. մի հաղորդման համաձայն՝ իրանական սփյուռքի ներդրումներն ԱՄՆ-ում, Եվրոպայում և Չինաստանում կազմել են \$200-400 մլրդ: Մինչդեռ Իրանի տնտեսության մեջ սփյուռքի ներդրումները գրեթե բացակայում էին: 2006թ. դրությամբ իրանական սփյուռքն Արաբական Միացյալ Էմիրություններում կատարել էր մոտ \$200 մլրդ-ի ներդրում³:

Վերոհիշյալ հանգամանքներում իրանական սփյուռքի ներկայացուցիչները փորձում են այլ ճանապարհներով բերել իրենց նպաստը հայրենի պետության և հասարակության զարգացմանը: Ներդրումները տնտեսության մեջ փոխարինվում են կարիքավորներին օգնելուն ուղղված բարեգործական ծրագրերով: Սոցիալ-տնտեսական ոլորտում հայրենիքին իրանական սփյուռքի աջակցության հիմնական ձևը մնում են արտերկիր արտագնա

¹ Shirin Hakimzadeh, Iran: A Vast Diaspora Abroad and Millions of Refugees at Home, <http://www.migrationpolicy.org/article/iran-vast-diaspora-abroad-and-millions-refugees-home>:

² Նույն տեղում:

³ Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora; Shirin Hakimzadeh, նշվ. աշխ., Sam Sasan Shoamaneh, նշվ. աշխ.:

աշխատանքի մեկնածուների դրամական փոխանցումներն իրենց հարազատներին, որոնք 2006թ. դրությամբ կազմում էին մոտ \$2 մլրդ¹: Այս ցուցանիշը տարիների ընթացքում ենթարկվել է տատանումների: Այսպես, 2000թ. այն կազմել է \$536 մլն, 2003թ.՝ \$1.2 մլրդ, իսկ 2004թ.՝ մոտ \$1 մլրդ²: Հայրենիքին օգնության մեկ այլ ձև է համատեղ ձեռնարկությունների ստեղծումը:

Այնուամենայնիվ, Իրանի իշխանությունները սփյուռքի կապիտալը երկիր բերելու նպատակով գնում են որոշակի քայլերի՝ հայրենասիրական կոչերից մինչև ինստիտուցիոնալ կառույցների ստեղծումը: 2013թ. նախագահական ընտրություններից հետո, երբ նոր նախագահ Հասան Ռոհանիի օրոք Իրանին հաջողվեց համաձայնության գալ Արևմուտքի հետ միջուկային ծրագրի հարցում (2015թ. ժնկյան համաձայնությունը), և դրանով որոշակիորեն մեղմացվեցին Իրանի նկատմամբ արևմտյան պատժամիջոցները, անձամբ նախագահ Հասան Ռոհանին կոչով դիմեց իրանական սփյուռքի ներկայացուցիչներին՝ հրավիրելով նրանց օգտվել ընձեռված հնարավորությունից և իրենց կապիտալն ուղղել Իրանի տնտեսություն: Հասան Ռոհանին ակնկալում է ներդրումների տեսքով երկիր բերել սփյուռքի կապիտալի 10%-ը³:

Իրանի իշխանությունների գործնական քայլերը սփյուռքից ներդրումներ ներգրավելու ուղղությամբ հանգում են գործունեության ծավալման երկու հիմնական ոլորտներում՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ:

1. *Օրենսդրական* ասպարեզում հիմնական խնդիրն է համապատասխան նորմատիվ-իրավական դաշտի ստեղծումը կամ բարելավումը՝ դեպի Իրան արտերկրի կապիտալի մուտքը հեշտացնելու նպատակով: Այս տեսակետից կարևոր էր 2002թ. ընդունված Արտաքին ներդրումների խթանման և պաշտպանության ակտը (*Foreign Investment Promotion and Protection Act - FIPPA*), որի նպատակն էր խրախուսել արտաքին ուղղակի ներդրումներն Իրանի տնտեսության մեջ: Սույն օրենսդրական ակտը՝ ա) առավելագույնս ազատականացնում էր Իրանի տնտեսությունն արտաքին ներդրումների համար՝ վերացնելով որևէ սահմանափակում, բ) միաժամանակ արտաքին ներդրողներին վերցնում էր պետության իրավական պաշտպանության տակ՝ այդ առումով հավասարեցնելով նրանց ներքին ներդրողներին:

¹ Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora

² Shirin Hakimzadeh, նշվ. աշխ.:

³ Иран попросил денег у зарубежных соотечественников,

<https://pronedra.ru/global-economics/2015/10/10/iran-poprosil-deneg-u-sootchestvennikov/>

Օրենսդրականից բացի, արտաքին ներդրումների պաշտպանության համար ենթադրվում էին նաև արտասօրենսդրական երաշխիքներ¹:

2. *Ինստիտուցիոնալ* ոլորտում իրանական պետության քայլերն ուղղված են գործարար սփյուռքի հետ համագործակցության նպատակով հատուկ կառույցների ստեղծմանը: Վերջինների շարքին են դասվում պետության և սփյուռքի մասնակցությամբ տնտեսական հաստատությունները, որոնց նպատակն է Իրան ուղղել արտերկրի իրանական կապիտալը, ինչպես նաև օգտագործել սփյուռքի գործարարների փորձառությունն արտաքին տնտեսական ներդրումների ներգրավման գործում: Սկզբնական շրջանում խոսքը \$5 մլրդ կանոնադրական կապիտալով միասնական ներդրումային հիմնադրամի, ինչպես նաև Իրան-սփյուռք տնտեսական միության ձևավորման մասին էր, որը պետք է ծառայեր արտերկրի իրանցի գործարարներին: Հետագայում՝ 2010թ., Իրանի կառավարությունը հայտարարեց 8 մլն եվրո կանոնադրական կապիտալով ազգային հիմնադրամի ձևավորման գործընթաց սկսելու մասին, որը հետագայում պետք է վերաճեր բանկի:

Հիմնադրամի գործընկերն է Իրանի ներդրումային, տնտեսական և տեխնիկական աջակցության կազմակերպությունը, որը պետք է աջակցի սփյուռքի ներդրողներին: Պետությունը երաշխավորված կերպով վճարում է ներդրված գումարի 10%-ը: Յուրաքանչյուր մասնաբաժնի արժեքը հիմնադրամում կազմում է հազար եվրո: Մասնաբաժինների նվազագույն քանակը կազմում է հարյուր հազար, իսկ առավելագույնը՝ հինգ հարյուր հազար եվրո²:

Իրանական սփյուռքը հայրենի պետությանն աջակցելու հարցում երբեմն միջոցների մեջ խտրականություն չի դնում: Այդ դեպքերում սփյուռքի աջակցությունը, հատկապես արևմտյան երկրներում, դուրս է գալիս օրինականության սահմաններից՝ կրելով քրեական բնույթ: Այդպիսի օրինակ է իրանցի գործարարներ Ռեզա Չարրապի և Բաբեք Ջենջանիի կողմից Թուրքիայում և ԱՄՆ-ում բանկային փաստաթղթերի կեղծումը և ապօրինի ճանապարհով դեպի Իրան հսկայական գումարների փոխանցումը: Նրանք, «համագործակցելով» թուրքական համապատասխան ոլորտի պաշտոնյաների հետ, «...ամերիկեան ելմտական համակարգը գործածելով, կեղծ փաստաթուղթեր պատրաստած են ու իրենց բուն նպատակը գաղտնի պահելով միլիոնաւոր տոլարներու փոխանցում ապահոված են

¹ Shirin Hakimzadeh, նշվ. աշխ.:

² Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora

Իրանին ու իրանեան ելմտական հաստատություններուն» [4]: Խնդրի մասին մանրամասն տե՛ս նաև [5]:

Գիտության ոլորտում իրանական սփյուռքի ձևավորումը պայմանավորված է եղել երկու հիմնական գործոնով.

1. *Միջուկային և հրթիռաշինական ծրագրեր*: Այս գործընթացը սկիզբ է առնում 1950-ական թթ., երբ շահական վարչակարգը ձեռնամուխ եղավ երկրի համապարփակ արդիականացմանը, որի անկապտելի բաղադրիչներն էին միջուկային և հրթիռաշինական ուղղությունները: Այն ժամանակ Իրանը հանդիսանում էր Արևմուտքի՝ ԱՄՆ գլխավորությամբ, հիմնական դաշնակիցներից մեկը Մերձավոր Արևելքում: Հետևաբար, վերջինս շահագրգռված էր այդ երկրի՝ որպես դեպի Մերձավոր Արևելք Խորհրդային Միության էքսպանսիայի զսպման ունակ ուժի արդիականացմամբ և հզորացմամբ: Եվ պատահական չէ, որ Իրանում ինչպես միջուկային, այնպես էլ բազմաթիվ այլ գիտատար ուղղությունների հիմնադրման հետևում կանգնած էր հենց ԱՄՆ-ը:

Միջուկային, հրթիռաշինական և այլ գիտատար ուղղությունների զարգացումը անխուսափելիորեն ենթադրում էր համապատասխան կադրերի պատրաստում, որի միակ ճանապարհն այդ ուղղությունները սպասարկող գիտակարգերում (ֆիզիկա, ճարտարագիտություն և այլն) իրանցի երիտասարդների ուսումնառությունն էր արևմտյան (ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և այլն) բուհերում: Հետևաբար, «Միջուկային ծրագրի իրականացման համար իրանական ղեկավարությունը մեծ նշանակություն տվեց միջուկային ֆիզիկայի և միջուկային օբյեկտների կառավարման տեխնիկայի ոլորտում իրանցի մասնագետների պատրաստմանը» [1, c. 42]: Եվ ահա, 1950-ական թվականներից, Իրանի և Արևմուտքի համագործակցությամբ, սկիզբ դրվեց իրանցի ուսանողների զանգվածային ուսումնառությանն արևմտյան լավագույն համալսարաններում: «Ապագա իրանցի մասնագետների պատրաստումն իրականացրին ԱՄՆ-ը, Բելգիան, Մեծ Բրիտանիան, ԳՖՀ-ն, Իտալիան, Շվեյցարիան և Ֆրանսիան» [1, c. 42]:

1977թ. 30-40 հազար իրանցի (ԱՄՆ պետդեպարտամենտի գնահատականներով) սովորում էր ամերիկյան քոլեջներում¹, ընդ որում՝ նրանց մի մասը սովորում էր միջուկային ֆիզիկայի և հրթիռաշինության հետ կապված մասնագիտություններով: 1970-77թթ. ամերիկյան չորս առաջատար միջուկային արտադրանք թողարկող ընկերություններում պատրաստվել է 35 իրանցի մասնագետ [6, c. 146] (հղումը՝ ըստ [1, c. 42]):

¹ *Sober S.*, The US and Iran, an Increasing Partnership, www.sedona.net (հղումը՝ ըստ [1, c. 42]):

1977-78թթ. ուսումնական տարում արտասահմանում սովորող իրանցի ուսանողների թիվը հասնում էր մոտ 100 հազարի, որից 36 հազ. 220-ը սովորում էր ԱՄՆ-ում: Մնացյալն ուսումը ստանում էր հիմնականում Մեծ Բրիտանիայի, Արևմտյան Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իտալիայի բուհերում: Հաջորդ տարի՝ 1978-79 ուստարում, ԱՄՆ-ում սովորող իրանցի ուսանողների թվաքանակը հասավ 45 հազ. 340-ի և գազաթնակետին հասավ հաջորդ տարի՝ 1979-80 ուստարում (51 հազ. 310): Համաձայն Կրթության միջազգային ինստիտուտի տվյալների՝ այս ժամանակահատվածում իրանցիներն ԱՄՆ-ում սովորող արտասահմանյան ուսանողների մեջ թվաքանակով առաջին տեղում էին¹: 1979թ. իսլամական հեղափոխության նախօրեին մոտ 100 հազ. իրանցի ուսանող էր սովորում աշխարհի (հիմնականում՝ ԱՄՆ) լավագույն համալսարաններում²:

Միաժամանակ, լուրջ ուշադրություն էր դարձվում նաև ռազմական կրթությանը՝ արտասահմանում Իրանի բանակի համար սպայական կադրերի պատրաստմանը: ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների ռազմաուսումնական հաստատություններում պատրաստվել է Իրանի ԶՈւ սպայակազմի նշանակալի մասը: 1976թ., օրինակ, ԱՄՆ-ում ուսում էր ստանում գրեթե 3 հազար իրանցի զինծառայող [7, c. 92] (հղումը՝ ըստ [1, c. 42]):

Իսլամական հեղափոխությունից հետո արտասահմանում սովորող ուսանողների այս հսկայական զանգվածի գերակշիռ մասը չվերադարձավ Իրան՝ կազմելով այդ երկրի գիտական սփյուռքը: «Արևմուտքում պատրաստված մասնագետների մեծ մասը, - նշում է փորձագետը, - իսլամական հեղափոխությունից հետո արտագաղթեց, իսկ ուսանողները, որոնք դեռևս շարունակում էին ուսումն Արևմուտքում, կրկին մեծ մասամբ չվերադարձան հայրենիք» [1, c. 42]: Բացի նոր հաստատված իսլամական վարչակարգի անընդունելիությունից, մասնագետների արտագաղթի պատճառ էր նաև միջուկային ծրագրերի ժամանակավոր կասեցումը: Նույն փորձագետի դիտարկմամբ՝ իսլամական հեղափոխությունից հետո աշխատանքները Բուշեիում գործնականում դադարեցին, իրանցի մասնագետների մեծ մասը հեռացավ, աշխատանքների և շինությունների պահպանման ֆինանսավորումը գործնականում դադարեցվեց [1, c. 46]:

Հետագայում, վերսկսելով միջուկային ծրագրերը՝ համապատասխան կադրերի ապահովման խնդիրը լուծելու համար ԻԻՀ ղեկավարությունը ի թիվս այլ ուղղությունների փորձեց շեշտադրում կատարել նաև հետևյալ

¹ Shirin Hakimzadeh, նշվ. աշխ.:

² Sam Sasan Shoamaneh, նշվ. աշխ.:

ուղղությունների վրա՝ ա) արտասահմանում գտնվող իրանցի մասնագետների հայրենադարձություն, բ) վերջիններիս հետ բացահայտ կամ քողարկված համագործակցություն և գ) երիտասարդ իրանցիների մասնագիտական պատրաստում արտերկրում [8, c. 6-7]:

1979թ. իսլամական հեղափոխությունից հետո, երբ դադարեցվեց միջուկային և գիտատեխնիկական այլ ոլորտներում Արևմուտք-Իրան համագործակցությունը, որոշ ժամանակ անց Իրանը սկսեց նոր գործընկերներ փնտրել միջուկային ծրագրերի իրականացման համար: Երկարատև փնտրտուքից և տարբեր երկրների (եվրոպական երկրներ, Ճապոնիա և այլն) հետ բանակցություններից հետո ընտրությունը կանգ առավ սկզբնական շրջանում Չինաստանի, ապա Ռուսաստանի վրա, քանի որ ի դեմս վերջինների՝ Իրանը տեսավ իրական գործընկեր իր միջուկային ծրագրերի իրականացման հարցում:

Թե՛ Չինաստանի, թե՛ Ռուսաստանի հետ միջուկային ոլորտում համագործակցությունը ենթադրում էր վերջիններիս կողմից այդ բնագավառի իրանցի մասնագետների պատրաստում: Այսպես, «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման մասին» 1992թ. օգոստոսի 25-ի ռուս-իրանական համաձայնությամբ ի թիվս այլ բաների նախատեսվում էր՝ ա) միջուկային հետազոտական և էներգետիկ ռեակտորների նախագծում, կառուցում և շահագործում, բ) միջուկային ռեակտորներում և դրանց վառելիքային ցիկլերում օգտագործման համար անհրաժեշտ բաղադրիչների և նյութերի արդյունաբերական արտադրություն, գ) նախագծում և *niuniuni* (ընդգծումը մերն է- Վ.Հ.)¹: Ըստ նույն համաձայնության՝ Ռուսաստանում միջուկային ֆիզիկայի ոլորտում տարեկան պատրաստում պետք է անցնեն ԻԻՀ մինչև 100 քաղաքացի [1, c. 94]: Ռուսական մամուլում 2003թ. հրապարակված մի տեղեկատվության համաձայն՝ 1999-2003թթ. Նովովորոնեժյան ուսումնամարզումային կենտրոնում ուսուցում էր ստացել արդեն 707 մարդ²:

Զնայած Իրանից ուսման նպատակով երիտասարդների արտահոսքն արտասահմանյան երկրներ տեղի է ունենում հիմնականում այդ երկրի միջուկային և հրթիռաշինական ծրագրերի շրջանակներում, այնուամենայնիվ, պետությունը խրախուսում է նաև այլ ոլորտներում իրանցի երիտասարդների ուսուցումն արտերկրում: Այդ ոլորտներից կարելի է առանձնացնել մասնավորապես ռազմագիտությունը (ռազմական կադրերի պատրաս-

¹ Михайлов В.Н., Домыслы и факты о сотрудничестве России и Ирана в области мирного использования атомной энергии // www.iss.niit.ru (հղումը՝ ըստ [1, c. 89]).

² Стажеров тренируют на настоящей АЭС, <https://www.vesti.ru/doc.html?id=103287>

տումը), բժշկությունը և այլն: Այս ոլորտներում էլ պետությունը ոչ միայն խրախուսում, այլև ինքն է նախաձեռնում և իրականացնում իրանցի երիտասարդների արտասահմանյան կրթությունը՝ ելնելով պետական գերակայություններից: Օրինակ՝ 2000-ական թվականներից, պայմանավորված գիտատեխնիկական ոլորտում ռուս-իրանական համագործակցության ակտիվացմամբ, Ռուսաստանի գիտակրթական հաստատություններում սովորող իրանցի ասպիրանտների թվաքանակը մեծացավ: Վերջիններս խորացնում են իրենց մասնագիտական գիտելիքները հիմնականում կիրառական հիմնարար բնագիտական գիտակարգերում և բժշկագիտության մեջ¹:

Չնայած իսլամական հեղափոխությունից հետո Արևմուտքի երկրների հետ Իրանի հարաբերությունների վատթարացմանը և գիտատեխնիկական (հատկապես միջուկային) ոլորտում համագործակցության դադարեցմանը, իրանցի ուսանողների կրթությունն արևմտյան բուհերում շարունակվեց դրանից հետո նույնպես: Ներկայում էլ քիչ չեն արտասահմանյան բուհերում սովորող իրանցի ուսանողները: Վերջիններիս հսկայական թվաքանակը նույնպես թույլ է տալիս պատկերացում կազմել իրանական սփյուռքի գիտական ներուժի մասին: Այսպես, Իրանի կառավարության տվյալներով՝ 2013թ. արտասահմանյան բուհերում կրթություն ստացող իրանցի ուսանողների թվաքանակը կազմում էր 55 հազ. 686: Ըստ երկրների՝ այն ուներ հետևյալ պատկերը: Առաջին տեղում Մալայզիան էր, որտեղ սովորում էր 8 հազ. 883 իրանցի ուսանող, հաջորդում էին Միացյալ Նահանգները (7 հազ. 341 ուսանող), Կանադան (5 հազ. 638 ուսանող), Գերմանիան (3 հազ. 504 ուսանող), Թուրքիան (3 հազ. 364 ուսանող), Մեծ Բրիտանիան (3 հազ. 228 ուսանող): Մնացած հատվածը սովորում էր այլ երկրներում²: Իսկ համաձայն Իրանի կրթության նախարարության գնահատականների՝ 2014թ. դրությամբ արտասահմանում կրթություն ստացած իրանցիների թվաքանակը կազմում էր 350-500 հազ.³:

2. «Ուղեղների արտահոսք»: Այս երևույթը բնորոշ է եղել Իրանից արտագաղթի բոլոր ալիքներին էլ (սկսած 1950-ական թթ.), չնայած ժամանակի ընթացքում դրա ցուցանիշների որոշակի վերելքներին ու վայրէջքներին: Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի 2006թ. տվյալների՝ տարեկան 150-180 հազ. կրթված մարդկանց արտագաղթի ցուցանիշով Իրանը 91 զարգացող և զարգացած երկրների մեջ զբաղեցնում է առաջին

¹ Иранская община в Москве, <http://islamist.ru/iranская-община-в-москве/>

² Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora

³ Նույն տեղում:

տեղը¹: Համաձայն մի փորձագիտական գնահատականի՝ միջազգային գիտական օլիմպիադաներում մրցանակներ շահած իրանցիների 80%-ը նախընտրում է մեկնել ԱՄՆ, Կանադա և Եվրոպա²: Իսկ համաձայն Իրանի գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության (*Ministry of Science, Research and Technology*) գնահատականների՝ մարդկային կապիտալի արտահոսքն այդ երկրի կառավարության վրա տարեկան արժեքում է \$38 մլրդ, ինչը երկու անգամ գերազանցում է նավթի վաճառքից ստացվող եկամուտը³:

Միջուկային, հրթիռաշինական և գիտատար այլ ոլորտներում արտասահմանյան երկրներում կադրերի պատրաստման, ինչպես նաև առկա կադրերի հայրենադարձության քաղաքականությունը տվել է որոշակի արդյունքներ: Օրինակ՝ Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության առաջին նախագահ Ա.Էթեմադը կրթություն է ստացել Ֆրանսիայում՝ Սակլեի Միջուկային հետազոտությունների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտում, և Շվեյցարիայում՝ Լոզանի պոլիտեխնիկական համալսարանում ու Միջուկային հետազոտությունների դաշնային ինստիտուտում: Նրա հաջորդ Ռ.Ամրոլահին «միջուկային ֆիզիկա» մասնագիտությամբ կրթություն է ստացել Թեքսասի համալսարանում, իսկ հետո պրակտիկա անցել Միջուկային հետազոտությունների բելգիական կենտրոնում [9, c. 40]:

Հետևություններ հայ իրականության համար

1. *Տեղեկատվական* ոլորտում, հաշվի առնելով իրանական սփյուռքի փորձը, միջազգային լրատվամիջոցներում և ուղեղային կենտրոններում աշխատող հայ լրագրողների և վերլուծաբանների գործունեության հիմնական ուղենիշները պետք է լինեն հայկական խնդիրների (օրինակ՝ Արցախյան հակամարտության) ակտուալացումը և հայկական ու տվյալ երկրի (դիցուք՝ ԱՄՆ) շահերի ներդաշնակության գաղափարի առաջնությունը: ԼՂ հարցում, մասնավորապես, անհրաժեշտ է առաջ մղել այն գաղափարը, որ Արցախի անկախության միջազգային ճանաչումը բխում է ԱՄՆ և արևմտյան մյուս տերությունների՝ որպես աշխարհում ժողովրդավարության տարածման համար մտահոգ ուժերի շահերից: Այստեղ կարելի է լայնորեն կիրառել արևմտյան քաղաքագիտության թեզերը ժողովրդավարաց-

¹ Shirin Hakimzadeh, նշվ. աշխ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում; Sam Sasan Shoamanesh, նշվ. աշխ.:

ման մասին, ըստ որոնց՝ անկախ ազգային պետությունն անհրաժեշտ նախապայման է ժողովրդավարության համար, քանի որ որևէ էթնիկ խումբ չի կարող լինել ժողովրդավարական ավտորիտար կամ տոտալիտար պետության կազմում: Եվ քանի որ Ադրբեջանի ժողովրդավարացման հեռանկարները խիստ մշուշոտ են, Արցախում ժողովրդավարության անշրջելիության միակ ուղին մնում է նրա միջազգային ճանաչումը:

2. *Քաղաքական* ոլորտում իրանական սփյուռքի ինքնաքննադատությունն ԱՄՆ և առհասարակ հյուրընկալ երկրների քաղաքական կյանքին մասնակցության առումով որոշակիորեն տեղին է և ուսանելի նաև հայկական սփյուռքի, մասնավորապես՝ ԱՄՆ հայ համայնքի պարագայում, հաշվի առնելով այդ երկրի հայկական լոբբիստական կառույցների լուսանցքային դերը վերջին երկու՝ 2012թ. և 2016թ. նախագահական ընտրություններում: Անհրաժեշտ է հաջորդ նախագահական ընտրություններում ակտիվացնել սեփական մասնակցությունը՝ ընդլայնելով ԱՄՆ ապագա գործադիր իշխանության հետ քննարկվող՝ հայ համայնքին հուզող հարցերի շրջանակը (Ցեղասպանության ճանաչման և դատապարտման խնդրի հետ դրանում ներառելով Արցախյան խնդիրը, ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակումը, հայամերիկյան տնտեսական, քաղաքական և այլ հարաբերությունների զարգացումը, Մերձավոր Արևելքի հայ համայնքների դրությունը և այլն) [ավելի մանրամասն տե՛ս 10, էջ 43-45]:
3. *Գիտության* ոլորտում Հայաստանը նույնպես վերջին տարիներին վարում է տաղանդավոր երիտասարդների ուսուցումն արտասահմանյան հեղինակավոր բուհերում հովանավորելու քաղաքականություն: Այդ նպատակով 2009թ. ստեղծվել է «Լույս» հիմնադրամը: Մակայն, ի տարբերություն իրանական փորձի, ՀՀ քաղաքականությունն այս հարցում երկար ժամանակ թիրախավորված չի եղել: Որպես հիմնական սկզբունք ընդունվել է բուհի վարկանիշը (առաջին տասնյակ աշխարհում): Անտեսվել է մասնագիտությունների հարցը, մասնավորապես, այն հարցը, թե պետության հաշվին տվյալ մասնագիտությունը ստացող ՀՀ քաղաքացին հետագայում ինչ հնարավորություններ է ունենալու՝ իր մասնագիտական գիտելիքները կիրառել հայրենիքում և հայրենադարձվել: Թերևս, այս է եղել հիմնական պատճառը, որ «Լույս» հիմնադրամն իր շահառուների առջև իրավա-

կան պարտավորություն չի դրել ուսումն ավարտելուց հետո գոնե որոշ ժամանակ համապատասխան մասնագիտությամբ աշխատել Հայաստանում:

Կարծում ենք, նման ընդհանրական քաղաքականության փոխարեն նպատակահարմար է որոշակիորեն տեղայնացնել գիտական սփյուռքի հետ տարվող քաղաքականությունում իրանական առավել թիրախավորված փորձը: Այսինքն՝ արտասահմանում հայաստանցի երիտասարդների ուսումը հովանավորելու հարցում շեշտադրումը կատարել այն մասնագիտությունների վրա, որոնք առավել են համապատասխանում ՀՀ տնտեսության առաջնահերթություններին: Դրա համար անհրաժեշտ է. ա) հստակ որոշել տնտեսության, մասնավորապես՝ արդյունաբերության ոլորտի գերակա ուղղությունները (IT ոլորտ և այլն), բ) ֆինանսավորել միայն այն մասնագիտություններով հայաստանցի երիտասարդների ուսուցումն արտասահմանյան լավագույն բուհերում, որոնք առավել են համապատասխանում Հայաստանի տնտեսության և, մասնավորապես, գիտատար արդյունաբերության գերակայություններին:

Հարկ է նշել, որ «Լույս» հիմնադրամի գործունեության մեջ բոլորովին վերջերս նկատվում է ընդհանրական քաղաքականությունից ավելի թիրախավորվածին անցնելու միտում: Այս համատեքստում հատկապես կարևորվում է երկու քայլ: Նախ՝ այսուհետև ֆինանսավորվելու է ոչ թե բոլոր մասնագիտություններով արտասահմանյան լավագույն բուհերում հայ երիտասարդների ուսումը, այլ այն մասնագիտություններով, որոնք ընդգրկված են ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում: Եվ երկրորդ՝ այսուհետև հիմնադրամի շահառուները պարտավորվում են ուսումն ավարտելուց հետո երեք տարի աշխատել Հայաստանում:

Այնուամենայնիվ, պետության գերակա ուղղությունն էլ բազմաբովանդակ հասկացություն է: Մասնավորապես, կարող են գոյություն ունենալ գերակայության տարբեր աստիճաններ՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն: Հետևաբար, կարելի է արտասահմանյան կրթության համար հատկացվող ֆինանսավորման չափերն էլ համապատասխանեցնել այդ աստիճաններին՝ հետևյալ կերպ.

- Առաջին աստիճանի գերակայություն՝ 80-100% ֆինանսավորում
- Երկրորդ աստիճանի գերակայություն՝ 50% ֆինանսավորում
- Երրորդ աստիճանի գերակայություն՝ 20% ֆինանսավորում:

4. *Տնտեսության* ոլորտում սփյուռքի հետ աշխատանքի իրանական փորձում առկա է մի երևույթ, որն առկա չէ հայ իրականության մեջ: Խոսքը վերաբերում է համատեղ ձեռնարկություններին:

Կարծում ենք, համագործակցության նման ձևաչափը կարող է փոխշահավետ լինել՝ հետևյալ նկատառումներով: Հաջող բիզնես հիմնելու համար անհրաժեշտ է նախնական կապիտալ, տեղեկացվածություն (ոչ միայն տվյալ երկրի գործարար օրենսդրության, հարկային և մաքսային օրենքների, այլև տվյալ երկրի բիզնես միջավայրի մասին առհասարակ, շուկայի հնարավորությունների, առաջարկի և պահանջարկի հարաբերակցության, տնտեսության գերակա ուղղությունների, մրցակցության և այլնի մասին), կապեր՝ որոշ խնդիրներ ոչ ֆորմալ եղանակներով լուծելու համար (այս արտահայտությունն այստեղ կիրառվում է բառի դրական իմաստով) և այլն:

Համատեղ ձեռնարկությունների ստեղծման պարագայում նախնական անհրաժեշտ կապիտալը կամ դրա այն մասը, որը պակասում է, կարող են ապահովել սփյուռքի գործարարները, մինչդեռ ՀՀ գործարար միջավայրի վերաբերյալ տեղեկացվածությունը, ինչպես նաև համապատասխան կապերը՝ տեղի գործարարները: Իսկ պետությունն էլ, բաժնետեր լինելու պարագայում, կարող է ապահովել երկրի օրենսդրությանը լավագույն տիրապետումը: Անհրաժեշտության դեպքում այն կարող է գնալ նաև օրենսդրական փոփոխությունների:

Մարտ, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Саруханян С.Н.*, Россия и Иран. 10 лет ядерного сотрудничества, Ер., «Гаспринт», 2006.
2. *Միմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Ե., «Գասպրինտ», 2014:
3. *Հովյան Վ.*, Արտերկրի հայագիտական կենտրոնների դերակատարությունը, 21-րդ ԴԱԸ, թիվ 4, 2014:
4. «Հալքպանք» դրամատան փոխտնօրեն Մէհմէտ-Հաքան Աթիլլա ձեռքակալուեցավ Ամերիկայի մէջ. ան կը մեղադրուի Բրզա Ջարրապի գործով, Նոր Մարմարա, 29 մարտի, 2017:
5. Ի՞նչեր կ'անցնին կը դառնան Բեգա Ջարրապի դէմ բացուած դատի ծալքերէն ներս. նախկին նախարար Չաղլաեանի անունով ստեղծուած զգայացունց զարգացում – մինչ Էրտողան կը պաշտպանէր Ջարրապը, Քըլլըճտարօղլու շատ ծանր պնդումներ հրապարակ քշեց, Նոր Մարմարա, 11 սեպտեմբերի, 2017:

6. *Новиков В.Е.*, Состояние и перспективы развития ядерных и ракетных технологий в Иране // В сб. Иран в современном мире, М., РИСИ, 2003.
7. *Ермаков С.М.*, Перспективы развития вооруженных сил Ирана // В сб. Иран в современном мире, М., РИСИ, 2003.
8. *Задонский С.М.*, Ядерная программа Ирана и российско-иранские отношения, М.: ИИИБВ, «АСТИ-ИЗДАТ», 2002.
9. *Хлопков А.*, Иранская ядерная программа в российско-американских отношениях // Научные записки ПИР-Центра, 2001, № 18.
10. *Հովյան Վ.*, ԱՄՆ հայ համայնքի հիմնական խնդիրները, Գլոբուս, թիվ 4, 2017:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՍՓՅՈՒՈՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Չնայած իրանական սփյուռքի ոչ միանշանակ դերին այդ երկրի համար, ինչպես նաև պետություն-սփյուռք հարաբերություններում առկա որոշակի խնդիրներին, ԻԻՀ իշխանությունները փորձում են օգտագործել արտերկրի հայրենակիցների քաղաքական, տեղեկատվական, տնտեսական և գիտական ներուժը սեփական երկրի զարգացման և նրա առջև ծառայած խնդիրների լուծման համար: Իրանական փորձից հայ իրականության համար ուսանելի են սեփական երկրի և տվյալ պետության շահերի ներդաշնակության գաղափարի առաջնորդումը (տեղեկատվական ոլորտ), քաղաքական գործընթացներին ավելի ակտիվ մասնակցությունը (քաղաքական ոլորտ), արտասահմանյան բուհերում երիտասարդների ուսումը հովանավորելու հարցում թիրախավորված քաղաքականությունը (գիտության ոլորտ), սփյուռքի կապիտալի մասնակցությամբ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը (տնտեսական ոլորտ):

**ИЗ ИРАНСКОГО ОПЫТА СОТРУДНИЧЕСТВА
ГОСУДАРСТВО-ДИАСПОРА***Ваграм Овян*

Резюме

Несмотря на неоднозначность роли иранской диаспоры для метрополии, а также некоторые проблемы во взаимоотношениях государство-диаспора, власти ИРИ пытаются использовать политический, информационный, экономический и научный потенциал своих зарубежных соотечественников во имя процветания своей страны и решения стоящих перед ней задач. Для армян поучителен иранский опыт по выдвижению идеи гармонизации интересов собственной страны с конкретной страной проживания общины (информационная сфера), более активному участию в политических процессах (политическая сфера), целенаправленной политике в вопросе спонсирования обучения иранских студентов в иностранных вузах (научная сфера), созданию совместных предприятий с вовлечением капитала диаспоры (экономическая сфера).

**THE IRANIAN EXPERIENCE
OF STATE-DIASPORA COOPERATION***Vahram Hovyan*

Resume

Despite the mixed role of the Iranian diaspora for the country, as well as certain problems in the state-diaspora relations, the IRI authorities try to utilize the political, information, economic and scientific potential of their compatriots in foreign countries for the development and solution of the problems of their own country. The Iranian experience can be useful for Armenian realities in terms of promoting the idea of harmony between the interests of the country and the state (information area), active participation in political processes (political area), targeted policy for study of young people in foreign universities (science area) and establishment of joint ventures with participation of diaspora capital (economic area).

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՍՓՅՈՒՌՔ
ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Կարեն Վերանյան՝

Բանալի բառեր՝ հրեություն, Իսրայել պետություն, պետություն-սփյուռք հարաբերություններ, վիճակագրություն, հայրենադարձություն, ցանցակենտրոն, Իսրայելի պաշտպանության բանակ, զինծառայություն:

Հետազոտությունը նվիրված է վերջին տարիներին հրեությունում պետություն-սփյուռք համագործակցության զարգացման հնարավորությունների և խնդիրների լուսաբանմանը: Անդրադարձ է կատարվում հրեության ժողովրդագրական վիճակագրության պատմական նկարագրին, արդի միտումներին և հնարավոր կանխատեսումներին: Առանձնակի ուշադրություն է դարձվում հրեությունում պետություն-սփյուռք փոխգործակցության կառավարման, ազգային, հոգևոր-գաղափարական, ինչպես նաև քաղաքական իրավական, հայեցակարգային բաղադրիչների ուսումնասիրման հարցերին: Լուսաբանվում են նաև պետություն-սփյուռք երկխոսության այն հիմնահարցերը, որոնք վերաբերում են Իսրայելի պաշտպանության, զինծառայության ոլորտներին, որտեղ Իսրայելի զինված ուժերը ներկայանում են որպես պետություն-սփյուռք գործակցության և Իսրայելում հայրենադարձների ինտեգրման կարևոր ինստիտուտ:

***Դեպի Իսրայել հայրենադարձության
քանակական ցուցանիշները 1919-2017թթ.***

Իսրայելի Կենտրոնական վիճակագրական բյուրոյի (ԻԿՎԲ) տվյալներով՝ 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից ի վեր ավելի քան 130 երկրներից հայրենադարձվել է շուրջ 3.2 մլն մարդ: 1990-ականներից սկսած՝ «Մեծ

¹ «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

հայրենադարձության» (հետխորհրդային տարածքի երկրներից հրեա բնակչության հայրենադարձությունը) շրջանին բաժին է ընկել ընդհանուր հայրենադարձվածների թվաքանակի 43%-ը՝ շուրջ 1.35 մլն բնակիչ: 1989-2003թթ. դեպի Իսրայել հայրենադարձների թվաքանակի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 1990-1991թթ.՝ համապատասխանաբար 200.170 և 176.650 հազ. հայրենադարձ: 1919-2014թթ. Իսրայել հայրենադարձվածների թվաքանակի ամենաբարձր ցուցանիշները եղել են Իսրայել պետության հիմնադրման տարիներին. 1948թ. Իսրայել է հայրենադարձվել 118.993 հազ. մարդ, իսկ 1949թ. այդ ցուցանիշը կազմել է արդեն 239.954 հազ.: 1948-2014թթ. Իսրայել հայրենադարձների թվաքանակում, ըստ իրենց բնակության երկրների հաշվարկի, ամենաբարձր արդյունքը գրանցվել է ԽՍՀՄ-ից (15 երկիր) հայրենադարձվածների պարագայում՝ շուրջ 39.3%, հաջորդաբար բարձր են եղել Ռումինիայից (8,8%), Մարոկոյից (8,6%), Լեհաստանից հայրենադարձների քանակական ցուցանիշները: ԱՄՆ-ից հայրենադարձվածների թվաքանակը տոկոսային հարաբերակցությամբ հաշվվել է 3,4%:

ԻԿՎԲ-ն վիճակագրական հետազոտություն է իրականացրել, որտեղ ներկայացված են 1900-2015թթ. Իսրայելի և հրեական սփյուռքի բնակչության թվաքանակների զարգացման դինամիկայի տվյալները, որոնց հիման վրա հրեության (Իսրայել և հրեական սփյուռք) թվաքանակի վերաբերյալ ներկայացվել են կանխատեսումներ մինչև 2040թ.¹: 1900-1939թթ. Պաղեստինի հրեական բնակավայրերի (Իսրայել պետությունը հիմնադրվել է 1948թ.) հրեա բնակչության թվաքանակը 50.000-ից աճել է՝ հասնելով 450.000-ի: Սա բավական տպավորիչ ցուցանիշ է՝ հաշվի առնելով նաև 20-րդ դարի սկզբին միջազգային հարաբերություններում ռազմաքաղաքական լարվածության ընդհանուր տրամաբանությունը, տարածաշրջանային պատերազմներն ու Առաջին աշխարհամարտը և այլն: Պետք է նշել, որ հրեության գաղափարական և հոգևոր առաջնորդները 19-րդ դարի վերջերից սկսել էին ակտիվ աշխատանքներ տանել հրեական պետականության վերականգնման ուղղությամբ: Այդ նպատակի իրագործման համար նախ անհրաժեշտ էր լուծել Պաղեստինում հրեական բնակավայրերի ստեղծման և այդ բնակավայրերը հրեաներով բնակեցնելու խնդիրը:


Նշյալ ժամանակահատվածում հրեական սփյուռքի բնակչության թվաքանակի տվյալներն անհամեմատ ավելի բարձր են. եթե 1900թ. դրությամբ հրեական սփյուռքը հաշվվում էր 10.600.000 մլն, ապա 1939թ. այդ

¹ Яков Файтельсон, «Еврейское население в Израиле и диаспоре», http://evreimir.com/114710/16-02-07-faytel_jews/

ցուցանիշը աճել էր շուրջ 6 մլն-ով՝ կազմելով 16.600.000 հրեա: Հրեական սփյուռքի թվաքանակի շեշտակի աճի ցուցանիշները, թերևս, պայմանավորված են 20-րդ դարի առաջին տասնամյակներում և մինչ Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակաշրջանում առաջին հերթին ԱՄՆ-ի և եվրոպական մայրցամաքի բնակչության՝ այլ տարածաշրջանների համեմատ բարեկեցիկ կենսապայմաններով: Այստեղ էր հիմնականում կուտակված հրեական սփյուռքի մտավոր, ֆինանսատնտեսական կապիտալը, որն իր հերթին կարևոր դեր ունեցավ հրեության բարեկեցության ապահովման և թվաքանակի ցուցանիշների աճի հարցում:

Գծապատկեր 1

Իսրայել պետության և հրեական սփյուռքի բնակչության հարաբերակցությունը 1900-2015թթ. և 2040թ. կանխատեսումները, մլն բնակիչ¹



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, <http://cbs.gov.il/reader>, http://evreimir.com/114710/16-02-07-faytel_jews/

¹ Վիճակագրական հետազոտությունն իրականացվել է 2015թ.:

Պատկերն այլ է նախորդ դարի 30-ականների վերջերից հրեական սփյուռքի բնակչության թվաքանակի դեպքում, որը կայուն նվազման դինամիկա է ունեցել: Իրավիճակն արմատապես փոխվեց հրեական Հոլոքոստի տարիներին, երբ ցեղասպանության զոհ դարձավ շուրջ 6 մլն հրեա:

ԻԿՎԲ տվյալներով, մինչև 2040թ. կանխատեսումներով Իսրայելի դեկավարությունը նախատեսում է մեծացնել երկրում հրեության մարդկային-մտավոր կապիտալի կուտակման քանակական ծավալները՝ հիմնականում հրեական սփյուռքից հայրենադարձության գործընթացի շարունակության ապահովման միջոցով: Իսրայել պետության և հրեական սփյուռքի բնակչության ցուցանիշները կհատվեն 2025-2027թթ.՝ կազմելով համապատասխանաբար 7.650.000 և 7.770.000 մլն հրեա բնակիչ, իսկ հետագա տարիներին նախատեսվում է, որ Իսրայելի հրեա բնակչության թվաքանակը կգերազանցի 10 մլն-ը: Այն դեպքում, երբ հրեական սփյուռքի թվաքանակը, համաձայն ԻԿՎԲ կանխատեսումների, կնվազի մինչև 6.926.000 մլն:

Հրեությունում պետություն-սփյուռք գործակցության կառավարման մոդելները

Երկհազարամյա աշխարհացրիվ և պետականագուրկ պայմաններում հրեությունը փաստացի ներկայացված էր ի դեմս հրեական սփյուռքի, որտեղ, ի տարբերություն պաղեստինյան հրեական բնակավայրերի հրեա բնակչության, կենտրոնացված էր համայն հրեության մտավոր, մարդկային, ֆինանսատնտեսական կապիտալի գրեթե ողջ պոտենցիալը: Այդ շրջանում հրեության գոյատևման, ազգային ինքնության պահպանման, ազգային-գաղափարական և հոգևոր դաստիարակության ապահովման հրամայականը ձևավորվում ու համակարգվում էր հրեական սփյուռքում, որի առաջատար ուժը կենտրոնացած էր գլխավորապես Եվրոպայում և ԱՄՆ-ում: Իրավիճակը փոխվեց հրեական Հոլոքոստի տարիներին, երբ ցեղասպանության զոհ դարձավ շուրջ 6 մլն հրեա: Արդյունքում՝ հրեական սփյուռքը կորցրեց իր մարդկային, մտավոր, ֆինանսական կապիտալի գերակշիռ հատվածը: Այդ փուլում հրեության հոգևոր-գաղափարական առաջնորդների շրջանում աստիճանաբար արմատավորվեց այն համոզմունքը, որ հրեական պետականության վերականգնման գործընթացը, որպես համայն հրեության գոյության, ազգային ինքնության պահպանման երաշխիք, այլընտրանք չունի: Սակայն սկզբնական փուլում, ըստ էության, խնդիր չէր դրված հրեության մտավոր-մարդկային, ֆինանսական կապիտալը կուտակել գերազանցապես Պաղեստինում հրեական ազգային օջախում, քանի որ պետա-

կանության վերականգնման գործընթացը դեռևս նոր էր զարգանում: Նպատակահարմար էր այդ շրջանում հրեա ժողովրդի զարգացումն ապահովել այսպես կոչված ցանցակենտրոն սկզբունքի համաձայն, որը ենթադրում էր հրեական սփյուռքի և ապագա Իսրայել պետության հրեա բնակչության մարդկային-մտավոր կապիտալի միաժամանակյա կուտակում և վերարտադրության ապահովում: Ցանցակենտրոնության մոտեցման դրական կողմերից մեկն այն էր, որ սփյուռքն իր մտավոր-մարդկային, ֆինանսական ներուժով տիրապետում էր զգալի լոբբիստական լծակների՝ ազդելու իր բնակչության երկրի իշխանական-քաղաքական որոշումների, հասարակական կարծիքի ձևավորման վրա: Սակայն հատկապես 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից հետո նախկին մոտեցումները վերիմաստավորվեցին, արդյունքում՝ հրեության զարգացման և անվտանգության ապահովման տեսանկյունից արդեն առաջնակարգ էր համարվում հրեա ժողովրդի ազգային կապիտալն Իսրայել պետությունում կուտակելու խնդիրը:

Մյուս կողմից, սակայն, ցանցակենտրոն կառավարման մոդելն աչքի է ընկնում նաև բացասական կողմերով, որոնք հատկապես Իսրայել պետության հիմնադրումից հետո ժամանակ առ ժամանակ իրենց ազդեցությունն են թողել ինչպես հրեությունում պետություն-սփյուռք գործակցության, այնպես էլ բուն հրեական սփյուռքի տարբեր համայնքների միջև հարաբերությունների վրա: Ցանցակենտրոն սկզբունքը միջազգային հարաբերություններում հրեության միջազգային կշռի ու հեղինակության բարձրացման հարցում ունեցած կարևոր դերակատարությունից զատ, զգալի բացասական ազդեցություն է ունեցել նաև Իսրայել պետության, նրա հասարակության և հրեական սփյուռքի հանրության միմյանցից օտարման գործընթացում:

Հրեությունում պետություն-սփյուռք գործակցության կառավարման երկրորդ ռազմավարության կամ մոդելի կողմնակիցները, որոնք ներկայացնում են հրեության առավել պահպանողական և կրոնական շրջանակները, գտնում են, որ հրեության զարգացման կենտրոնում Իսրայել պետությունն է, որը ոչ միայն հրեա ժողովրդի հոգևոր հայրենիքն է, այլև ազգային-գաղափարական կենտրոնը:

Վերջին տասնամյակում արտերկրի հրեական համայնքներում, հատկապես ԱՄՆ-ում և Եվրոպայում, խորանում էին հակասություններն Իսրայելի ղեկավարության և հրեական համայնքների առաջնորդների միջև: Հրեական ազգային-հոգևոր առաջնորդներից շատերը բոլորովին այլ պատկերացումներ ունեին հրեական պետականության վերականգնման, ավետյաց երկրի վերստեղծման և հրեական «հոգևոր-ազգային առաքելու-

թյան» հարցերի առնչությամբ: Սակայն Իսրայել պետության քաղաքական, հասարակական և կրոնական խնդիրները թերահավատություն են ներշնչում այդ քաղաքական-գաղափարական առաջնորդների շրջանում՝ Իսրայելը որպես համայն հրեության կենտրոն դիտարկելու համատեքստում: Սփյուռք-պետություն գործակցությունում հրեության տարբեր հատվածների միջև առաջացած հակասությունները սրվում էին նաև Իսրայելի ներքաղաքական-իշխանական, սոցիալ-հասարակական գործընթացներին սփյուռքի մասնակցության ապահովման նպատակահարմարության հիմնահարցի առնչությամբ:

Խնդիրը, սակայն, ունի նաև օբյեկտիվ պատճառներ: Վերջին երկու տասնամյակներում աշխարհի ազդեցիկ հրեական համայնքներում տեղի է ունեցել սերնդափոխություն, ինչն էլ առիթ էր հանդիսացել հրեական համայնքներ-պետություն հարաբերությունների զարգացման հարցերի վերանայման առումով: Եթե 20-րդ դարի առաջին տասնամյակների սերունդները, որոնք անմիջական մասնակցություն են ունեցել հրեական ազգային օջախի ձևավորման և պետականության վերականգնման գործընթացին և չէին կարող պատկերացնել հրեության զարգացման տեսլականն առանց Իսրայել պետությունը համայն հրեության քաղաքական-հոգևոր կենտրոն դիտարկելու, ապա նոր սերունդն այդ հարցերին վերաբերվում է գործնական տեսանկյունից: Նրանց մի հատվածի աշխարհայացքում Իսրայել պետությունը դիտարկվում էր որպես հրեության կենտրոններից մեկը բազմաթիվ հրեական համայնքների շարքում, թերևս՝ ոչ ավելին:

2012թ. կառավարությունը նախատեսում էր պատրաստել Իսրայել-սփյուռք փոխհարաբերությունների զարգացման նոր հայեցակարգ, որի համաձայն՝ Իսրայել պետությունը պատասխանատվություն է վերցնում ինչպես Իսրայելում, այնպես էլ նրա սահմաններից դուրս բնակվող հրեության պահպանման համար¹: Հայեցակարգի էությունն այն է, որ «Իսրայել պետության գոյության առաջին 6 տասնամյակների ընթացքում սփյուռքի հրեաները պետք է աջակցություն ցուցաբերեն Իսրայել պետությանը, իսկ հետագա 6 տասնամյակների ընթացքում Իսրայել պետությունը պետք է աջակցի հրեական սփյուռքին»²: Այդ ժամանակվա կառավարության քարտուղար Յվի Հաուզերի բնորոշմամբ, «Իսրայել պետության կառավարության ղեկավարը հանդիսանում է համայն հրեության առաջնորդը, իսկ Իս-

¹ «Новая концепция взаимоотношений Израиль-Диаспора», <http://www.vaadua.org/news/novaya-koncepciya-vzaimootnosheniy-izrail-diaspora>

² Նույն տեղում:

րայելի կառավարությունը հրեության կառավարությունն է»¹: Հայեցակարգում կարևոր ուշադրություն է դարձվելու հրեական պետության և պետականության ապալեզիտիմացման փորձերին հակադրման պայքարին, որտեղ զգալի նշանակություն պետք է տալ Իսրայելի որոշումների կայացման համակարգում սփյուռքի մասնակցության ընդլայնման հնարավորություններին: Հայեցակարգի քննարկումներին մասնակից փորձագետների կողմից առաջարկվում է ձևավորել մշտական գործող կառույց՝ Իսրայելի կառավարության և սփյուռքի միջև խորհրդատվությունների, կարծիքների փոխանակման ու քննարկումների անցկացման նպատակներով:

2016թ. դեկտեմբերի 18-24-ին Իսրայելում մեկնարկեց հրեական համայնքների միջև կապերի և համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումների շաբաթը: Միջոցառումն Իսրայելում անցկացվում էր առաջին անգամ: Ծրագրի նպատակն էր հրեության տարբեր հատվածների ներկայացուցիչների, կառույցների և Իսրայելի հետ կապերի ամրապնդումը, ինչպես նաև համաշխարհային հրեության առջև ծառայած խնդիրների ու մարտահրավերների քննարկումը: Միջոցառման կազմակերպիչների հավաստմամբ, «այդ և նման միջոցառումները կարող են նպաստել հրեության միջև կապերի և համագործակցության զարգացմանը, նրա ներկայացուցիչների շրջանում Իսրայելին և հրեությանը պատկանելության զգացման խորացմանը, ինչն իր հերթին հնարավորություն կտա խուսափել հրեա ժողովրդի թվաքանակի նվազումից»²: Աղբյուրի համաձայն, աշխարհում բնակվում է ընդհանուր առմամբ, 14,4 մլն հրեա, որից 8,1 մլն-ը բնակվում է Իսրայելի սահմաններից դուրս: Ընդ որում, այդ թվաքանակի 80%-ը, որպես կանոն, կապեր գրեթե չի պահպանում տեղի հրեական համայնքի և Իսրայելի հետ: Աղբյուրում նշվում է նաև, որ ԱՄՆ հրեա բնակչության երիտասարդ սերնդի միայն 25%-ն է զգում կապն Իսրայելի և հուդայականության հետ, նրանց միայն 33%-ն է այդ հարցին լուրջ վերաբերվում³: Իսրայելի սփյուռքի հարցերով նախարարության տեղեկության համաձայն, միջոցառումը նպատակ ուներ Իսրայելի քաղաքացիների շրջանում ընդլայնել և խորացնել հրեական սփյուռքի վերաբերյալ գիտելիքները, ինչպես նաև նպաստել սփյուռքի կարևորության

¹ Նույն տեղում:

² «В Израиле стартовала неделя евреев мира», http://jewishnews.com.ua/ru/publication/b_izraile_startovala_nedelya_evreev_mira

³ «Впервые в Израиле отмечается неделя, посвященная связям с еврейством диаспоры», <http://www.vaadua.org/news/vpervye-v-izraile-otmechaetsya-nedelya-posvyashchennaya-svyazyam-s-evreystvom-diaspory>

ընկալմանը՝ որպես հրեա ժողովրդի գոյության շարունակականության ռազմավարական ռեսուրս¹:

Հրեությունում պետություն-հրեական համայնքներ հարաբերություններում վերջերս հասունանում էր անհամաձայնությունների նոր ակիբ կրոնական որոշ հարցերի շուրջ: Հայտնի է, որ Իսրայել պետության հոգևոր դասն աչքի է ընկնում պահպանողականությամբ, ինչը հաճախ հակասությունների տեղիք է տվել հրեական սփյուռքի հոգևոր ղեկավարության շրջանակներում, որոնք իրենց կրոնական հայացքներում առավել ազատական են: Խոսքն այն մասին է, որ վերջերս Իսրայելի հասարակական-քաղաքական շրջանակներում, սփյուռքի տարբեր համայնքներում ընթանում էին լուրջ քննարկումներ, հնչում էին հակասական տեսակետեր՝ Երուսաղեմ քաղաքի «Լացի պատ» կոչվող վայրի մոտակայքում ոչ ուղղափառ-ռեֆորմիստական դավանական ուղղությունների ներկայացուցիչների աղոթքի համար հավելյալ հատվածի ստեղծման նախագծի շուրջ: 2017թ. հունիսի վերջին Իսրայելի կառավարությունը որոշեց սառեցնել այդ նախագիծը: Ինչպես նշում են որոշ իսրայելական լրատվամիջոցներ, այդ որոշման պատճառներից մեկն այն է, որ Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուն գտնվում է երկրի իշխող կոալիցիայի մաս կազմող ուլտրակրոնական կուսակցությունների մշտական ճնշումների ներքո: ՁԼՄ-ի համաձայն, այդ քայլով զգալի վնաս կարող է հասցվել պետություն-սփյուռք հարաբերություններին և մասնավորապես ԱՄՆ հրեական համայնքի հետ Իսրայել պետության համագործակցությանը, քանի որ ԱՄՆ հրեական 6 մլն-անոց համայնքի միայն 15%-ն է հարում ուլտրաուղղափառ ուղղությանը²: Ինչպես և ակնկալվում էր, ԱՄՆ հրեական համայնքի լիբերալ հատվածի շրջանում այս որոշումը բացասաբար ընդունվեց:

Բացի այդ, Իսրայելի Քնեսետի միջնախարարական հանձնաժողովը որոշում է կայացրել հավանություն տալու «գիյուր»-ի³ (ազգությամբ ոչ հրեաների այսպես կոչված «հրեականացման» կամ «հուդայականացման» ընթացակարգ, երբ նրանց բերում են հուդայական հավատքի) ոլորտում մասնավոր ռաբբիական դատարաններին գրկելու լիազորություններից՝ դրանով իսկ մենիշխան իրավասություններ տալով երկրի գլխավոր ռաբբինաթին՝ կենտրոնական հոգևորական դասին: Երկրի իշխանությանն ընդդիմադիր ուժերը դեմ են արտահայտվել այս փոփոխություններին, քանի որ

¹ Նույն տեղում:

² «СМИ: выступив «харедим», Нетаниягу испортил отношения с евреями США», http://newsru.co.il/israel/26jun2017/net_105.html

³ <https://ru.wikipedia.org/wiki/%D0%93%D0%B8%D1%8E%D1%80>, «Гиюр»

դա կսահմանափակի այն մարդկանց թվաքանակը, որոնք ցանկանում են դառնալ հուդայական, անցնել «գիյոր»-ի ընթացակարգը՝ դրանով իսկ հասկացնելով, որ կրոնական սիոնիզմի ռաբբիները երկրորդական կարգի են¹:

Վերջին տարիներին ակտիվացել են քաղաքական-հասարակական քննարկումներն Իսրայել պետության հրեական բնույթը սահմանող օրենսդրական նախաձեռնությունների շուրջ: Խոսքը վերաբերում է նրան, որ Իսրայել պետության քաղաքական-հասարակական առավել պահպանողական շրջանակները հանդես են եկել նախաձեռնությամբ, որով փորձում են իրավական տեսանկյունից ամրագրել Իսրայել պետության հրեական լինելու հանգամանքը: 2017թ. մայիսի 7-ին Իսրայելի օրենսդրական հարցերով միջնախարարական հանձնաժողովը հաստատեց «Հիմնական օրենք. Իսրայելը որպես հրեա ժողովրդի ազգային պետություն» կոչվող օրինագիծը, որով Իսրայելը սահմանվում էր հրեա ժողովրդի պետություն²: Օրինագծով Իսրայել պետության մայրաքաղաքը Երուսաղեմն է, պաշտոնական լեզուն՝ եբրայերենը, իսկ արաբերեն լեզվին նախատեսվում է տալ հատուկ կարգավիճակ: Օրինագծում խոսվում է, որ Իսրայելը հանդիսանում է հրեա ժողովրդի ազգային օջախը, որն Իսրայել պետությունում ազգային ինքնորոշման բացառիկ իրավասություն ունի³: Դեռևս հստակություն չկա առ այն, որ սույն օրինագիծը, որը ներկայացվել է Իսրայել պետության Քնեսետում Իսրայելի «Լիքուդ» ազգային-լիբերալ կուսակցության պատգամավորների կողմից, արդյո՞ք կհաստատվի Իսրայել պետության կառավարության կողմից⁴: 2017թ. հուլիսի վերջերին Քնեսեթի հատուկ հանձնաժողովը սկսեց այդ օրինագծի քննարկումը, որին երկրի վարչապետ Նեթանյահուն այդպես էլ չմասնակցեց:

Իսրայել պետության հրեական բնույթն ամրագրող օրենսդրական նախաձեռնությունները միանշանակ չեն ընկալվում Իսրայելի հրեա բնակչության շրջանում: Իսրայելի հրեա բնակչությունում հարցի առնչությամբ դիֆերոշումները պարզելու նպատակով 2014թ. դեկտեմբերի 1-3-ին Իսրայելի ժողովրդավարության ինստիտուտն իրականացրել է սոցիալոգում, որին մասնակցել է 18 տարեկանը լրացած 602 բնակիչ: Սոցիալոգման արդյունքները ցույց են տվել. Իսրայելի հրեա բնակչության 40%-ը գտնում է, որ օրինագիծը կվնասի Իսրայել պետության շահերին, հարցվածների 31%-ը

¹ «СМИ: выступив «харедим», Нетаниягу испортил отношения с евреями США», http://newsru.co.il/israel/26jun2017/net_105.html

² «Министры утвердили законопроект о еврейском характере государства Израиль», http://newsru.co.il/israel/07may2017/zakon_707.html

³ Նույն տեղում:

⁴ «В Израиле вернулись к закону о еврейском характере государства», <https://lenta.ru/news/2017/05/10/israel/>

կողմ է արտահայտվել օրինագծին՝ համարելով, որ այն համապատասխանում է երկրի շահերին¹: Հարցվածների 61.3%-ը կարծում է, որ Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուն աջակցում է այդ օրինագծին: Հարցվածների 88%-ը գտնում է, որ իրենց համար կարևոր է, որպեսզի Իսրայելը լինի ժողովրդավարական երկիր²:

Իսրայելի ՁՈւ-ն որպես հայրենադարձների ինտեգրման ինստիտուտ

Իսրայելի պաշտպանության բանակը (այսուհետ՝ ԻՊԲ) կարևոր նշանակություն ունի հայրենադարձներին Իսրայելի սոցիալ-հասարակական կյանքում ինտեգրման հարցերում: Մինչ Իսրայել պետության հիմնադրումը, 20-րդ դարի առաջին տասնամյակներին հրեական պետականության վերականգնմանն ուղղված հրեության ընդհատակյա զինված պայքարը ձևավորվեց հրեա կամավորականների շնորհիվ, որոնց նպատակն առաջին հերթին «հոգևոր ազգային օջախի» կամ «հոգևոր հայրենիքի» վերականգնումն էր: Իսրայել պետության հիմնադրման գաղափարը նրանց համար հոգևոր պայքարի դրսևորում էր: Հայրենադարձվածներից շատերը պատերազմել են Իսրայելի զինված ուժերում 1948թ. պատերազմում՝ սրտի ու խոճի թելադրանքով, դերակատարում են ունեցել նաև Հոլոքոսթը և այն կրկնվելու անթույլատրելիության համոզմունքը (հայրենադարձների մեջ լայն կիրառություն ունի «*Never again*»՝ Հոլոքոստի կրկնության անթույլատրելիության վերաբերյալ հայտնի ձևակերպումը): ԻՊԲ շարքերը հրեա կամավորականներով համալրելու գործընթացն առավել ինստիտուցիոնալ և համակարգված բնույթ ստացավ, երբ 1983թ. ստեղծվեց «Իսրայելի համար կամավորականների ազգային նախագիծը», որը հայտնի է որպես «*Sar-El*» (հապավում է, նշանակում է՝ «ծառայություն Իսրայելին»): Հիմնադրումից ի վեր կամավորականների ազգային նախագիծն ընդունել է ավելի քան 140.000 կամավորականի, որոնցից շատերը հետագայում վերջնականապես հայրենադարձվեցին Իսրայել:

ԻՊԲ զինծառայության կարևոր հարցերից մեկը վերաբերում է անձնակազմի հոգևոր-բարոյական արժեքներին: Երկրի ղեկավարությունն առանձնակի ուշադրություն է դարձնում ԻՊԲ կրթության չափանիշների բարձրացման հարցերին: Զինվորական հրամանատարությունն առաջնորդվում է այն մոտեցմամբ, որ երկրի ՁՈւ-ում կրթական բարեփոխում-

¹ «Закон о еврейском характере Израиля разделил общество», <http://ieshua.org/zakon-o-evrejskom-xaraktere-izrailya-razdelil-obshhestvo.htm>

²Նույն տեղում:

ները կատալիզատոր կարող են դառնալ նման բարեփոխումների համար հասարակության լայն շրջանակներում: Ըստ այդմ, ԻՊԲ-ն հանդիսանում է նաև կրթական, սոցիալական ինստիտուտ, որն առանցքային դեր է ունենում հասարակության կրթական չափանիշների բարձրացման ուղղությամբ: Սա կարևոր խթան է այդ թվում և հրեական համայնքների ներկայացուցիչների համար՝ Իսրայելի զինված ուժերում զինծառայության անցնելու միջոցով ստանալու հրեական ազգային-հոգևոր դաստիարակություն և հրեական արմատների հետ իրենց պատմական կապն այդպիսով վերականգնելու, վերիմաստավորելու առումով: Այս տեսանկյունից պետություն-սփյուռք կապերի զարգացման, Իսրայելում հրեական սփյուռքի ներկայացուցիչների ինտեգրման արդյունավետության խնդրում անգնահատելի են Իսրայելում, ԻՊԲ շրջանակներում, ինչպես և հրեական սփյուռքի մի շարք միջազգային, տարածաշրջանային կազմակերպություններում հրեություն-բանակ ձևաչափով նախաձեռնվող կրթական-ուսումնական բազմաբովանդակ նախագծերի և ծրագրերի դերն ու նշանակությունը:

ԻՊԲ-ում գործում են երիտասարդական գումարտակ-ակումբներ, որտեղ անչափահաս տարիքի պատանիները և աղջիկները (12-18 տարեկան), մինչ գորակոչային տարիքը, հնարավորություն են ստանում անցնելու ընդհանուր կրթական և ռազմական պատրաստություն (ծովային, ցամաքային, դեսանտային և այլ գորքեր): Սա կրթական-ուսումնական հարթակ է, որտեղ ամրապնդվում և զարգանում են դպրոց-զինված ուժեր ինստիտուցիոնալ հարաբերությունները: Դպրոց-բանակ ձևաչափը թույլ է տալիս պատանիներին և աղջիկներին, մինչ գորակոչային տարիքը ծանոթանալով զինվորական տեսական և գործնական-դաշտային գիտելիքներին, առավել հեշտ ինտեգրվել ԻՊԲ-ում ժամկետային պարտադիր զինծառայության առօրյային և պայմաններին:

Երիտասարդական նման կազմակերպություն-ակումբներից կարելի է առանձնացնել Իսրայելի «Գադնա» երիտասարդական-կամավորական կազմակերպությունը («երիտասարդական ջոկատներ»): «Գադնա»-ն մասնագիտացած է հիմնականում Իսրայելի և արտերկրի հրեական համայնքների 13-18 տարեկան անչափահասներին ԻՊԲ-ում զինծառայության նախապատրաստման բնագավառում: Կազմակերպությունը գործում ԻՊԲ հրամանատարության ներքո՝ գործունեության ընթացքում կոորդինացնելով աշխատանքները և համագործակցելով Իսրայելի տարբեր գերատեսչությունների և մասնավոր սեկտորը ներկայացնող կազմակերպությունների հետ: «Գադնա»-ի ջոկատները գործում են երկրի դպրոցներում և երիտասարդական ակումբներում:

Իսրայելում բավական ճկուն և զարգացած է ԻՊԲ-ում հայրենադարձ զինծառայողներին, նրանց ընտանիքներին սոցիալական, կրթական, առողջապահական և այլ բնույթի աջակցության համակարգը: ԻՊԲ-ն գործակցում է Իսրայել պետության գրեթե բոլոր պետական գերատեսչությունների, ինչպես նաև հասարակական, կամավորական և բարեգործական կազմակերպությունների ու անհատների հետ: Հայրենադարձ զինծառայողներին և նրանց ընտանիքներին աջակցության համակարգը ենթադրում է արտոնությունների ընձեռման հնարավորություն:

Ամփոփում

Պետություն-սփյուռք երկխոսության, փոխգործակցության իսրայելական փորձն ընդհանուր առմամբ արդյունավետ է, հաջողված: Թեև հրեությունում այսօր նույնպես առկա են պետություն-սփյուռք համագործակցության գաղափարական-կրոնական, կազմակերպչական, քաղաքական և այլ հակասություններ, այնուամենայնիվ, փաստենք, որ դրանք, թերևս, չունեն ընդգծված խորքայնություն և խոշոր հաշվով կարելի է դրանք լուծելի համարել:

Նշենք, որ նման գիտական հետազոտությունների իրականացումը կարևորվում է միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից: Հարցն ակտուալ է հայաստանյան իրականությունում, քանի որ դա հնարավորություն է տալիս գնահատել միջազգային փորձի այս օրինակի ուսանելիության նպատակահարմարությունը հայության համար՝ պետություն-սփյուռք փոխհարաբերությունների համատեքստում: Այստեղ խոսքը բնավ միջազգային փորձի ուսումնասիրության և անհրաժեշտության պարագայում այդ փորձի մեխանիկական կիրառման հնարավորության մասին չէ, այլ նկատի ունենք փորձի ուսանելիության նպատակահարմարության հարցը՝ հաշվի առնելով տվյալ հասարակության ազգային ինքնության, հոգևոր-գաղափարական և այլ առանձնահատկությունները:

Նոյեմբեր, 2017թ.

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՍՓՅՈՒՐԷ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ**

Կարեն Վերանյան

Ամփոփագիր

Հետազոտությունը նվիրված է հրեությունում պետություն-սփյուռք համագործակցության զարգացման հնարավորությունների և խնդիրների լուսաբանմանը:

Անդրադարձ է կատարվում հրեության ժողովրդագրական վիճակագրության պատմական նկարագրին, արդի միտումներին և հնարավոր կանխատեսումներին: Ուշադրություն է դարձվել պետություն-սփյուռք փոխգործակցության կառավարման, ազգային, հոգևոր-գաղափարական, ինչպես նաև քաղաքական իրավական, հայեցակարգային բաղադրիչների ուսումնասիրման հարցերին: Լուսաբանվել են պետություն-սփյուռք երկխոսության հիմնահարցերը Իսրայելի պաշտպանության, զինծառայության ոլորտների վերաբերյալ, որտեղ Իսրայելի զինված ուժերը ներկայանում են որպես պետություն-սփյուռք գործակցության և Իսրայելում հայրենադարձների ինտեգրման կարևոր ինստիտուտ:

ЕВРЕЙСКИЙ ОПЫТ СОТРУДНИЧЕСТВА ГОСУДАРСТВО-ДИАСПОРА: ВОЗМОЖНОСТИ И ПРОБЛЕМЫ

Карен Веранян

Резюме

Исследование посвящено освещению возможностей и проблем в контексте еврейского опыта развития сотрудничества государства и диаспоры. Дается экскурс исторической демографической статистики еврейства, а также нынешних тенденций и возможных прогнозов. Обращено внимание на вопросы изучения политических, правовых, концептуальных аспектов сотрудничества государство-диаспора. Освещены ключевые вопросы диалога государство-диаспора относительно обороны и воинской службы в Израиле, в ходе которых вооруженные силы Израиля представляются как важный институт сотрудничества государство-диаспора и интеграции репатриантов в Израиле.

THE STATE-DIASPORA PARTNERSHIP AMONG JEWRY: OPPORTUNITIES AND PROBLEMS

Karen Veranyan

Resume

The study addresses the opportunities and problems of the state-diaspora partnership among Jewry. The historical data, current trends and possible forecasts in demographic statistics are discussed. The problems of managing the state-diaspora cooperation, its national, spiritual/ideological, political, legal and conceptual components are in the focus of the study. The problems of the state-diaspora dialogue on the defense of Israel and military service, where the IDF is presented as an important institution for the state-diaspora partnership and integration of repatriates.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ
ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
(մաս 2)

Վահե Սարգսյան*

Բանալի բառեր՝ Վրաստան, Հայոց ցեղասպանության ճանաչում, Ջավախք, վրացալեզու մամուլ, հասարակական-քաղաքական միտք:

Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը Վրաստանի պետական և հասարակական-քաղաքական օղակների առջև մշտապես բարձրացրել են Վրաստանում գործող հայկական հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Այդպիսի մի պահանջագիր հղվեց նաև 2003թ. աշնանը՝ Վրաստանում սպասվելիք խորհրդարանական ընտրությունների նախօրեին: Վրաստանի ղեկավարությանն ու ընտրություններին մասնակցող ուժերին ուղղված պահանջագրին, որի տակ ստորագրել էին Ջավախքում գործող «Ջավախք», «Ակունք», «Ա-ինֆո», «Լեռնաշխարհ» և այլ կազմակերպություններն ու միությունները, անդրադարձան վրացական «Տրիբունա» և «Խվալինդելի դդե» թերթերը¹: Նույն օրերին, արձագանքելով Վրաստանի հայկական կազմակերպությունների նշյալ պահանջագրին, վրացական «Ռա՛ն-ռա՛ն» թերթը կարծիք է հայտնում, որ հայկական քաղաքական կազմակերպությունները նախընտրական շրջանում ակտիվանալով՝ վերջնագիր ներկայացրին, որի համաձայն՝ վերջիններս խոստացան 400.000 հայ քաղաքացիների քվեները տալ այն քաղաքական կուսակցությանը, որն ապագա խորհրդարանում 1915-16թթ. Թուրքիայի կողմից իրագործված Հայոց ցեղասպանությունը ճանաչելու երաշխիքներ կտա: Թերթն այնուհետև հրապարակում է հայության կողմից շրջանառված նշյալ պահանջագրի վերաբերյալ հնչեցված վրացի գործիչների տեսակետները: Այսպես՝ նախագահի միջազ-

* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պ.գ.թ.:

¹ «Ծրօձօյն» («Տրիբունա» - «Ամբիոն»), N 190, 2003, " ხვალინდელი დღე ", («Խվալինդելի դդե» - «Վաղվա օր»), N 190, 2003.

գային իրավական հարցերով խորհրդական Լ.Ալեքսիձեն նշել է հետևյալը. «Դա շատ նուրբ հարց է (խոսքը Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին է- Վ.Ս.): Գերմանական ֆաշիզմի դատապարտումից հետո պատմության մեջ չի ֆիքսվել ցեղասպանություն: Որպեսզի ճանաչվի ցեղասպանության փաստը, հսկայական աշխատանք է անհրաժեշտ: Հայկական «Ջավախք» կազմակերպության կողմից ներկայացված պահանջը սադրանք է և չի տեղավորվում որևէ շրջանակում: Հայաստանի կառավարության ղեկավարներն այս հարցը չեն դնում մեր իշխանությունների առաջ: Իսկ այն, որ «Ջավախքի» հետևում քաղաքական որոշ ուժեր են կանգնած, գաղտնիք չէ: Եթե մենք ճանաչենք հայերի ցեղասպանությունը, այդ դեպքում նախ պետք է ճանաչվի Իրանի ու Թուրքիայի կատարած վրացիների ցեղասպանությունը... Այս ամենից ելնելով՝ կրկնում եմ, որ նշված հարցը նույնիսկ օրակարգում դնելն անհիմն է»¹: Անդրադառնալով նույն հարցին՝ խորհրդարանական, «Բուրջանաձե-դեմոկրատներ» բլոկի ներկայացուցիչ Է.Թեոդորաձեն նշել է հետևյալը. «Մենք, ինչ խոսք, հարգում ենք զոհվածներին, բայց համարում եմ, որ Վրաստանի ղեկավարությունը չեզոք դիրք պետք է գրավի, քանի որ Վրաստանում ապրում են թուրքեր և հայեր: Պատմությունն իրենք կասի: Միգուցե երբևիցե ճանաչեն Հայկական ցեղասպանությունը, բայց ներկա պահին այն անընդունելի է»²:

Հայ-վրացական պատմական վեճերին, սահմանային հարցերին և Լոռու գավառի պատկանելությանն առնչվող ծավալուն հոդվածով է հանդես եկել վրացական մեկ այլ պարբերական՝ «Ջորջիան թայմսը»: Իր կատարած պատմական էքսկուրսում կրկին առաջ քաշելով հայերի կողմից վրացական տարածքների գավթման վերաբերյալ հին ու չարչրկված թեզը՝ հոդվածագիրը Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրում է. «Թուրքիայում տեղի ունեցած հայերի ցեղասպանության ժամանակ հայությանն օգնություն հասցնելու համար վրաց ժողովուրդն իր քրիստոնեական, բարեկամական և հարևանական ձեռքը մեկնեց»³: Այնուհետև ներկայացնելով Հայոց ցեղասպանությանը հաջորդող իրադարձությունները՝ հեղինակը շարունակում է. «Բայց 1918թ. մայիսի 28-ից հետո, երբ Հայաստանը ձեռք բերեց անկախություն (մեզանից 2 օր հետո միայն), այն ժամանակվա հայ ղեկավարության առաջին քայլերից մեկը Վրաստանի դեմ պատերազմի իրագործումն էր: Իսկ վրաց բանակը փետուրի նման հետ քշեց և գլխավորը ազատա-

¹ «ԳՏԹ-ԳՏԹ?» («ՌԻԱ ռ-ՆԱ Ռ» - «Ի՞նչ-ի՞նչ»), N 40, 2003.

² Նույն տեղում:

³ «ՋՅԹՅՅՅՅՅՅ ԹՅՅԹԵՅՅ» («Ջորջիան թայմս»), N 50, 2004.

գրեց *Լոռի-Տաշիրի (վրացական եզրույթով՝ «ლორე-ტაშორი») («Լոռե-Տաշիրի»)- Վ.Ս.) օկուպացված հատվածը (հասան մինչև Սանահինի այն եկեղեցին, որտեղ թաղված է Իվանե Մխարաբադեյին): Եղբայրության, բարիքի դավաճան հայ ղեկավարությանը հաջողվեց կանգնեցնել վրաց բանակի առաջընթացը (Անգլիայի ղեկավարությունն իր հերթին նպաստեց լարված իրավիճակի կայունացմանը): Այդպիսով Լոռի-Տաշիրը հայտարարվեց չեզոք, վիճելի գոտի: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո վրաց բոլշևիկներն առանց որևէ խնդրի զիջեցին վիճելի տարածքը «եղբայրների» ոչինչ չզիջող, ագրեսոր հայ բոլշևիկներին», - այսպես է ավարտում Լոռու գավառի վերաբերյալ իր պատմական անդրադարձը թերթի հրապարակագիրը¹:*

Արժարժեղով Ջավախքի հիմնահարցը և ամբողջությամբ արտատպելով հասարակական գործիչներ Ե.Շիրինյանի և Ա.Վարդապետյանի կողմից «Ջավախք» թերթում 1998թ. հրապարակված «Ջավախքի ինքնավար հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները (նախագիծ)» վերտառությամբ փաստաթուղթը², վրացական «Ռա՞ո-ռա՞ո» թերթը հրապարակում է Ավանդականների կուսակցության անդամ, պատմաբան Գ.Սանիկիձեի՝ այդ առթիվ հնչեցրած տեսակետները: Անդրադառնալով «Ջավախքի» հրապարակմանը և ջավախահայությանը հանիրավի մեղադրելով ինքնավարություն պահանջելու մեջ (թեկուզև Վրաստանի տարածքային ամբողջականության շրջանակներում)՝ թերթի հրապարակագիրն իր առաջնորդողում անդրադառնում է նաև Հայոց ցեղասպանության խնդրին. «*Հարևանների տարածքների նկատմամբ հավակնությունները՝ հայերի դարավոր այդ աներեւոյթությունները, որ այսօր էլ շարունակում են անջատողականները, միշտ էլ ունեցել են ողբալի ավարտ. ի պատասխան 1915թ. արևելյան Թուրքիայում («ճամբոնեջջոտ օյրոյէտ մօ» - հեղինակը նկատի ունի Արևմտյան Հայաստանը- Վ.Ս.) հայ անջատողականների խռովության՝ տեղի ունեցավ դաժան ողբերգություն, որից ոչ «դաշնակցականները» դասեր քաղեցին, ոչ էլ նրանց ախալքալքքի վկաները»³:*

¹Նույն տեղում:

²Հայտնի հասարակական գործիչներ, մտավորականներ Երվանդ Շիրինյանը և Արտաշես Վարդապետյանը ժամանակին հանրային քննարկման են ներկայացրել «Ջավախքի ինքնավար հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները (նախագիծ)» վերտառությամբ փաստաթուղթը (տե՛ս «Ջավախք», թիվ 2, 1998), որտեղ մանրակրկիտորեն մշակել և 35 ամփոփ կետերի մեջ ներկայացրել են Ջավախքի ապագա ինքնավար հանրապետության սահմանադրության դրույթները: Թերթի նույն համարում տպագրվել է նաև «Ջավախքի կարգավիճակը (նախագիծ): Ջավախքի տարածքային ինքնավարության ստեղծման հիմնավորումը» վերտառությամբ հրապարակումը, որտեղ ներկայացվում են Ջավախքի ինքնավարության անհրաժեշտության մասին պատմական և իրավական մի շարք հիմնավորումներ:

³«ՐճԹ-ՐճԹ?» («Ռա՞ո-ռա՞ո» - «Ի՞նչ-ի՞նչ»), N 18, 2005.

«Ախսի» թերթին տված իր ծավալուն հարցազրույցում Հայոց ցեղասպանության խնդիրն է շոշափում պատմաբան Ս.Մասխարաշվիլին: Անհիմն համարելով Վրաստանի շուրջ 650 եկեղեցիների հայկական լինելու փաստը և դրանց նկատմամբ հայկական պահանջատիրությունը, ինչպես նաև անդրադառնալով տարբեր շրջանների մի շարք պատմական անցքերին՝ վերջինս յուրովի է ներկայացնում նաև Հայոց ցեղասպանության պատճառները. «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 1915թ. Օսմանյան կայսրության առևտրի մեծ մասը բաժին էր ընկնում հայերին, նրանք Եվրոպայում ունեին ուժեղ սփյուռք: Դրա համար նրանց մոտ առաջացավ երազանք՝ Անտանտի պետությունների համար խաղալ 5-րդ շարասյան դեր: Նրանք ունեին զինված կազմավորումներ, սկսեցին դավաճանական գործունեություն ծավալել ընդդեմ Օսմանյան կայսրության, կազմակերպեցին ահաբեկչական գործողություններ»¹, - նշում է Ս.Մասխարաշվիլին և, տուրք տալով սեփական հայատյաց հայացքներին, ներկայացնում Կարսի շուկայում իբր տեղի ունեցած մի դեպք, որը, ըստ հեղինակի, հանդիսացավ այդ մեծ ողբերգության կատալիզատորը. «Երկու հայ վաճառականներ խաղում էին նարդի, երբ նրանց կողքով անցնում է մի հղի մուսուլման կին: Հայերը դադարեցրին խաղալ նարդի և սկսեցին վիճել՝ կնոջ որովայնում տղա՞ էր, թե՞ աղջիկ: Հետո նրանք դաշույնով կտրեցին հղի կնոջը երկու կեսի և դուրս հանեցին երեխային...»²: Հարցին, թե՞ մի թե դա տեղի է ունեցել, վրացի պատմաբանը միանշանակ հաստատում է և հավաստիացնում, որ, իբր, Վրաստանում այդ տեղեկությունը տարածվել է տվյալ ժամանակ Կարսում աշխատող վրացիների կողմից: Այդ դեպքին, իբր, հետևել են հայ-թուրքական բախումները: «Դրանից հետո հայերը կազմակերպում են խոշոր ապստամբություն Արևելյան Թուրքիայում (հեղինակը նկատի ունի Արևմտյան Հայաստանը- Վ.Ս.). Վանի, Բայբուրդի, Բիթլիսի տարածքներում, որոշ տեղերում նրանք անգամ գերազանցեցին հակառակորդին, բայց գործին միջամտեցին Օսմանյան կայսրության զինված ուժերը և սկսվեց հայերի անխիղճ ոչնչացումը Թուրքիայի ողջ պարագծի վրա, Ստամբուլից մինչ Կարս³: Այդ դժբախտության արձագանքները տարածվեցին Բաքվում նույնպես: Հայերի վրա այնտեղ ևս հարձակվեցին, բոլորին սպանեցին, ինչի արդյունքում հարյուրավոր տեղի վրացիներ ևս զոհվե-

¹ «ՏՕՆ» («Ախսի» - «Արշալույս»), N 49, 2005.

² Նույն տեղում:

³ Եթե հեղինակը նկարագրում է 1915թ. իրադարձությունները, ապա հարկ է փաստել, որ Արևելյան Հայաստանի մասը հանդիսացող Կարսի մարզը տվյալ շրջանում գտնվում էր ոչ թե Թուրքիայի, այլ ցարական Ռուսաստանի կազմում:

*ցին*¹: Ինչպես տեսնում ենք, Օսմանյան Թուրքիայի կողմից ծրագրված և միջազգային հեղինակավոր շրջանակների կողմից ճանաչված ու դատապարտված արևմտահայության ցեղասպանության իրագործումը ոչ միայն չի դատապարտվում վրացի պատմաբանի կողմից, այլև այն համարվում է պատմական օրինաչափություն և ստեղծված իրադրության մեջ Թուրքիայի պատասխան արձագանք: Ավելին՝ հնարովի պատմությունների և պատմական փաստերի խեղաթյուրման միջոցով հարցազրույցի հեղինակը, լիովին արդարացնելով թուրքական իշխանությունների ցեղասպանական քայլերը, փորձում է ողջ մեղքը բարդել հայերի վրա:

Ջավախքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացներին, հայ-վրացական պատմական վեճերին, ինչպես նաև Վրաստանում հայկական համարվող շուրջ 650 հայկական եկեղեցիների և այլ պատմաճարտարապետական հուշարձանների պատկանելության խնդրին «Գալուբա» թերթում անդրադառնում է վրաց շրջանակներում հայտնի հայագետ Բ.Արվելաձեն²: Հեղինակն իր հոդվածում խստորեն քննադատում է ինչպես ջավախահայերին՝ մեղադրելով նրանց ինքնավարություն պահանջելու մեջ, այնպես էլ հուշարձանագետ Ս.Կարապետյանին, որը շրջանառության մեջ է դրել Վրաստանի (այդ թվում՝ Ջավախքի) հայկական հուշարձանների վերաբերյալ գրքեր ու քարտեզներ, մեծանուն ճարտարապետ, հայ ճարտարապետության պատմության և տեսության լավագույն գիտակ Տ.Մարությանին³, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, համբավվոր հայագետ Ն.Տոկարսկուն⁴ և այլոց: Բ.Արվելաձեն ևս հավատարիմ է մնացել վրացական հասարակական-քաղաքական և գիտական-ակադեմիական շրջանակներում տիրող կարծրատիպերին և որպես իրադարձությունների այս կամ այն կերպ զարգացման հիմնական դերակատար ուժ համարել է հայ քաղաքական կուսակցություններից մեկին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը (ՀՅԴ): Իր հրապարակման մեջ կարմիր թելի նման տանելով ՀՅԴ գործունը՝ հեղինակը նշված քաղաքական կուսակցության՝ իր տեսանկյունից հակավրացական համարվող դերակատարումը տեսնում է գրեթե ամենուր՝ սկսած 20-րդ դարակզբի իրադարձություններից, ջավախքյան ներկայիս զարգացումներից մինչև հուշարձանագետ Ս.Կարապետյանի

¹ Նույն տեղում:

² «Զօլոժ» («Գալուբա» - «Դայլայլ, երգեցողություն»), N 4, 2005.

³ Նկատի է առնվում Տ.Մարությանի կողմից հրատարակված «Տայի ճարտարապետական հուշարձանները» (Ե., 1972) և «Հայ ճարտարապետության հուշարձաններ. խորագույն Հայք» (Ե., 1978) աշխատությունները:

⁴ Հեղինակը մատնացույց է անում Ն.Տոկարսկու հրատարակած «Архитектура Древней Армении» (Ե., 1946) աշխատությունը:

կողմից Վրաստանի հայկական հուշարձանների մասին քարտեզների և գիտական աշխատանքների հրատարակումը: Խոսելով 20-րդ դարասկզբի իրադարձությունների, «Մեծ Հայաստանի» մասին հրատարակված քարտեզների մասին՝ Բ.Արվելաձեն ևս, ինչպես վրացական գիտահասարակական շրջանակների ներկայացուցիչների ծանրակշիռ մասը, հայերի մեծագույն ողբերգության՝ ցեղասպանության պատճառները որոնում է ՀՅԴ, իր որակմամբ՝ «անհեռատես քաղաքականության» մեջ¹:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի օրերին՝ 2005թ. ապրիլի վերջին, հատուկ հրապարակմամբ հանդես եկավ «Ասավալ-դասավալի» թերթը²: Խոսելով երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղար, Օտոմանյան Թուրքիայի ՆԳ նախարար, մեծ վեզիր Թալեաթ փաշայի կարգադրությամբ կայսրության տարածքում մեկուկես միլիոն էթնիկ հայերի զանգվածային ոչնչացման մասին՝ թերթը նշում է, որ տեղի ունեցած սարսափելի ողբերգության իսկական պատճառների մասին այսօր էլ չի խոսվում կամ այդ փոքր ազգի դժբախտության պատմությունը ներկայացվում է կեղծված տեսքով: Խոսելով Թուրքիայում հայերի կազմակերպված սպանդի մասին՝ թերթը մեջ է բերում 90 տարի առաջ հնչեցված հետևյալ խոսքերը. «Այն, ինչը չհաջողվեց իրագործել թուրքական կայսրության երեք սուլթաններին, Թալեաթ, Էնվեր և Ջեմալ փաշաներին հաջողվեց իրագործել 24 ժամկա ընթացքում»: Հավելենք, որ թերթի՝ Հայոց ցեղասպանության խնդրին նվիրված նշյալ էջում հրապարակվել էին նաև ցեղասպանության տեսարաններ ներկայացնող երկու մեծադիր լուսանկարներ: Հրապարակման մեջ, որպես Հայոց ցեղասպանության իրականացման պատճառ, ընդգծվում է Ռուսաստանի դերակատարումը. «Թուրքիայի տարածքում հայ ազգի ցեղասպանությունը ռուսական կայսրության ոգեշնչանքն էր!...»³: Թերթը հայտնում է այն տեսակետը, որ ռուսների խորհրդով են հայերն ապստամբել Թուրքիայի դեմ՝ Ռուսաստանից ստանալով ինքնավարություն ունենալու հույսեր: Այդ ամենը, ըստ «Ասավալ-դասավալիի», ունեցավ ողբալի հետևանքներ՝ Թուրքիայի անապատներում մեկուկես միլիոն հայերի վերածելով մոխրի: Թերթն այնուհետև զուգահեռներ է անցկացնում Հայոց ցեղասպանության և Աբխազիայում 1992-1993թթ. տեղի ունեցած արյունալի բախումների միջև: Հոդվածի հեղինակները ևս, տուրք տալով վրացական շրջանակներում տիրապետող տեսակետներին, որպես Աբխազիայի վրացաբնակ վայրերում իրականաց-

¹ «ԳճԵՌԾՃ» («Գալոբա» - «Դայլայլ, երգեցողություն»), N 4, 2005.

² «ՆՆՆՆՆՆ-ՆՆՆՆՆՆ» («Ասավալ-դասավալի»), N 17, 2005.

³ Նույն տեղում:

ված կոտորածների գլխավոր դերակատարների, ռուսների կողքին հիշատակում են նաև «հյուսիսկովկասցի դահիճներին» և Աբխազիայի հայկական բնակավայրերի պաշտպանության համար կյանքի կոչված՝ Մ.Բաղդամյանի անունը կրող հայկական գումարտակը:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ իրականացվող հիշատակի միջոցառումների օրերին հայտարարությամբ է հանդես եկել նաև Սամցխե-Ջավախքի նահանգում Վրաստանի նախագահի լիազորներկայացուցիչ (նահանգապետ) Գոգա Խաչիձեն, որի խոսքերը հրապարակվել են «Ռեզոնանսի» թերթի 2005թ. ապրիլի 23-ի համարում. «...Ցեղասպանությունը պետությունը պաշտոնապես չի ճանաչում, բայց Վրաստանում բնակվող հայերը լիարժեք իրավունք ունեն համապատասխան արժանապատվությամբ նշել այդ օրը»,- իր հայտարարությունում մասնավորապես նշել է Սամցխե-Ջավախքի նահանգապետը¹: Շուրջ 3,5 տարի (2005թ. մարտ - 2008թ. հոկտեմբեր) Սամցխե-Ջավախքում որպես Վրաստանի նախագահի լիազորներկայացուցիչ պաշտոնավարած Գոգա Խաչիձեն ևս, ինչպես իր նախորդները և հաջորդները, աչքի չի ընկել ընդգծված հայամետ հայացքներով: Այդուհանդերձ, եթե հաշվի առնենք Հայոց ցեղասպանության հանդեպ վրացական միջավայրում առկա կարծրատիպերը, սույն հայտարարությունը կարելի է համարել Սամցխե-Ջավախքի հայության և, ընդհանուր առմամբ, ողջ վիրահայության հանդեպ հարգանքի դրսևորում:

Հայ-վրաց-ադրբեջանական հարաբերություններին և այսրկովկասյան տարածաշրջանի լարված օջախների խնդրին է անդրադառնում «Ախալի թափա» թերթը: Հողվածագիրը լարվածության հնարավոր օջախներ է դիտարկում Վրաստանի հարավում հոծ բնակվող ադրբեջանցիների և հայերի զբաղեցրած տարածքները՝ Քվեմո Քարթլի և Սամցխե-Ջավախք նահանգները, որոնցից առաջինում, ըստ հեղինակի, առկա են սոցիալական բազում խնդիրներ, իսկ երկրորդում՝ նաև անջատողական տրամադրություններ²: Խոսելով վրաց-հայկական և վրաց-ադրբեջանական հարաբերությունների մասին՝ հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ Վրաստանը չպետք է թույլ տա ջերմ հարաբերությունների վրա բացասաբար ազդող որևէ քայլ: Վրաստանն ու Ադրբեջանը, ըստ Գ.Ուձիլաուրիի, ունեն նմանատիպ հիմնահարց, որն է՝ տարածքային ամբողջականության խախտված լինելը: Ճիշտ է, հեղինակը նշում է, որ վրացիները բոլորից շատ ադրբեջանցիներին են համակրում, իսկ հայերը երկու երկրների էթնիկ բախումներում պայքարել

¹ «ՐԵԶՈՆԱՆՍ» («Ռեզոնանսի»), N 104, 2005.

² «ՏԵԼՎԵՍ ԹԵՐԵՎ» («Ախալի թափա» - «Նոր սերունդ»), N 152, 2005.

են հակառակորդի կողմից¹, այդուհանդերձ, թուրք-մեսխեթցիների՝ Չավախքում վերաբնակեցման հարցում հեղինակի տեսակետները բավական անաչառ են: Խստորեն դեմ արտահայտվելով շուրջ 300.000 թուրք-մեսխեթցիների վերաբնակեցմանը Սամցխե-Չավախքում՝ հեղինակը փաստում է, որ այդ գործընթացն իր հետ բերելու է Վրաստանի վրա Թուրքիայի անցանկալի ազդեցության մեծացմանը և իսլամական գործոնի ամրապնդմանը, ինչը բոլորովին չի բխում Վրաստանի շահերից: Եզրակացնելով այդ ամենը՝ հեղինակը նշում է, որ ելնելով ինչպես պատմությունից, այնպես էլ իսլամական աճող գործոնից (ինչից զգուշանում է ողջ Եվրոպան), Թուրքիայի հետ սիրախաղերը երբեք չեն կարող տեղավորվել Վրաստանի ռազմավարական շահերի շրջանակներում: Հենց այս շրջանակներում էլ Գ.Ուձիլաուրին խոսում է Հայոց ցեղասպանության մասին՝ նշելով, որ հայ-թուրքական հարաբերությունների վառ օրինակն են 1915-1917 թվականները: «... Կարճ ասած, եթե Չավախք տեղափոխվեն թուրք-մեսխեթը, հնարավոր է նոր ցեղասպանություն կատարվի, որտեղ անհայտ է, թե ովքեր կհաղթեն՝ հայերը, թե Ուզբեկստանից վտարված թուրք-մեսխեթը: Պաշտոնական Անկարան, ինչ խոսք, կաջակցի թուրք-մեսխեթին, իսկ դա կարող է վերաճել կոմկասայան մեծ պատերազմի», - եզրակացնում է թերթը²: Առարկայական է նաև հեղինակի եզրահանգումն այն մասին, որ Թուրքիայից եկող վտանգներին դիմակայելու համար Վրաստանին ձեռնտու է իր հարավային սահմանին ունենալ ուժեղ և հարուստ տարածաշրջան՝ Սամցխե-Չավախք, հարուստ՝ հայերով և վրացիներով: Ցավոք, երկու ժողովուրդների փոխադարձ շահերը շոշափող այսպիսի առողջ դատողությունների չափազանց քիչ ենք հանդիպում վրացական մամուլում:

Վերադառնալով վրացական հին ու չարչրկված տեսակետներին՝ «Ախսի» թերթն իր հերթական համարում հրապարակում է հայությանն ուղղված խիստ քննադատություններով և անգամ վիրավորական արտահայտություններով լի ծավալուն մի հոդված³: Անդրադառնալով «ավանդական» թեմաներին՝ «հայկական դավաճանությանը», «ջավախահայության անջատողականությանը», «հայության կողմից վրացական հուշարձանների գավթմանը կամ ոչնչացմանը», «Մ.Բաղրամյանի անվան հայկական գումարտակի արյունալի գործողություններին» և այլն, թերթը կրկին «Դաշնակցություն» կուսակցության գործունեությամբ է պայմանավորում Թուրքիա-

¹ Հեղինակը նկատի ունի 1990-ական թթ. տեղի ունեցած արցախյան ազատագրական պայքարը և աբխազահայերի ինքնապաշտպանական քայլերը:

² «Տեճեճօ օճօճ» («Ախսի թառփա» - «Նոր սերունդ»), N 152, 2005.

³ «Տոնօ» («Ախսի» - «Արշալույս»), N 11, 2006.

յում 1915թ. իրականացված Հայոց ցեղասպանությունը և ավելացնում, որ, նրանք, ովքեր փրկվեցին այդ կոտորածներից, փախան-պատսպարվեցին Վրաստանում, բնակվեցին այսօրվա Ջավախքում:

«Հայոց ցեղասպանությունը Ռուսաստանի՝ հրահանգով էր: Հայ պատմաբանը օտար պատմական փաստերի մասին է բարձրաձայնում» խորագրի տակ «Ռեզոնանսի» թերթն անդրադառնում է Հայոց ցեղասպանության 91-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին. *«Հայ ազգը ապրիլի 24-ին ևս մեկ անգամ հիշեց 1915-1923թթ. ողբերգությունը: Այդ օրը թիֆլիսահայությունը Թուրքիայի դեսպանատան առջև բողոքի ակցիա անցկացրեց... Թուրքիայի դեսպանատան առջև տեղի ունեցող բողոքի ակցիային մասնակցում էին 30-ից ավելի հայկական կազմակերպություններ: Դա նվիրված էր Հայոց ցեղասպանության 91-ամյակին: Ակցիայի մասնակիցների հայտարարմամբ ապրիլի 24-ը հիշատակի օր է, որին զոհ է գնացել 1.500.000 հայ, որոնց թուրքերն են սպանել 1915-1923թթ.»*, - գրում է թերթը¹ և, Հայոց ցեղասպանության կազմակերպման մեջ մեղադրելով Ռուսաստանին, մեջբերում Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ և ռազմական օկրուգի գործերի հրամանատար Գ.Գոլիցինի խոսքերը. *«Ես միայն այն ժամանակ կհանգստանամ, երբ Թիֆլիսի թանգարանում կբացվի ցուցանակ, որտեղ գրված կլինի, թե արդյոք հայեր ապրել են Կովկասում»:* Թերթն այնուհետև հրապարակում է հայ պատմաբան Ռ.Համբարձումյանի՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող մի շարք տեսակետներ, ով ևս այդ ողբերգության մեջ մեղադրում է Ռուսաստանին. *«Հայոց ցեղասպանությունը Ռուսաստանը և Թուրքիան հավասար մասնակցությամբ իրականացրին»:* Հայոց ցեղասպանության կազմակերպման մեջ Ռուսաստանի դերակատարումն առավել ցցուն դարձնելու համար «Ռեզոնանսին» մեջ է բերում նաև իր հայացքներում ընդգծված հակահայ գործիչ, դիվանագետ, 1895-1896թթ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա.Լոբանով-Ռոստովսկու՝ 1895թ. Թուրքիայի սուլթանին ուղղված հետևյալ խոսքերը. *«Կոտորե՛ք, Ձերդ գերագնացություն, կոտորե՛ք»:* Խոսքն այստեղ վերաբերում է Ա.Համիդ 2-րդի կողմից 1894-1896թթ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում իրականացված հայության զանգվածային ջարդերին:

Շուտով մեկ այլ հարցազրույց է հրապարակվում «Ախալի թաոբա» թերթում²: Հարցազրույցի հեղինակ, քաղաքագետ Ս.Յինցաձեն, լայնորեն անդրադառնալով Ջավախքին, եկեղեցական պատկանելության խնդիրներին

¹ «რეზონანსი» («Ռեզոնանսի»), N 114, 2006.

² «ახალი თაობა» («Ախալի թաոբա») - «Լոբ սերունդ»), N 190, 2006.

և տարածաշրջանային զարգացումներին, ամենախիստ կերպով քննադատում է ն՝ ջավախահայերին՝ ինքնավարություն պահանջելու և տարբեր այլ հարցեր բարձրացնելու համար, և՛ ՀՀ-ին՝ ՌԴ-ի հետ ռազմավարական հարաբերությունների համատեքստում իբր հակավրացական քաղաքականություն իրականացնելու, ՀՀ-Վրաստան-ՌԴ (Աբխազիայի տարածքով) երկաթուղու վերագործարկման մասին առաջարկով հանդես գալու, ինչպես նաև Վրաստանում բազմաթիվ եկեղեցիների հանդեպ պահանջներ ներկայացնելու համար, և՛ ՌԴ-ին՝ Վրաստանի հանդեպ իրականացվող օկուպացիոն քաղաքականությունը խորացնելու և Վերին Լարսի սահմանային անցակետը փակելու համար և այլն: Քաղաքագետը հպանցիկ շոշափում է նաև Հայոց ցեղասպանության փաստը և ցիտում Վրաստանի նախագահի խորհրդական Գ.Գաչչիլաձեին, որը նախկինում տված իր հարցազրույցներից մեկի ժամանակ հայտարարել էր, թե Թուրքիայում կատարված հայերի ցեղասպանության մեջ խառնված է նաև Ռուսաստանի ձեռքը: Նույն շրջանում Հայոց ցեղասպանությանն առնչվող անդրադարձ է տպագրում «Ջորջիան թայմսը»: «Հայերն ազգությունը փրկեցին Վրաստանի միջոցով» խորագրի տակ թերթը գրում է. *«1915թ. թուրքերի, հայերի ու քրդերի մեջ տեղի է ունեցել բախում, որի արդյունքում 1,5 մլն արմեն է մահացել: Չոհերն ավելի շատ կլինեն, եթե վրացիները հազարավոր հայերի ապաստան չտային: Նրանք բնակվեցին Սամցխե-Ջավախքում, Քվեմո Քարթլիում և Թիֆլիսում»¹:*

Վրացական մամուլը հայերին հուժկու քննադատության ենթարկեց նաև 2009թ. սեպտեմբերին: Վիրահայության (հատկապես՝ ջավախահայության) և ՀՀ-ի վերաբերյալ քննադատական բնույթի բազմաթիվ հոդվածների և հրապարակումների առիթ էր հանդիսացել ՀՀ նախագահի՝ Ջավախքում հայերենին մարզային լեզվի կարգավիճակ շնորհելու, ՀԱԵ Վիրահայոց թեմի իրավական գրանցման և Վրաստանում հայկական հուշարձանների պահպանության վերաբերյալ սեպտեմբերյան հայտարարությունը: 2009թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ նախագահը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. *«Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը, բովանդակային առումով, պետք է բխի «Ինտեգրում առանց ձուլման» սկզբունքից: Ինտեգրումը, այս դեպքում, պետք է ենթադրի վիրահայերի՝ Վրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի*

¹ «ჯორჯიან თაიმსი» («Ջորջիան թայմս»), N 24, 2006.

ամրագրումը: Կարծում եմ, որ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, Հայկական Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության մթնոլորտի խորացմանը: Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»¹:

ՀՀ նախագահի կողմից նախադեպը չունեցող սույն հայտարարությանն անմիջապես արձագանքեց «Սաքարթվելոս ռեսպուբլիկան»²: Ծավալուն հրապարակման մեջ հողվածագիրը նախապես հիշատակում է վրացական «ավանդական» տեսակետները հայերի՝ Վրաստանում հյուր լինելու, պատմության ընթացքում հայերի՝ վրացիներին մշտապես դավաճանելու, Մ.Բաղրամյանի անվան արխագահայկական գումարտակի վերաբերյալ և անցնում ՀՀ նախագահի վերոնշյալ հայտարարության քննարկմանը: Հողվածագիրը, «հիմարություն», «սադրանք» որակելով հայտարարությունը, նշում է, որ ՀՀ նախագահը ծանոթ չէ Վրաստանի սահմանադրությանը, որով ամրագրված են երկու պետական լեզուներ՝ վրացերենը և արխագերենը: Հրապարակագիրն իր խոսքում մեղադրում է Վրաստանի իշխանություններին, որոնց ապաշնորհ և անհեռատես քաղաքականության արդյունքում է նման, հեղինակի վառ բնորոշմամբ, «դաշնակցական պահանջներով» հանդես եկել ՀՀ նախագահը: Զարգացնելով «հայերի՝ Վրաստանում հյուր լինելու և Վրաստանին մշտապես դավաճանելու» թեման՝ հեղինակը շոշափում է նաև Հայոց ցեղասպանության խնդիրը և նշում, որ թուրքերի իրագործած ցեղասպանությունից հայերին կրկին փրկեցին վրացիները, և փախստականները վրացական հանդուրժողականության, գրկախառնության և տուժածներին փայփայելու շնորհիվ այլևս հայրենիք չվերադարձան: Հրապարակման ավարտին, որպես Վրաստանին ամենահավատարիմ ազգ, նշվում են հրեաները:

2009թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում ՀՀ և ԹՀ արտգործնախարարներ Է.Նալբանդյանի և Ա.Դավությանի կողմից ստորագրվեցին ՀՀ-ի և ԹՀ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և ՀՀ-ի և ԹՀ-ի միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին գույգ արձանագրությունները: Արձանագրությունների ստորագրմամբ

¹ Հայաստանի Հանրապետություն, N 168, 2009:

² «საქართველოს რესპუბლიკა» («Սաքարթվելոս ռեսպուբլիկա» - «Վրաստանի հանրապետություն»), N 175, 2009:

պայմանավորված ՀՀ-ԹՀ դիվանագիտական հարաբերությունների հնարավոր հաստատմանը, այդ շրջանում ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի արտասահմանյան ճամփորդություններին և հայկական սփյուռքի հետ հանդիպումներին, ինչպես նաև 2008թ. վրաց-օսական օգոստոսյան պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակի քննությանն է անդրադառնում «Ասավալ-դասավալի»¹: Թերթը հայ-թուրքական հնարավոր հաշտեցումը և հարաբերությունների հաստատումն ինչ-որ տեղ կապում է Վրաստանի կրած պարտության և տարածաշրջանում նրա դիրքերի թուլացման հետ: Հողվածագրի կարծիքով՝ տվյալ շրջանում ՀՀ-ն, ՌԴ-ի և ԱՄՆ-ի աջակցությամբ խորացնելով ճանապարհատրանսպորտային հարաբերությունները Թուրքիայի և Իրանի հետ, դառնում է Չինաստանը Պարսից ծոցի և Եվրոպայի երկրների հետ կապող տարանցիկ պետություն, փոխարենը՝ Վրաստանը, 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո կորցրեց ինչպես տարածքները, այնպես էլ աշխարհաքաղաքական նշանակությունը: Քննարկելով ՀՀ-Թուրքիա հարաբերությունների հաստատման առթիվ ստորագրված արձանագրությունները և ՀՀ նախագահի սփյուռքյան այցելությունները՝ թերթը լայնորեն շոշափում է նաև Հայոց ցեղասպանության թեման: Ելնելով արձանագրություններում տեղ գտած դրույթներից՝ հրապարակագիրը փաստում է, որ, 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո, շուրջ մեկ տարվա ընթացքում ՀՀ ղեկավարությանը հաջողվեց երկրի ներսում հասնել կոնսենսուսի, և ՀՀ հասարակությունը, հանուն երկրի ապամեկուսացման և աշխարհաքաղաքական նոր գործառույթների ձեռքբերման, պատրաստ էր երկրորդ պլան մղել Թուրքիայում իրագործված մեկուկես միլիոն հայերի ցեղասպանության փաստը: Այդուհանդերձ, ըստ թերթի, հայկական սփյուռքը, ի տարբերություն ՀՀ հասարակության, կտրականապես դեմ է հանդես եկել հայ-թուրքական նման մերձեցմանը: Թերթն այնուհետև ներկայացնում է այդ օրերին հայկական սփյուռքի տարբեր հատվածներում իրականացված բողոքի հանրահավաքները, որոնց միջոցով սփյուռքահայությունը ՀՀ ղեկավարությանը մեղադրում էր դավաճանության և 1915թ. Հայոց ցեղասպանությանն առանձնակի նշանակություն չտալու համար²:

Ամփոփելով՝ կատարենք հետևյալ եզրահանգումները.

- ԽՍՀՄ փլուզմամբ և անկախ պետությունների կազմավորմամբ առաջացած նոր իրողությունների պայմաններում հնարավոր դարձավ նախկինում քողարկված բազմաթիվ խնդիրների անդրադառնալ նորովի:

¹ «Տեղեկատվություն» («Ասավալ-դասավալի»), N 40, 2009.

² Նույն տեղում:

Հայոց ցեղասպանության խնդրի հանդեպ վրաց պետական մարմինների և հասարակական-քաղաքական շրջանակների՝ հետխորհրդային շրջանում պահպանած լռությունը խախտվել է 2000-ական թթ.:

- 21-րդ դ. առաջին տասնամյակում Հայոց ցեղասպանության հարցը վրաց հասարակական-քաղաքական կազմակերպությունների շրջանակներում արծարծվել է եզակի դեպքերում: 2002թ. Վրաստանի հայազգի խորհրդարանական առաջին անգամ խոսեց Հայոց ցեղասպանության մասին և առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել 1,5 մլն անմեղ զոհերի հիշատակը, որին ազգությամբ ադրբեջանցի խորհրդարանականներն արձագանքեցին բուռն դժգոհություններով և սադրիչ գործողություններով: Խնդրին միջամտեց խոսնակ Ն.Բուրջանաձեն և առաջարկեց հարգել ոչ միայն հայ, այլև բազմաթիվ այլ ժողովուրդների անմեղ զոհերի հիշատակը:
- Վրաց պետական և հասարակական-քաղաքական շրջանակները, չցանկանալով փչացնել հարաբերությունները հարևաններ Թուրքիայի և Ադրբեջանի հետ և խնդիրներ չստեղծել երկրի հարավում հոծ բնակվող ադրբեջանցիների շրջանակներում, ինչպես նաև տուրք տալով ռազմաքաղաքական, առևտրատնտեսական և տարանցիկ ոլորտներում նշյալ երկրներից ունեցած խոր կախվածությանը, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում հանդես են գալիս առավելապես չեզոք դիրքերից:
- Թեև ոչ հաճախակիորեն, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության հարցն այս կամ այն կերպ արծարծվել է նաև վրաց տպագիր մամուլում: Վրացալեզու թերթերի խմբագիրները և հրապարակագիրները հիմնականում չեն ժխտում Հայոց ցեղասպանության փաստը: Մեր ձեռքի տակ առկա բազմաթիվ այդպիսի նյութերում «հայերի ցեղասպանություն» արտահայտությունը չի չափերտավորված և նշյալ եզրույթի կողքին չի գործածված «այսպես կոչված» արտահայտությունը, ինչը ևս փաստում է այն մասին, որ վրաց հասարակական-քաղաքական միտքը չի ժխտում 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդին ծրագրված կերպով ցեղասպանելու իրողությունը:
- Վրացալեզու տպագիր մամուլը Հայոց ցեղասպանության խնդրին հատուկ ձևով անդրադարձել է սպրիլյան օրերին, երբ աշխարհի շատ երկրների հայկական շրջանակներում, այդ թվում նաև Վրաստանում, իրականացվում էին հիշատակի միջոցառումներ: Մնացյալ դեպքերում այդպիսի ակնարկների կամ հրապարակումների հիմնական առիթ են

ծառայել հայաբնակ Ջավախքում տեղի ունեցած իրադարձությունները կամ ջավախահայության կողմից առաջ քաշված պահանջները, պատմական Լոռու գավառի պատկանելության հարցի արծարծումը, ՀՀ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների կողմից Վրաստանին կամ վիրահայոց խնդիրներին առնչվող այս կամ այն դիրքորոշումները, Ռուսաստանի կողմից Այսրկովկասի հանդեպ վարվող քաղաքականության ինչ-ինչ դրսևորումներ և այլն: Այսինքն՝ նման պարագաներում վրաց հրապարակագիրները ոչ թե հատուկ կերպով լուսաբանել են Հայոց ցեղասպանության թեման, այլ տվյալ խնդիրն այս կամ այն կերպ քննարկման են արժանացրել՝ դրա միջոցով հավելյալ կերպով արձագանքելով վերոնշյալ մի շարք խնդիրների:

- 21-րդ դ. վրաց տպագիր մամուլում Հայոց ցեղասպանության մասին խոսելիս խախտված է պատճառահետևանքային կապը. վրաց հասարակական-քաղաքական միտքը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ չի մեղադրում թուրքական իշխանություններին, փոխարենն անխնա մեղադրվում է ինչպես Ռուսաստանի կայսրությունը, որն Առաջին աշխարհամարտում օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմում հայերին փորձել է վերածել 5-րդ շարասյան, այնպես էլ հայ քաղաքական կուսակցություններից Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ), որը, ըստ վրաց հեղինակների, 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին տարածել է Մեծ Հայաստանի քարտեզը, պայքարել Թուրքիայից հայկական հողերի անջատման համար, որի պատճառով էլ սեփական ժողովրդի դեմ է գրգռել օսմանյան կառավարությանը:

Սարտ, 2018թ.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ
ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ (մաս 2)**

Վահե Սարգսյան

Ամփոփագիր

Հայոց ցեղասպանության խնդիրն արծարծվել է վրացական տպագիր մամուլում: Ներկա աշխատանքում քննության են առնվել 21-րդ դարի առաջին տասնամյակի վրացալեզու տպագիր մամուլի նյութերը, ներկայացվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ վրաց հասարակական-քաղաքական մտքի տարաբնույթ տեսակետները, կարծիքները և մեկնաբանությունները: Վրաց հեղինակները Հայոց ցեղասպանության մասին խոսելիս ընդհանուր առմամբ խախտել են պատճառահետևանքային կապը. վերջիններս Հայոց ցեղասպանության

ծրագրման և իրագործման մեջ մեղադրում են ոչ թե թուրքական իշխանություններին, այլ Ռուսաստանի կայսրությանը, որն առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմում հայերին փորձել է վերածել 5-րդ շարասյան, ինչպես նաև հայ քաղաքական կուսակցություններից Հայ Յեղափոխական Դաշնակցությանը (ՀՅԴ), որը, ըստ վրաց հեղինակների, պայքարել է Թուրքիայից հայկական հողերի անջատման համար, որի պատճառով էլ սեփական ժողովրդի դեմ է գրգռել օսմանյան կառավարությանը:

ЗАТРАГИВАНИЕ ВОПРОСА О ГЕНОЦИДЕ АРМЯН В ПОСТСОВЕТСКОЙ ГРУЗИИ (часть 2)

Vahe Sarkisyan

Резюме

Вопрос о проблеме Геноцида армян был поднят в грузинских, грузиноязычных печатных СМИ. Исследуя грузиноязычные печатные СМИ первой декады XXI в., в статье представлены различные взгляды, мнения и комментарии грузинской общественно-политической мысли о Геноциде армян. Говоря о Геноциде армян, грузинские авторы в целом нарушают причинно-следственную связь: последние в планировании и совершении Геноцида армян обвиняют не турецкие власти, а Российскую империю, которая пыталась превратить армян в пятую колонию против Османской Турции во время Первой мировой войны, также армянскую партию «Дашнакцутюн», которая, по мнению грузинских авторов, боролась за отделение армянских земель от Турции, что и настроило османского правительства против армянского народа.

RAISING THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN POST-SOVIET GEORGIA (part 2)

Vahe Sarkisyan

Resume

The issue of the Armenian Genocide has been discussed in the Georgian printed media. This work examines the materials from the Georgian printed media of the first decade of the 21st century, and presents the opinions, viewpoints and comments of the Georgian social-political figures. While touching upon the issue of the Armenian Genocide the Georgian authors have generally ignored the cause-effect correlation: the blame of organization and commitment of the Armenian Genocide is put not on the Turkish authorities but the Russian Empire, which made an attempt during World War 1 to form a fifth column out of the Armenians, as well as on the Armenian parties, such as the Armenian Revolutionary Federation (ARF), which, according to the Georgian authors, had fought to detach the Armenian territories, thus instigating the Ottomans against their nation.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մարիամ Մաժեշ

Բանալի բառեր՝ սոցիոլոգիա, երաժշտություն, մշակույթ, ազդեցություն, ազգային ժողովրդական երաժշտություն, ավանդական երաժշտություն:

Մշակույթը կարող է դիտվել որպես ուժ, որը տարբերակում և միավորում է երկրագնդի վրա ապրող մարդկանց: Միջմշակութային հաղորդակցության ոլորտի հայտնի գիտնականներ Ջ.Մարտինը և Թ.Նակայաման անդրադառնում են ընկալման դիալեկտիկ մոտեցմանը, մասնավորապես՝ թե ինչպես է մշակույթն ազդում այն ձևերի և ուղիների վրա, որոնցով մենք մտածում և ապրում ենք: Նրանք սահմանում են դիալեկտիկ հեռանկարներ՝ «ենթադրելով, որ մշակույթը և հաղորդակցությունը փոխկապակցված և հակադարձ մեծություններ են [1, p. 95]: Մշակույթը՝ որպես տարբեր էթնիկական խմբերի միջև բարդ և ընդլայնված երևույթ, ունի զանազան սահմանումներ, որոնք ծագում են որպես սոցիալական գործընթացների արդյունք: Երբ մշակույթի որևիցե կրող մեկ այլ մշակույթից ստանում է որոշակի մշակութային հաղորդագրություններ, առաջանում է խաչաձև մշակութային հաղորդակցություն: Խաչաձև մշակութային հաղորդակցությունը՝ որպես տարբեր ժողովուրդների գաղափարների և հասկացությունների, մշակութային բարիքների փոխանակման գործընթաց, տեղի է ունենում տվյալ ժողովուրդների միջև և հանդիսանում է մշակութային ընկալում: Խաչաձև մշակութային հաղորդակցությունը տեսական և գործնական առումով որոշակի համատեքստում, օրինակ՝ զբոսաշրջության, լրագրության, դասավանդման, հետազոտության, գիտության բնագավառներում, կրոնում և արվեստում, ունի միակողմանի և երկկողմանի հոսքեր [2, p. 98]: Երաժշտության սոցիոլոգիան փորձում է բացահայտել, թե ինչ ազդեցություն է թողել երաժշտությունն ունկնդրի վրա,

¹ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ:

ինչպես է երաժշտությունը հաղորդակցվում և երաժշտության ինչ գործառույթ է ազդում հասարակության վրա: Ժողովրդական երաժշտությունը մշակութային տարրերից մեկն է, որոնցից յուրաքանչյուրը շատ կարևոր է, ինչպես, օրինակ, հայկական մշակույթը: Երաժշտությունը մնացած արվեստների պես ստեղծվում է մշակութային, սոցիալական և քաղաքական համատեքստում: Ըստ Լ. Դուլերի՝ «մշակույթ» եզրույթն առավելագույնս օգտագործվում է մարդկանց գիտական համաժողովներում [3, pp. 7, 148]:

Քննարկելով իրանական և հայկական մշակույթների երաժշտական կապերը՝ պետք է նշել, որ հայկական երաժշտությունը ոչ մի ուրիշ երաժշտության նման չէ, քանի որ ունի հատուկ քաղցրահնչյուն նախշեր և հարուստ հնչեղություն: Այս յուրօրինակությանը հասնում են հայկական ազգային գործիքների օգտագործման արդյունքում, որոնք մեզ են հասել վաղ միջնադարյան ժամանակաշրջանից, ինչպես ջութակի նախատիպը հանդիսացող փանդիորը կամ բամբիորը, լարային գործիքներից՝ տավիղը և քնարը, փողային գործիքներից՝ դուդուկը, զուռնան և ավագփողը, հարվածային գործիքներից՝ դհոլը: Հնագույն ժամանակներից մարդիկ երգել են ազգային ծիսական, աշխատանքային և ռազմական երգեր: Մինչև մ.թ. 3-րդ դարը Իրանն ավելի մեծ ազդեցություն է ունեցել հայկական մշակույթի վրա, քան մյուս հարևանները: Երկու ժողովուրդներ կիսել են կրոնական, քաղաքական և լեզվական տարրեր և սովորույթներ, նույնիսկ մի ժամանակահատվածում ունեցել են միևնույն թագավորական տոհմը: Այնուհետև առաջ են եկել Սասանյանները և Հայաստանի դավանափոխությունը քրիստոնեության 4-րդ դարում [4, p. 3]: Չնայած տարբեր անվանումներին (Մարաստան, Պարսկաստան կամ Իրան) և մ.թ.ա. 6-4-րդ դդ. Աքեմենյան կամ ավելի ուշ՝ Պարթևական և Սասանյան հասարակարգերին, Սաֆյանների գահակալությանը միջնադարյան կամ վաղ միջնադարյան ժամանակահատվածում, Քաջարների կամ ներկայիս իսլամական հանրապետությանը, հայ և պարսից ժողովուրդները կիսել են իրենց հինավուրց կապը, որը ծագել է աշխարհագրական դիրքից և նմանատիպ մշակույթից [5]: Հիմնարար խնդիրներից մեկը, հատկապես ժամանակակից աշխարհում, մշակույթի և ապամշակութայնացման խնդիրն է: Այն կատարվում է ոչ միայն ժողովրդի և մարդկանց յուրօրինակության կամ անհատականության արդյունքում, որը հիմնված է սահմանման և արտահայտության վրա, այլ նաև մարդկային կյանքի որակի և մարդկային փոխազդեցության մշակույթի և ապամշակութայնացման կարևորության արդյունքում [6, p. 34]:

Հայկական ազգային, պրոֆեսիոնալ և հոգևոր երաժշտությունը միշտ

կարևոր գործոն է հանդիսացել հայկական արժեքների և մշակույթի զարգացման համար: Հազարամյակների կտրվածքով այս երաժշտությունն ազդել և ամրապնդել է ազգի հոգևոր կյանքը, երկրի գեղեցկությունը, դժվարին, բայց հերոսական պատմությունը: Հինավուրց արմատները և չմարող կենսունակությունը ժամանակակից հայկական երաժշտության էությունն են: Հին հայկական երաժշտությունը փոփոխական ձև է ունեցել ամենօրյա կյանքում, նաև պարունակել է դարավոր և կրոնական ծեսեր, գյուղատնտեսական և ռազմական երանգների ամբողջություն: 19-րդ դարում Եվրոպայի հայ ուսանողների ինքնահաստատման գործընթացի հետևանքով հայկական պրոֆեսիոնալ երաժշտության մի նոր դարաշրջան սկսվեց: Հայկական երաժշտությունը զարգացել է զուգահեռաբար միմյանց հարստացնող ճյուղերով՝ ազգային երաժշտություն և պրոֆեսիոնալ երաժշտություն: Ազգային երաժշտությունն, իր հերթին, ունի տարբեր ճյուղեր կամ ոճեր՝ աշխատանքային, ծիսական, դյուցազնական, քնարերգական, և այդ երաժշտական ճյուղերը փոխկապակցված են [7, pp. 847-849]: Ազգային երաժշտությունը կարող է պարունակել ազգային երգեր, գործիքային ազգային երաժշտություն, որը հաճախ նվագակցվում է ազգային պարով: Չնայած ժամանակակից շատ արվեստագետներ նոր ազգային երաժշտություն են գրում ավանդական ոճով, շատերն ազգային երաժշտությունը համարում են հին ավանդական երաժշտություն: Ազգային երաժշտությունը հաճախ ունի ազգային երանգ, իսկ տարբեր երկրներ կամ մշակութային խմբեր ունեն իրենց բնորոշ ոճերը, չնայած կարող են հաճախ համընկնել ոճերով, ինչպես հարևան երկրներում, այնպես էլ մեծ թվով մարդկանց տեղաշարժերի կամ ներգաղթի արդյունքում: Հինավուրց ազգային մեղեդիների ծագումը կարող է աղոտ լինել, քանի որ նրանք հաճախ հաղորդակցվում են ընդօրինակման արդյունքում, որը փոխանցվում է սերնդեսերունդ, հաճախ առանց երաժշտական նշանագրության օգնության կամ անցնում են ազգային երաժիշտների՝ այլ համայնքների հետ մշակութային փոխազդեցությունից, և հնարավոր է, որ ժամանակի ընթացքում վերամշակվեն ու փոփոխվեն: Ժամանակակից հանրամատչելի երաժշտության վրա ազդեցություն են թողել մոտ չորս հազար տարի առաջ Ասիայի տարածքում երաժշտության կատարման առաջին ձևերը: Առաջին հայացքից այդ երաժշտությունը ծագում է հանրամատչելի մշակույթից և հանդիսանում է տվյալ ժամանակահատվածի սովորույթների ու իրադարձությունների հայելին, սակայն ժամանակի հետ երաժշտությունն աստիճանաբար դարձավ երկրի մշակույթի մի մաս և հասարակության մշակույթի տարր:

Երկու մշակույթ, միմյանց հետ փոխազդվելով, կիսում են իրենց մշակութային տարրերը, որոնք ազդեցություն են ունենում մեկը մյուսի վրա: Դա, իր հերթին, կախված է մշակութային տարրերի հանրայնությունից, օրինակ՝ լեզվական մշակութային տարրից: Իսկ երբ հասարակության որոշ մարդկանց խումբն արտագաղթում է այլ համայնքներ, փոխազդեցության առաջին կարևոր գործոն է հանդիսանում տվյալ ժողովրդի լեզուն, որպեսզի նրանք հեշտությամբ կարողանան հաղորդակցվել մեկը մյուսի հետ: Այստեղ մշակութային տարրն ազդում է արտագաղթողների վրա: Իրանցիների և հայերի միջև մշակութային հասարակական հաղորդակցության արմատները գտնվում են հին ժամանակներում, անկախ նրանից՝ հաղորդակցությունն է ավելի երկար, թե՞ ազդեցությունը: Հարց է ծագում. արդյո՞ք հայկական երաժշտությունն ունեցել է որոշակի ազդեցություն իրանական երաժշտության վրա, թե՞ ոչ: Ավելին՝ մեր այս հետազոտությունում փորձել ենք պարզել, թե իրանական երաժշտության որ հատվածների վրա է այն առավել կարևոր դեր ունեցել: Մեր ուսումնասիրության մեջ կիրառել ենք սոցիոլոգիայում ընդունված մեթոդ, որի համաձայն՝ պատահականության սկզբունքով ընտրվել են 170 տղամարդ և կին: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր անձ բոլորովին պատահական է ընտրվել, իսկ բնակչության յուրաքանչյուր անդամ հավասար հնարավորություն է ունեցել սոցիոլոգիական ընտրանքի մեջ ընդգրկվելու համար [8]: Սոցիոլոգիական հարցման մասնակիցների տարիքը հասնում էր մինչև 20 տարեկան: Հարցաթերթիկները բաշխվել են Սպահանի հայ համայնքում: Հետազոտության տվյալները գնահատվել և վերանայվել են՝ դասակարգելով դրանք և կիրառելով երկչափ աղյուսակներ: Աղյուսակ 1-ում բերված են դասակարգված տվյալներ: Արդյունքները վերլուծության են ենթարկվել՝ ցույց տալով, թե երաժշտության որ հատվածներում է առկա առավելագույն ազդեցությունը:

Աղյուսակ 1

Հայ երաժշտության ազդեցությունն իրանականի վրա

	Պատասխաններ	Քանակ	Տոկոս
1.	Այո	116	68%
2.	Ոչ	9	5%
3.	Չգիտեմ	39	24%
4	Պատասխան չկա	5	3%
Ընդամենը		170	100%

Վերոնշյալ աղյուսակում դասակարգվել են պատասխաններ, որոնցում 170 հետազոտված դեպքերից 116-ում տրվել է դրական պատասխան, ինչը կազմում է հարցվածների 68%-ը: Դրանցից յուրաքանչյուրը տվել է դրական պատասխան՝ նշելով, թե իրանական երաժշտության որ մասն է ազդել հայկական երաժշտության վրա, ինչը երևում է *Աղյուսակ 2*-ում:

Աղյուսակ 2

	Պատասխաններ	Քանակ	Տոկոս
1.	Որոշ իրանական ցեղեր օգտագործում են հայկական երաժշտական գործիքներ:	41	36%
2.	Հայկական երաժշտությունը որոշակի ազդեցություն է ունեցել իրանական ավանդական և ժողովրդական երաժշտության վրա:	22	19%
3.	Հայկական երաժշտությունը միակ պատճառն է, որի արդյունքում զարգացել և աճել է իրանական/պարսկական երաժշտությունը:	20	17%
4.	Հայկական երաժշտությունն օգնել է, որ իրանական փոփ երաժշտությունը զարգանա:	19	16%
5.	Իրանական երաժշտությունն ամբողջ աշխարհում հանրաճանաչ է դարձել հայերի օգնությամբ:	9	8%
6.	Պատասխան չկա	5	4%
Ընդամենը		116	100%

Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, բերված են միայն այն մասնակիցների պատասխանները, որոնք ասել են, որ հայկական երաժշտությունն ազդել է իրանական երաժշտության վրա: Հարցաթերթիկում մասնակիցների մեծամասնությունը (36%) պատասխան է տվել, որ որոշ իրանական ցեղեր օգտագործում են հայկական երաժշտական գործիքներ: Երկրորդ հատվածում, ինչպես տեսնում ենք, մասնակիցների թվի 19%-ը պատասխանել է, թե հավատում է, որ հայկական երաժշտությունը որոշակի ազդեցություն է ունեցել իրանական ազգային, տեղական և ավանդական երաժշտության վրա: Աղյուսակի երրորդ տողում ներկայացված պատասխանները ներառում են հարցվածների մոտ 17%-ը: Նրանք նշել են, որ հայկական երաժշտությունը միակ պատճառն է, որի արդյունքում զարգացել և աճել է իրանական կամ պարսկական երաժշտությունը: Աղյուսակի չորրորդ հատվածում պատասխանների մոտ 16%-ը վկայում է, որ հայկական երաժշտությունն օգնել է, որ իրանական փոփ երաժշտությունը

զարգանա, և հենց Իրանի հայերն են զարգացրել փոփ երաժշտությունը: Հինգերորդ հատվածում ներկայացված է պատասխանների 6%-ը, որոնց համաձայն՝ իրանական երաժշտությունն ամբողջ աշխարհում հանրաճանաչ է դարձել հայերի օգնությամբ:

Իրանական ֆոլկլորային երաժշտության առանձնահատկությունն այն է, որ մինչ երաժիշտներից մեկը նվագում է մեկ նոտա կամ մի շարք նոտաներ՝ մյուսը պետք է նվագի այնպիսի նոտաներ, որոնք դրանց համահունչ լինեն որպես ամբողջություն: Ավելին, երաժշտի նվագած նոտաները լցվում են այն հատվածներում, որոնք ազատ է թողել առաջին երաժիշտը: Նշված երկու կամ ավելի շատ անկախ հատվածների միացությունը կազմում է ամբողջական պատկեր, որը շատ նման է գլոխկոտրուկի տարբեր կտորների: Այս ձևով երաժշտությունն իր յուրովի ազդեցությունն է թողնում հասարակության անդամների փոխկախվածության վրա: Յուրաքանչյուր անհատի դերը շատ կարևոր է: Ամբողջությունը չի կարող ստեղծվել առանց մյուս կողմի: Ավելին, կողմերից յուրաքանչյուրը պետք է սահմանի կատարված կառուցվածքը մեծ ճշգրտությամբ, որպեսզի պարզորոշ պահպանվեն բոլոր հատվածները և ճշգրիտ համապատասխանեն իրար: Այդ կատարումը պահանջում է համագործակցություն և ճշգրիտ ռիթմիկ համընկնում, որն արտացոլում է այդ արժեքների գոյությունը տվյալ համայնքում ապրող ժողովրդի ամենօրյա կյանքում:

Մարտ, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Judith.M and Thomas Nakayama*, Intercultural Communication in Contexts. New York: McGraw-Hill, (2010).
2. *Larry A.*, Set al, Intercultural Communication, Tehran Baz, first edition, (2000).
3. *Dollo L.*, the individual and collectivist culture, Translator Abbas Bagheri, publish. Tehran, Faran Poor, (2003).
4. *Bournoutian. G.A.*, Religion. Armenian in Iran culture of Iran, Cultureofiran.com (2006).
5. <http://100years100facts.com/facts/armenian-persian-legacy-dates-back-antiquity/15/8/20167:10pm>.
6. *Danai N.*, Sociology culture, publish Sako, (2013).
7. *Koskoff E.*, The Concise Garland Encyclopedia of World Music: published by:Routledge. Simultaneously in the UK, (2008),1943.
8. *alerie J.*, Easton and John H. McColl's Statistics Glossary v1.1 22/8/2016 11:16am.

**ՊԱՐՄԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Մարիամ Սաժեշ

Ամփոփագիր

Հոդվածում բարձրացվում են հարցեր, որոնք վերաբերում են Սպահանի հայերի հաղորդակցությանը՝ որպես համայնքների միջև մշակութային կապ: Մասնավորապես՝ օսմանյան պատերազմից հետո, երբ հայերն արտագաղթեցին Իրան, դա իր հետևանքն ունեցավ իրանական և հայկական երաժշտական մշակույթի վրա: Այս երկու փոխկապակցված և ընդհանուր շատ գծեր ունեցող մշակույթներն ազդեցություն են թողնում մեկը մյուսի վրա:

**СОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ ВЛИЯНИЯ АРМЯНСКОЙ
МУЗЫКИ НА ПЕРСИДСКУЮ МУЗЫКАЛЬНУЮ КУЛЬТУРУ**

Мариам Сажеш

Резюме

В статье рассматриваются вопросы, связанные с коммуникацией армян Исфагана, в контексте культурной связи между общинами. В частности, после Османской войны, когда армяне эмигрировали в Иран, это повлияло на иранскую и армянскую музыку. Эти две взаимосвязанные культуры влияют друг на друга и сегодня.

**A SOCIOLOGICAL STUDY OF THE INFLUENCE
OF ARMENIAN MUSIC ON PERSIAN MUSICAL CULTURE**

Mariam Sajesh

Resume

The article raises issues relating to the communication of Armenians from Isfahan, as the cultural links between the communities. In particular, after the Ottoman War, when Armenians migrated to Iran, it had a consequence on Iranian and Armenian musical culture. These two interconnected and very common cultures influence one another.

ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Նունուֆար Մտեփանյան՝

Բանալի բառեր՝ կոլեկտիվ որոշումներ, կոալիցիաներ, կառավարություն, քաղաքական կոնֆիգուրացիա, պակտ, համագործակցության քաղաքական խաղեր:

Պաշլամենտարիզմի վերաբերյալ գրականության մեջ շեշտը դրված է կառավարության ձևավորման գործընթացի վրա: Կառավարության ձևավորումը կարևոր նշանակություն ունի, քանի որ դրանով է պայմանավորված կառավարության կարողությունը՝ գործելու իր գոյության ողջ ընթացքում:

Կոալիցիայի ձևավորումը կարևորվում է այն ժամանակ, երբ ընտրություններում մեծամասնություն ստացած մի քանի կուսակցություններ, որոնք միայնակ չեն կարող կազմել կառավարություն և ընդունել որոշումներ քվեարկության գործընթացի միջոցով, միավորվում են համատեղ գործունեության համար: Փաստորեն, վերը նշված պակտը քաղաքականության մեջ կնքվում է որոշակի թվով կուսակցությունների և քաղաքական խմբերի միջև համաձայնության տեսքով, որոնք ձգտում են իրենց ձեռքում կենտրոնացնել երկրի քաղաքական ղեկավարումը և կարող են իրենց վրա վերցնել պատասխանատվություն տվյալ հարցում: Կառավարությունը կախված է խորհրդարանից և ձևավորվում է նրա քաղաքական կոնֆիգուրացիայի հիմքի վրա:

Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ «խորհրդարանական և նախագահական համակարգերն իրականում տարբեր են, երբ խոսքը վերաբերում է ինստիտուցիոնալ առանձնահատկություններին, որոնք անհրաժեշտ են կոալիցիա ձևավորելու համար» [1]: Նրանց մի մասն առանձնացնում է 2 հիմնական կետ՝ 1. նախագահական համակարգերում նախագահն է միշտ կառավարության ձևավորողը (*formateur*) և անկախ իր չափե-

¹ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ:

րից՝ նախագահի կուսակցությունը միշտ լինում է կառավարության կազմում, մինչդեռ խորհրդարանական համակարգերում ցանկացած կուսակցություն կարող է հանդիսանալ պոտենցիալ *formateur*, 2. կոալիցիոն կառավարություն ձևավորելու ձախողումը յուրաքանչյուր համակարգում հանգեցնում է տարբեր հետևանքների: Խորհրդարանական համակարգերում, հազվադեպ բացառություններով, դա հանգեցնում է նոր ընտրությունների. ընտրողներին տրվում է հնարավորություն՝ կատարելու տեղերի նոր բաշխում՝ հուսալով, որ դա հնարավորություն կընձեռի ձևավորել կենսունակ կառավարություն: Նախագահական համակարգերում, քանի որ նախագահի կուսակցությունը հանդիսանում է կառավարության պորտֆելների միակ կրողը, կոալիցիա ձևավորելու ձախողումը նշանակում է, որ կարող է պահպանվել կամ էլ չպահպանվել ստատուս քվոն [2, pp. 565-587]:

Քաղաքական կոալիցիան կուսակցությունների դաշինքն է որոշակի սահմանափակ ժամանակահատվածում, որի մաս հանդիսացող կողմերը՝ 1. փոխգործակցում են միասին և համատեղ ընդունում քաղաքական որոշումներ հատկապես կարևոր և հանրային հնչեղություն ունեցող խնդիրների վերաբերյալ, 2. համաձայն են միասին շարժվել դեպի ընդհանուր, հստակ առաջադրված նպատակը, 3. նշանակալի ռեսուրսներ են ներդնում նպատակին հասնելու համար, 4. գիտակցված փոխանակում են տեղեկատվություն, որը նպաստում է նպատակին հասնելուն, 5. համաձայնության են հասել առաջադրված նպատակի իրագործումից ստացված շահույթի բաշխման հարցում, 6. ընդունված քաղաքական որոշման համար կրում են հավասար քաղաքական պատասխանատվություն: Կոալիցիայի շրջանակներում ընդունված քաղաքական որոշումները կոլեկտիվ որոշումներ են և կրում են պարտադիր բնույթ:

Պատվամենտարիզմի հիմնական բնույթն այն է, որ կուսակցությունները գործում են ըստ մեծամասնական սկզբունքի (անգլիալեզու գրականության մեջ՝ *majoritarian imperative*) [1], այսինքն՝ կառավարությունը պետք է բաղկացած լինի կուսակցություններից, որոնք միասին տնօրինում են խորհրդարանում տեղերի 50%-ից ավելին: Այս տեսանկյունից կառավարության ձևավորման արդյունքում կուսակցությունները (կոալիցիայի կողմերը) փոխանակում կամ բաշխում են նախարարական պորտֆելները՝ օրենսդրական աջակցության համար: Կուսակցությունը կհայտնվի կառավարության կազմում, եթե՝ ա. ունի 1 կամ ավելի նախարարական պորտֆել, բ. երբ խորհրդարանի խմբակցությունների անդամները, ինչպես ակնկալվում է, կքվեարկեն կողմ՝ հաջակցություն կառավարության նախաձեռնություններ-

րի: Եթե կուսակցությունը խորհրդարանում ունի տեղերի 50%-ից ավելին, ապա նա ձևավորում է միակուսակցական կառավարություն. այսինքն, լինելով կառավարությունում՝ այն իր ձեռքում է պահում կառավարության բոլոր բարիքները կամ իր ձեռքում է կենտրոնացնում ողջ առավելությունները, քանի որ նրան անհրաժեշտ չէ մյուս կուսակցությունների աջակցությունը իշխանության մնալու համար: Եթե ոչ մի կուսակցություն չունի խորհրդարանում 50%-ից ավելի տեղեր, ապա կուսակցությունները պետք է ձևավորեն կոալիցիոն կառավարություն (այն, ինչը Լեյբհարթն անվանում է կոնսենսուալ կառավարություն՝ «*consensual government*»)՝ կիսելով կառավարության պաշտոնները: Իսկ երբ կառավարությունը ձևավորվում է մեկ կամ մի քանի կուսակցությունների կողմից, որոնք միասին վերահսկում են խորհրդարանում 50%-ից քիչ տեղեր, ապա ձևավորվում է փոքրամասնության կառավարություն, որն էլ պարտադիր կերպով բերում է կառավարության ձևավորման գործընթացի ձախողմանը: Դրանք ճգնաժամերի արդյունք են, որոնց բնորոշ են քաղաքական մասնատվածությունը և բևեռացման բարձր մակարդակը:

Հաշվի առնելով այն փաստը, որ խորհրդարանական ժողովրդավարական երկրների մեծ մասում ոչ մի կուսակցություն չի տնօրինում խորհրդարանում տեղերի 50%-ից ավելին, ապա օրենսդիր-գործադիր փոխհարաբերությունների ուսումնասիրության ժամանակ առանցքային հարցերից է այն, թե որ կուսակցությունները միասին կձևավորեն կոալիցիոն կառավարություն, ինչպես կկիսեն սահմանափակ թվով պորտֆելները և ինչպես կհաստատվի հիմնական քաղաքական գիծը: Այս տեսանկյունից կոալիցիոն կառավարությունները հենվում են տարբեր կուսակցությունների միջև սակարկությունների վրա: Այստեղ խոսքը համագործակցված քաղաքական խաղերի մասին է:

Համագործակցային դեմոկրատիայի առաջին և հիմնական տարբերակիչ գիծը էլիտաների համագործակցությունն է: Բացի այդ, երկրի կառավարման գործընթացում բոլոր քաղաքական լիդերները համագործակցում են մեծ կոալիցիայի շրջանակներում (Ա.Լեյբհարթ) [3, սրբ. 60-77]: Մա հակասում է դեմոկրատիայի այն համակարգին, որում կառավարությունը հենվում է միայն խորհրդարանական մեծամասնության և ազդեցիկ ընդդիմության վրա: Մեծ կոալիցիաների դերը հատկապես կարևորվում է ճգնաժամային իրավիճակներում քաղաքական որոշումների ընդունման գործընթացի ժամանակ, որը կարող ենք դիտարկել նաև որպես ազգային համաձայնության կոալիցիա: Ըստ Ռ.Դալի, «Մի շարք երկրներում մեծ

կոալիցիաների առկայությունը թույլ է տվել կրիտիկական անցումային փուլերում հասնել միասնության և կայունության՝ կուսակցական կրքերի հանդարտեցման և կոնսենսուսի ամրապնդման ճանապարհով» [4]:

Քաղաքագիտական գրականության մեջ կոալիցիաների ձևավորման մոդելավորման համար հիմնարար է համարվում Ու.Ռայկերի «Քաղաքական կոալիցիաների տեսություն» աշխատությունը:

Ու.Ռայկերն առաջ քաշեց կոալիցիաների «մեծության սկզբունքը», համաձայն որի՝ «N մասնակիցներով խաղի ժամանակ, որը կառուցվում է գրոյական հանրագումարով խաղի սկզբունքների վրա, և որտեղ թույլատրելի են խաղացողների միջև հաղթանակի բաժանման վերաբերյալ համաձայնությունները, որտեղ խաղացողներն առաջնորդվում են ռացիոնալ հաշվարկներով և ամբողջապես տեղեկացված են, հաղթանակի համար ստեղծվում են միայն մինիմալ չափերով կոալիցիաներ» [5, p. 32]: Նվազագույն հաղթող կոալիցիաներ ձևավորելը դիտվում է որպես ռազմավարական առավելություն: Այս առավելությունը պայմանավորված է այն փաստով, որ նա, ով կարողանում է ձևավորել նվազագույն հաղթող կոալիցիա, կարող է նաև համաձայնության գալ սակարկությունների ավելի շահավետ պայմանների շուրջ [5, p. 127]: Սա նշանակում է, որ «խաղացողները ստեղծում են միայն այն չափի կոալիցիաներ, որը, ըստ նրանց, կապահովի հաղթանակ իրենց համար, սակայն ոչ ավելին» [5, pp. 32-33]: Այսինքն՝ կուսակցությունները փորձում են ձևավորել հնարավորինս փոքր կոալիցիաներ և պահել կառավարության «կարկանդակի» որքան հնարավոր է մեծ մասը: Սակայն նա գտնում է, որ «մեծության սկզբունքը» կարող է փոփոխությունների ենթարկվել՝ շնորհիվ «տեղեկատվության էֆեկտի»։ կոալիցիաները նվազագույն են լինում միայն այն ժամանակ, երբ խաղացողները տիրապետում են ամբողջական տեղեկատվության, և որքան քիչ է տեղեկատվությունը, այնքան ավելի մեծ չափերի կոալիցիա է անհրաժեշտ:

Կոալիցիաների ձևավորման ժամանակ որպես առանցքային փոփոխականներ առանձնացվում են՝ ա. դերակատարների չափսը, բ. դերակատարների միջև քաղաքական «մոտիկությունը»:

Վերլուծաբանները, որոնք որոշիչ են համարում կոալիցիաների չափսը, կողմնակից են Ու.Ռայկերի «մինիմալ հաղթող կոալիցիա» մոդելին, համաձայն որի՝ քաղաքական կուսակցությունները ձգտում են մաքսիմալացնել իրենց մեծամասնությունը, և որ կուսակցությունները միտված չեն ձայնի համար վճարել ավելին, քան անհրաժեշտ է հաղթանակի համար: Պարզ է, ինչքան անդամներով մեծ է կոալիցիան, այնքան նրա մասնակից-

ները ստանում են փոքր իշխանություն՝ լինի անհատ, թե կուսակցություն: «Մինիմալ հաղթող կոալիցիայի» ցուցանիշը հետևյալն է. կոալիցիայից թեկուզ մեկ կուսակցության դուրս գալու դեպքում կոալիցիան կորցնում է հաղթողի իր բնույթը [5, p. 40]:

Ուսումնասիրելով կոալիցիաների ձևավորման մոդելները՝ կարող ենք փաստել, որ վերջիններիս արդյունավետությունը շատ հաճախ պայմանավորված է՝

- կոալիցիայի չափով,
- կոալիցիոն գործընկերների միջև իրական գաղափարաքաղաքական տարածությամբ (որքան շատ են տարածայնությունները առաջնահերթությունների սանդղակով պայմանավորված, այնքան անկայուն են կոալիցիաները),
- մասնակիցների թվով (որքան շատ են կոալիցիայի անդամները, այնքան ավելի բարդ է պահպանել համաձայնության պայմանները),
- բանակցությունների ժամանակ մասնակիցներից յուրաքանչյուրի անհատական բանակցային ոճով կամ էլ ճկունության աստիճանով (որքան վճռական է գործընկերներից մեկը, այնքան ավելի բարդ է մյուսների հարմարվողականության աստիճանը),
- տարբեր փոփոխականներով, որոնք ազդում են կոալիցիայի ներսում որոշումների ընդունման վրա (գործընկերները, որոնք համագործակցել են նախկինում կամ գաղափարական առումով իրար մոտ են, ավելի արագ են ընդհանուր լեզու գտնում միմյանց հետ, քան մյուսների),
- արտաքին միջավայրով (ներքաղաքական կամ արտաքին քաղաքական ֆորսմաժորային իրադարձությունները հաճախ են կոալիցիոն գործընկերների կողմից տարբեր գնահատականների արժանանում, որն էլ կարող է նպաստել կոալիցիայի կազմալուծմանը):

Սակայն պետք է նշել, որ «մինիմալ հաղթող կոալիցիա»-ն ինքնին «արդյունավետ կոալիցիա» է, քանի որ կոալիցիայի անդամները կստանան կոլեկտիվ գործունեության արդյունքում սպասվելիք օգուտի ամենամեծ մասը և/կամ նրանք կունենան տվյալ կոլեկտիվ գործողության ծախսերի ամենափոքր բաժինը, որն ապահովում է համընդհանուր շահ ամբողջ խմբի համար: Քանի որ կոալիցիաների ձևավորման ժամանակ որոշումների ընդունման կենտրոնները գործում են համաձայն ռացիոնալ ընտրության տեսության, ապա կոալիցիաները կարելի է դիտարկել որպես երկարա-

Ժամկետ գործարքի արդյունք, որի նպատակը կոալիցիայի ձևավորման արդյունքում ստացված քաղաքական շահույթի բաշխումն է: Կոալիցիոն շահույթի բաշխման մեթոդիկայի ժամանակ գործում է 2 սկզբունք.

1. շահույթը կիսում են միայն այն մասնակիցները, որոնք իրապես իրենց ավանդն են ներդրել կոալիցիայի ձևավորման համար. այս դեպքում հաղթողը ստանում է այն, ինչ կորցրել է պարտվողը, այսինքն՝ խաղ զրոյական հանրագումարով,
2. շահույթը կիսվում է՝ ելնելով մի քանի կանոններից. ամենակարևորը համամասնության սկզբունքն է, այսինքն՝ քաղաքական շահույթը կիսվում է համամասնորեն՝ ըստ ներդրած ռեսուրսների (ձայների տոկոսը, պատգամավորական մանդատների քանակը և այլն):

Այստեղից հետևում է, ըստ Ջ.Բյուքենենի և Գ.Թալոքի, որ վերաբաշխողական տարբերը պետք է լինեն ցանկացած կոլեկտիվ որոշման մի մասը [6, p. 190]:

Այսպես, վերլուծելով 3-րդ գումարման ԱԺ-ում կոալիցիայի ձևավորման հնարավոր տարբերակները՝ կարելի է ասել, որ հենց այս մոդելն է ընդունվել որպես հիմք (կոալիցիան խորհրդարանում ներկայացված էր 70 պատգամավորով՝ ՀՀԿ՝ 39, ՕԵԿ՝ 20, ՀՅԴ՝ 11), որովհետև եթե կոալիցիայից որևէ մեկը դուրս գար, ապա այն կկորցնեի հաղթողի իր բնույթը: Եվ այդպես էլ եղավ, երբ ՕԵԿ-ը դուրս եկավ կոալիցիայից: Սակայն ՕԵԿ-ին կոալիցիայում փոխարինեց ՄԱԿ-ը, ինչով էլ կոալիցիան, որպես քաղաքական որոշումների կայացման հիմնական և գլխավոր կենտրոն, պահպանեց իր դերը: Այս մոդելի կիրառումը, փաստորեն, հնարավորություն է տալիս կանխագուշակել խորհրդարանում քաղաքական ուժերի ապագա դասավորվածությունը: Այստեղից պարզ երևում է, որ որոշումների ընդունման գործընթացի ժամանակ հաղթանակի համար կոալիցիան դառնում է կենտրոնական կամ էլ վճռական: Այսպես, եթե մի որոշման կողմ է քվեարկել մեծամասնությունը, ապա այն համարվում է ընդունված: Որևէ օրինագծին վերջինը քվեարկածը, որի ձայնը որոշումների ընդունման համար կարևոր, կենտրոնական նշանակություն ունի, համարվում է որպես որոշիչ ընտրություն: Այդժամ կարելի է որոշել՝ ում ձայնը որոշում է հաղթանակը, հաճախ նա էլ հանդիսանում է կենտրոնական քվեարկող (*pivotal voter*):

Որոշումների ընդունման գործընթացի ժամանակ հաղթանակելու համար քաղաքական պայքարը քաղաքականությունը դարձնում է խաղ 2 կամ ավելի մասնակիցներով՝ զրոյական կամ ոչ զրոյական հանրագումար-

րով: Զրոյական հանրագումարով խաղի դեպքում հաղթողը ստանում է ամեն ինչ, իսկ ոչ զրոյականի դեպքում քաղաքական պայքարի մասնակիցների միջև լայնորեն կիրառվում է առևտրային գործարքների մեխանիզմը: Լեյբհարթը դա համարում է կոալիցիոն քաղաքականության առանցքային մոդելներից մեկը և առաջարկում է «գործարքների թեորեմը» [7, սրբ. 82]: Տվյալ մոդելում գլխավորը ոչ թե կոալիցիայի մասնակիցների թիվն է (չնայած այն պետք է լինի «հաղթող»), այլ կուսակցությունների քանակը, որոնք ձևավորում են այնպես: Դա կապված է ծախսերի կրճատման հետ՝ կոալիցիա ձևավորելու և դրան աջակցելու համար, քանի որ կուսակցությունների շատ լինելու դեպքում դժվար է գործարքներ կնքել քաղաքական որոշումների ընդունման կենտրոնների միջև, դժվար է ստանալ ամբողջական տեղեկատվություն, բարդ է վարել բանակցություններ: Հետևաբար, նվազագույն քանակությամբ կուսակցություններով կոալիցիան ավելի շարժունակ և ավելի կայուն է:

Չափի սկզբունքից բացի կոալիցիաների ձևավորման ժամանակ կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև քաղաքական տարածությունը և կուսակցությունների ծրագրային նմանությունները: Այդ տեսանկյունից կիրառական է «միևիմալ տարածության» մոդելը [7, սրբ. 82], համաձայն որի՝ կոալիցիաների ձևավորման ժամանակ կարևորագույն չափանիշ է հանդիսանում կուսակցության «աջեր» կամ «ձախեր» պատկանելությունը:

Խաղերի տեսության շրջանակներում, եթե օրենսդրական գործընթացը դիտարկում ենք որպես խաղ տարբեր խմբերի շահերի տեսանկյունից, ապա լոգրոլինգը կամ էլ «ես քեզ, դու ինձ» (այսինքն՝ տալու և վերցնելու) սկզբունքը դառնում է օրենսդիր գործընթացի, հատկապես կոալիցիոն քաղաքական որոշումների ընդունման հիմնական էությունը կամ բնորոշ գիծը: Դա կուսարմիս է, ոչ թե բարոյական, որի մասին առողջ դատողություններ են անում փիլիսոփաները, այլ պրակտիկ, որոնք հայտնի են յուրաքանչյուր օրենսդրի, որը ձգտում է հասնել իր նպատակներին քաղաքական գործընթացի միջոցով: Դա առևտուր է: Դա շահերի համաձայնեցում է [8, p. 371]:

Այսինքն, եթե անհատ դերակատարը (մեր դեպքում պատգամավորը կամ քաղաքական որոշումների ընդունման կենտրոնը) որոշակի հարցերում ճիշտ է գնահատում իր սեփական ձայնի տնտեսական արժեքի կարևորությունը մյուսների համար և միևնույն ժամանակ որոշակի հարցերում գիտակցում է մյուսների տնտեսական ձայնի կարևորությունն իր համար, ապա նրա մոտ առաջանում է քաղաքական «առևտրում» մասնակցության շարժառիթ:

Այս խնդրի հետ կապված՝ Ջ.Բյուքենենը և Գ.Թալոքը գտնում են, որ եթե հնարավոր լինի գտնել փոխանակման այնպիսի տարբերակներ, որոնք բացահայտ չեն հակասի վարքագծի ընդունված նորմերին, ապա այդ ժամանակ անհատները կձգտեն ստանալ փոխադարձ շահույթ: Առանձին հարցերի շուրջ ձայների փոխանակման հնարավորությունը բացում է լայն հեռանկարներ: Անհատը կարող է արդյունավետորեն «վաճառել» իր ձայնը որոշման ընդունման ժամանակ կոնկրետ հարցի հետ կապված՝ փոխարենը ստանալով մյուսների ձայներն այլ հարցերի հետ կապված որոշումների ընդունման ժամանակ, որոնք իր համար ավելի անմիջական հետաքրքրություն են ներկայացնում [6, pp. 122-123]:

Այդ իսկ պատճառով այսօր խորհրդարանական պրակտիկայում որոշումների ընդունման գործընթացի ժամանակ խորհրդարանականների գործունեության բնորոշ հատկանիշներից է ձայների առևտուրը (*logrolling*):

Որոշումների ընդունման գործընթացի ժամանակ խաղի բոլոր մասնակիցները, այսինքն՝ որոշման ընդունման կենտրոնները, անկախ այն հանգամանքից՝ հանդիսանում են կռալիցիայի անդամ, թե ոչ, գործում են օպտիմալ՝ հասնել հաղթանակի կամ էլ հաջողության: Ռազմավարական որոշումների ընդունման ժամանակ ռազմավարական վերլուծությունը սահմանում է հիմնական խաղացողներին և խաղի կանոնները երկարաժամկետ հեռանկարում: Խաղի բոլոր մասնակիցներն ընտրում են որոշակի ռազմավարություն, իսկ արդյունքը որոշվում է բոլոր խաղացողների ջանքերի շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրը հետևում է ընտրված ռազմավարությանը: Կարևորվում է ոչ միայն սեփական գերակայությունների հստակեցումը, այլև հակառակորդ կողմի գերակայությունները: Եթե անհատ պատգամավորները չգիտեն մյուս պատգամավորների նախապատվությունները, ապա իրենց ռազմավարական գործելաձևում նրանք պետք է գնահատեն ոչ հավաստի տեղեկատվության թերությունները և ստացման հանգամանքները: Այսպիսով, ռազմավարական վերլուծությունն առաջադրում է ռազմավարական նպատակները և դրանց հասնելու միջոցները: Մակայն դա կարելի է անել ևս մեկ բաղադրիչի առկայությամբ՝ «առաքելության», այսինքն՝ այն հստակ գերնպատակի, որն իր առջև դրել է տվյալ խաղացողը:

Խորհրդարանական բանավեճերը, որոնց պատճառները տարբեր են լինում (իսկ անցումային շրջանում գտնվող երկրներում հաճախ պատգամավորների մասնագիտական ունակությունների ցածր մակարդակի և փորձագետների ու տեղեկատվական-հաշվողական համակարգի թերիու-

թյան արդյունքն են), բնականորեն կարող են առճակատման մթնոլորտ ստեղծել և քաղաքական ու սոցիալ-տնտեսական վերափոխությունների նկատմամբ հավատի ճգնաժամ առաջացնել: Դա բարդանում է նաև այն պատճառով, որ անցումային շրջանում, որպես կանոն, ուժեղանում է սոցիալական անհավասարությունը, մեծանում է հասարակական մարզինալ շերտերի քանակը, որոնք, առավել մեծ չափով հակված լինելով արմատականության, կարող են պահանջել կառավարությունից՝ խիստ բևեռացված որոշումներ ընդունել: Այստեղ մարզինալ շերտերը կարող ենք դիտարկել որպես որոշումների ընդունման արտաքին ազդեցության կենտրոններ:

Օրինաստեղծ գործունեությունը, որը պետական իշխանության օրենսդրական ճյուղի իրավասության մեջ է մտնում, երկարաժամկետ գործընթաց է և հաճախ ավելի է երկարում անցումային շրջանին հատուկ այնպիսի երևույթի պատճառով, ինչպիսին երկրի ներկայացուցչական բարձրագույն մարմնում տեղեր ստացած տարբեր քաղաքական ուժերի՝ համագործակցության գնալու պատրաստականության պակասն է: Սակայն այդ երկարաձգման գործընթացը նույնպես ունի իր նպատակը. այն է՝ այդ ընթացքում ավելի լավ են հաշվարկվում և հստակեցվում քաղաքական գործիչների, կուսակցությունների նպատակները: Արդյունքում՝ կուսակցությունները ստեղծում են միավորումներ, որպեսզի կարողանան կոմպրոմիսի գնալ մյուս կուսակցությունների հետ՝ քաղաքական որոշումների ընդունման գործընթացի ժամանակ:

Ժողովրդավարական ռեժիմներում իրական կոնսենսուսը ենթադրում է համաձայնություն հիմնարար արժեքների, նպատակների և հիմնական քաղաքական հաստատությունների շուրջ, փոքրամասնության ենթարկում մեծամասնության կողմից ընդունված որոշումներին՝ միաժամանակ ապահովելով քննադատության և ընդդիմության իրավունք: Ենթադրվում է, որ կոնսենսուս պետք է լինի մոտակա նպատակների և քաղաքական գործընթացների շուրջ, որը պետական իշխանության բարձրագույն մարմիններում իր արտահայտությունը կգտնի կոնսենսուսալ որոշումների ընդունման մեջ: Հաջողության համար կարևոր է նաև քաղաքական որոշումների ընդունման կենտրոնների համագործակցային մշակույթի աստիճանը: Սակայն վերջինս պրոբլեմային է դառնում անցումային շրջանում, երբ բազմաթիվ կուսակցություններ, որոնք ունեն լրիվ հակառակ գաղափարախոսական, աշխարհայացքային և այլ կանխադրույթներ, ներկայացված են լինում երկրի օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնում:

Որոշումների ընդունման կենտրոնների հաշտեցումն իրականանում է բանակցությունների միջոցով, որոնք ավարտվում են կողմերի հետագա գործունեությունը կարգավորող համատեղ որոշումների ընդունմամբ: Կոնֆլիկտը համարվում է սպառված, երբ ընդունվել է կողմերի համար ձեռնտու որոշում: Դա հնարավոր է դառնում միայն կողմերի փոխըմբռնման պայմաններում, երբ բոլորն էլ որոշակի զիջումներ են կատարում միմյանց նկատմամբ: Փոփոխությունը պետք է «լավացնի» գոնե խմբից մեկ անդամի դրությունն առանց մյուսների բարեկեցության «վատացման», ի դեպ «լավացումն» ու «վատացումը» որոշվում են ըստ անհատների նախասիրության, որոնք դրսևորվում են նրանց վարքագծում: Որոշումների ընդունման տերմինաբանությամբ դա նշանակում է, որ փոփոխություններն ավելացնում են «ընդհանուր բարեկեցությունը» միայն այն դեպքում, եթե բոլոր անհատները համաձայնության են եկել, այսինքն՝ ձեռք է բերվել միաձայնություն [6, p. 92]: Արդյունքում՝ ընդունվում են կոմպրոմիսային որոշումներ:

Որոշումների ընդունման գործընթացում պետք է հաշվի առնել նաև ռիսկի գործոնը: Ցանկացած քաղաքական որոշման ընդունում անպայման կապված է որոշակի ռիսկի գործոնի հետ: Քաղաքական ռիսկը ցանկացած մակարդակի քաղաքական որոշման անբացառելի տարրն է: Ռիսկային որոշումները հատկապես ընդունվում են անորոշության պայմաններում և բնորոշվում են օբյեկտիվ իրադրության և սուբյեկտիվ գործունեության փոխհարաբերակցությամբ: Սա պայմանավորված է նրանով, որ որոշումների ընդունման կենտրոնները քաղաքական անորոշության պայմաններում երբեք չեն կարող համոզված լինել, որ մյուս որոշման ընդունման կենտրոնները վերջին պահին չեն փոխի իրենց դիրքորոշումը և ուժի մեջ կշարունակի մնալ մինչ այդ ձեռք բերված պայմանավորվածությունը: Քաղաքական անորոշության պայմաններում որոշումների ընդունումն առաջին հերթին պահանջում է ձևակերպել, հստակեցնել նպատակները, պահանջները, կողմերի շահերը, խնդիրները, անհրաժեշտ գործողությունները: Անորոշությունը, որպես կանոն, համարում են արտաքին միջվայրի հետ փոխհարաբերության արդյունք, ինչը ստիպում է մեծ ուշադրություն դարձնել միջավայրից ստացված տեղեկատվությանը:

Մեծամասնություն ունեցող և իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերում ղեկավարություն ստացած քաղաքական ուժը (ուժերը) հանդիսանում է (են) իշխանական որոշումների կենտրոններ, քանի որ նրանց որոշումները, հստակեցված ընթացակարգերի միջոցով, մեծամասնության իշխանության սկզբունքի հիման վրա ստանում են պետական որոշումների

տեսք: 3-րդ Հանրապետության ընթացքում, որպես իշխանական որոշումների կենտրոններ, դրանք խորհրդարանական և նախագահական ընտրություններից հետո ձևավորված կոալիցիաներն էին՝ 2003թ. մայիսի 25-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո ձևավորվեց ՀՀԿ - ՕԵԿ - ՀՅԴ քաղաքական կոալիցիան (3-րդ գումարման ԱԺ)¹, երկրորդ կոալիցիան ձևավորվեց 2007թ. մայիսի 12-ին տեղի ունեցած ԱԺ ընտրությունների արդյունքում, մի փոքր այլ ձևաչափով՝ ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն ստորագրեցին կոալիցիոն, իսկ ՀՅԴ-ի հետ ստորագրվեց համագործակցության հուշագրեր (4-րդ գումարման ԱԺ), երրորդ կոալիցիան ձևավորվեց 2008թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո. ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն և ՕԵԿ-ը ստորագրեցին կոալիցիոն հուշագիր², իսկ չորրորդ կոալիցիան ձևավորվեց 2012թ. խորհրդարանական ընտրություններից հետո՝ ՀՀԿ – ՕԵԿ կազմով³ (5-րդ գումարման ԱԺ): Հերթական կոալիցիան ձևավորվեց 2017թ.՝ ՀՀԿ-ի և ՀՅԴ-ի միջև (6-րդ գումարման ԱԺ):

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԱԺ-ում ներկայացված են լինում տարբեր քաղաքական հայացքներ ունեցող ուժեր, որոշումների ընդունման գործընթացի ժամանակ լուրջ բարդություններ չեն առաջանում, քանի որ եթե 3-րդ, 4-րդ գումարման ԱԺ-ում տեղերի մեծ մասը ստացած կուսակցությունները կազմում էին կոալիցիա, որն էլ որոշ չափով հեշտացնում էր որոշումների ընդունման գործընթացը, ապա 5-րդ և 6-րդ գումարման ժամանակ ՀՀԿ-ն բացարձակ մեծամասնություն ունի: Քաղաքական որոշումների ընդունման կոալիցիոն մոդելի ժամանակ կոալիցիան հանդիսանում է որոշումների ընդունման գլխավոր կենտրոնը, որի ձայնն էլ որոշիչ դեր է խաղում որոշումների ընդունման գործընթացում, հետևաբար, հենց կոալիցիայի շրջանակներում էլ ընդունվում են կարևոր քաղաքական որոշումները:

Կոալիցիայի անդամ չհանդիսացող որոշումների կենտրոնները տվյալ տեսանկյունից դիտարկելիս դրանք ընդդիմադիր քաղաքական ուժերն են խորհրդարանում, որոնք կարող են խափանել որոշ որոշումների ընդունումը մեծամասնության կողմից, սակայն չեն կարողանում միայն իրենց ուժերով ընդունել որոշումներ, մասնավորապես օրենքներ՝ չունենալով համապատասխան թվով քվեներ: Այստեղ քաղաքական խաղը հիմնականում

¹ Սակայն 2006թ. մայիսին ՕԵԿ-ը դուրս եկավ կոալիցիայից, որի փոխարեն կոալիցիայի անդամ դարձավ ՄԱԿ-ը:

² Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո ՀՅԴ-ն հայտարարեց, որ այդ քաղաքականությունը չի համապատասխանում իր արտաքին քաղաքականության տեսլականին և դուրս եկավ կոալիցիայից:

³ 2014թ. ՕԵԿ-ը դուրս եկավ կոալիցիայից, որի արդյունքում ՀՀԿ-ն դարձավ քաղաքական որոշումների ընդունման միակ իշխանական կենտրոնը:

ընթանում է քվորումի ապահովման ժամանակ: Մեծամասնության կողմից կարող է դաշինք կազմվել, և դրա արդյունքում փոքրամասնության կամ ընդդիմության նախաձեռնությունները չեն ընդունվում: Սա վկայում է այն մասին, որ ընդդիմությունը հաճախ լուրջ լծակներ չի ունենում քաղաքական որոշումների ընդունման վրա ազդեցություն գործելու համար: Սակայն հարկ է նշել, որ ընդդիմությունը, օգտվելով իշխանական մեծամասնության թույլ կարգապահությունից և կոնկրետ տվյալ հարցի հետ կապված մեծամասնության ներսում առկա տարաձայնություններից, կարող է համախմբման արդյունքում հասնել ցանկալի արդյունքի: Այսպես, 2014թ. հունիսի 18-ին ԱԺ-ում ձևավորված քառյակը (ԲՀԿ, ՀԱԿ, ՀՅԴ, «Ժառանգություն») և ՕԵԿ-ը տապալեցին Կուտակային կենսաթոշակի մասին կառավարության ներկայացրած օրենքի նոր նախագծի քվեարկությունը: ՀԱԿ-ի պահանջած 20 րոպե ընդմիջումից հետո ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Մահակյանը օրակարգում ընդգրկված հարցերը քվեարկության դնելուց առաջ փորձեց ժամանակ ձգել՝ ՀՀԿ-ական պատգամավորների՝ դահլիճում քվեարկությանը մասնակցությունն ապահովելու համար: Սակայն տեսնելով, որ քվորում ապահովելու համար ՀՀԿ-ն անհրաժեշտ 66 ձայնը չունի, ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն, «Ժառանգությունը» և ՕԵԿ-ը չմասնակցեցին քվեարկությանը: Այսպիսով, մի շարք հարցեր ՀՀԿ-ն չկարողացավ անցկացնել՝ ունենալով ընդամենը 63-64 ձայն: Հարկ է նշել, որ 5-րդ գումարման ԱԺ-ում օրինագծերն ընդունելու համար անհրաժեշտ էր առնվազն 66 կողմ ձայն:

Պետք է նշել, որ ընդդիմության առկայությունը թույլ է տալիս հավասարակշռված որոշումներ ընդունել:

Ըստ էության, բոլոր կոալիցիոն տեսություններն այսպես թե այնպես ձգտում են այնպես բաշխել իշխանությունը, որպեսզի քաղաքական որոշումների ընդունման ժամանակ կարողանան ձեռք բերել անհրաժեշտ համաձայնություն 2 կամ ավելի քաղաքական ակտորների կամ քաղաքական որոշումների ընդունման կենտրոնների միջև:

Հասկանալի է, որ քաղաքական գործընթացներում կոալիցիաների ձևավորումը տեղի է ունենում քաղաքական գործընկերների միջև գործարքի արդյունքում, որին սովորաբար նախորդում է առևտուրը: Քաղաքական առևտրի ժամանակ կարևորվում են հատկապես քաղաքական ռեսուրսները, որոնցով էլ պայմանավորված է քաղաքական ազդեցության աստիճանը, ինչն էլ իր հերթին կարող է դիտարկվել որպես քաղաքական կոալիցիաների մասնակցության համար կարևոր հանգամանք: Այս գործընթացում կարևորվում է հատկապես այն լիդերների դերը, որոնք ընդունակ են բա-

նակցելու, համաձայնություն ձեռք բերելու, սակարկելու, փոխզիջումների գնալու և ունեն պատասխանատվության բարձր աստիճան: Բացի այդ, կոալիցիոն կառավարման արդյունավետության կարևոր երաշխիքներից է նաև խմբային մտածողության և քաղաքական խնդիրների լուծման միասնական տեսլականի առկայությունը:

Ամփոփելով կարող ենք փաստել. քանի որ փոքրամասնության սկզբունքով ձևավորված կառավարությունները քաղաքական մասնատման և բնեռացման արդյունք են, այդ իսկ պատճառով ամենաանկայունը և ոչ կառավարելի են: Ի տարբերություն դրա, միակուսակցական մեծամասնական կառավարությունները երկարատև են և կարող են իրականացնել կարևոր քաղաքական ծրագրեր: Սակայն քաղաքական խաղերի տեսանկյունից առավել հետաքրքիր քաղաքական ֆենոմեն են կոալիցիոն կառավարությունները: Ի վերջո, նրանք հենվում են կուսակցությունների միջև սակարկությունների վրա, այսինքն՝ ինչպես բաշխել կառավարության «բարիքները» և սահմանել քաղաքականության հիմնական ուղղությունները: Սակայն հարկ է նշել, որ կոալիցիաները փխրուն են այն իմաստով, որ դրանք կարող են փլուզվել ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային հարցերի հետ կապված: Այս առումով, կոալիցիոն կառավարությունները նույնպես խոցելի են, որը պայմանավորված է նաև կոալիցիայի յուրաքանչյուր անդամի առանձնահատկություններով:

Հունվար, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Jose Antonio Cheibub, Fernando Limongi*, From Conflict to Coordination: Perspectives on the Study of Executive-Legislative Relations// Revista Ibero-Americana de Estudos Legislativos, RIEL, Belo Horizonte, vol. 1, N 1 (2010).
2. *Cheibub José Antonio, Adam Przeworski and Sebastian Saiegh*, 2004, "Government Coalitions and Legislative Success Under Parliamentarism and Presidentialism", British Journal of Political Science 34 (2004), pp. 565-587.
3. *Лейпхарт А.*, Демократия в многосоставных обществах, Москва, Аспект Пресс, 1997, стр. 60-77.
4. *Dahl R.A.*, A Bipartisan Administration // New York Times, November 14, 1973.
5. *Riker W.H.*, The Theory of Political Coalitions. New Haven & London, Yale University Press, 1962.
6. *Buchanan J., Tullock G.*, The Calculus of Consent, Logical Foundations of Constitutional Democracy, Ann Arbor Paperbacks, The University of Michigan Press, USA, 1965.

7. *Сморгунов Л.В.*, Современная сравнительная политология, Москва, РОССПЭН, 2002.
8. *Bentley A.*, The Process of Government, Chicago, The University of Chicago Press, 1908.

ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Նունուֆար Ստեփանյան

Ամփոփագիր

Օրենսդիր-գործադիր փոխհարաբերությունների ուսումնասիրության ժամանակ առանցքային հարցերից է այն, թե որ կուսակցությունները միասին կձևավորեն կոալիցիոն կառավարություն, ինչպես կկիսեն սահմանափակ թվով պորտֆելները և ինչպես կհաստատվի հիմնական քաղաքական գիծը:

Հոդվածի շրջանակներում հիմնավորվել է քաղաքական որոշումների ընդունման գործընթացում կոալիցիաների դերը՝ որպես քաղաքական որոշումների ընդունման հիմնական կենտրոն: ՀՀ օրինակով վերլուծվել են կոալիցիաների ձևավորման մոդելները, համակարգված ձևով ներկայացվել են 3-րդ Հանրապետության պատմության ընթացքում ձևավորված քաղաքական կոալիցիաները:

РОЛЬ КОАЛИЦИЙ В ПРОЦЕССЕ ПРИНЯТИЯ ПОЛИТИЧЕСКИХ РЕШЕНИЙ

Нунуфар Степанян

Резюме

Важнейшими вопросами при изучении взаимоотношений законодательной и исполнительной власти являются: какие политические партии вместе будут формировать коалиционное правительство, как будет распределяться ограниченное количество портфелей и как будет создана основная политическая линия.

В рамках этой статьи была обоснована роль коалиций как основных центров принятия политических решений. На примере Армении были проанализированы модели формирования коалиций, системно представлены политические коалиции, сформированные в течение истории Третьей Республики.

THE ROLE OF COALITIONS IN THE DECISION-MAKING PROCESS

Nunufar Stepanyan

Resume

Some of the key issues in studying the relationships between the Legislative and Executive powers are: which political parties will jointly form coalition government, how the limited number of ministerial portfolios will be distributed and how the main political line will be established.

Within the framework of this article, the role of coalitions is substantiated as the key centers of decision-making process. The models of the coalitions formation are analyzed by the case of Armenia, and the political coalitions formed during the history of the Third Republic are presented in a systematic way.

ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊՈԶԻՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ

*Միասկ Մարգարյան**

Բանալի բառեր՝ օրենք, նորմատիվ իրավական ակտ, օրինականություն, լեգիտիմություն, պոզիտիվ իրավունք, բնական իրավունք:

Լեգիտիմությունը բնորոշում է հեղինակությունը, իրավունքների սուբյեկտների կողմից քաղաքական և իրավական ինստիտուտների ճանաչումը, բայց անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին. որքա՞ն կոռեկտ է այս կատեգորիայի կիրառությունը ոչ միայն քաղաքականության, իշխանության հանդեպ, այլև իրավական ոլորտի հանդեպ, և որքա՞ն է կարևոր այդ բնորոշիչը, արդյո՞ք այն բնորոշում է պոզիտիվ իրավունքի բնույթը: Դրա համար էլ, նախքան ժամանակակից պետությունում և հասարակությունում լեգիտիմության իրավաբանական ոլորտների հետազոտությունը, անհրաժեշտ է բացահայտել պոզիտիվ իրավունքի էության հանդեպ լեգիտիմության հարցը: Այս հարցը կարևոր է, քանի որ, առանց իրավունքի գոյաբանության էության, իրավական իրականության հասկացության բովանդակության և իմաստի, իրավունքի կեցության հիմնական ձևերի իմացության պարզորոշ պարզաբանման անհնար է հասկանալ իրավունքի ֆենոմենը [1, էջ 21-22]:

Ժամանակակից շատ աշխատություններ նվիրված են լեգիտիմության և լեգիտիմացիայի խնդիրներին, հաճախ մատնանշվում է իրավունքի հանդեպ լեգիտիմություն կատեգորիայի կիրառության նպատակահարմարությունը: Այսպես, Մ.Կիրեևան մատնանշում է, որ իշխանության լեգիտիմությունը ենթադրում է «տրամաբանական հարց իրավունքի լեգիտիմության մասին, որն ինքնին հանդիսանում է... սոցիալական կառավարման գործիք» [2, c. 25-30]:

* ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ:

Իրավունքի ընդհանուր տեսության ուսումնական և գիտական աշխատանքներում կա լեգիտիմություն կամ իմաստով ավելի մոտիկ համընդհանրություն կամ համաճանաչություն կատեգորիաների մասին մատնանշում՝ որպես իրավունքի էության բնութագրիչ: Իրավական նորմի համանշանակությունը մատնանշում է նրա սոցիալականորեն ճանաչված արժեքային բնույթը, իրավական նորմի համապարտադրականությունը պայմանավորված է նրա համանշանակությամբ: Ա.Պոլյակովը իրավունքին տալիս է հետևյալ սահմանումը. «Իրավունքը պետք է սահմանել որպես սոցիալապես ճանաչված կամ համապարտադիր նորմերի հիմնված հարաբերությունների կոմունիկատիվ կարգ, որի մասնակիցները համագործակցում են իրենց իրավունքների և պարտականությունների իրացման ուղիով» [3, c. 330-333]:

Ի.Չեստնովն իր «Իրավունքի հետդասական տեսություն» մենագրությունում խոսում է նրա նախանշանների հարցի հանդեպ իրավունքի լեգիտիմության մասին [4, c. 29-30]: Լեգիտիմություն կատեգորիայի իրավաբանության մեջ կիրառությունը, որը բնորոշում է իրավական նորմերը, այլ ոչ թե պետությունը, առաջարկում է նաև Վ.Վոպլենկոն: Նրա կարծիքով՝ լեգիտիմությունը և օրինականությունը նման երևույթներ չեն: Օրինականության լեգիտիմությունը նրա կատարյալ վիճակն է, որով հետաքրքրված են յուրաքանչյուր պետություն, յուրաքանչյուր քաղաքական ռեժիմ, իրականում իրավունքի յուրաքանչյուր նորմատիվ աղբյուր, անգամ օրինականության առանձին իրավական նորմեր ու սկզբունքներ բնութագրվում են երկրի բնակչության կողմից ընդունման ու աջակցության տարբեր աստիճաններով: Այստեղից առաջանում է առանձին իրավական նորմերի լեգիտիմության աստիճանի առանձնացման և սահմանման, օրինականության իրավաիրացնող գործունեության մեջ կոնկրետ պահանջների լեգիտիմության աստիճանի սոցիոլոգիական խնդիրը: Մա յուրահատուկ և շատ կարևոր խնդիր է, որի լուծումը կարող է իրականացվել հետազոտական ճանապարհով հատուկ սոցիոլոգիական ծառայությունների միջոցով [5, c. 13-15]:

Իրավագիտության մեջ պոզիտիվ իրավունքի բնույթի բնութագրման ժամանակ պետության և իրավունքի լեգիտիմության մասին չի հիշատակվում, քանի որ նրանցում շարունակում է գերիշխել նեղ նորմատիվ մոտեցումը, երբ խոսում են իրավունքի առանձնահատկության մասին, սովորաբար մատնանշում են սանկցիաների և պետական հարկադրանքի առկայությունը: Նման մոտեցումը, որը հաստատվել է 20-րդ դարի 30-ական թթ. կեսերին, կապված է Վիշինսկու կերպարի հետ, կրում է նշված ժամանակի

պետական ռեժիմի և գաղափարաբանության կնիքը: Ինչպես դասական նախահեղափոխական ռուսական իրավական մտքի, այնպես էլ ժամանակակից գիտական գրականության մեջ պոզիտիվ իրավունքի էության և հարկադրանքի միջև կապն առաջացրել է հիմնավորված քննադատություն: Պետք է հիշել Լ.Պետրաժիցկուն, որը գրում էր, որ «հարկադրանքի տեսության տեսանկյունով իրավունքի նորմը՝ x, հանդիսանում է լոկ այնպիսի նորմ, որի կամավոր կատարման բացակայության դեպքում իրավունքի մեկ այլ նորմ՝ x1, նախատեսում է հարկադրանքի միջոցների կիրառություն... x2 նորմը պետք է ունենա համապատասխան բովանդակության հետագա սանկցիա՝ x3, որին պետք է հետևի x4 սանկցիան և այլն, մինչև անվերջություն» [6, c. 221-222]: Այսպիսով, Պետրաժիցկու կարծիքով՝ տեղի է ունենում տրամաբանական շրջան հարկադրանքի միջոցով իրավունքի էության դուրսբերման փորձի դեպքում: Հարկադրանքի հարցը իրավունքում լուսաբանվում է արտասահմանյան հեղինակների մի շարք աշխատանքներում: 20-րդ դարի հայտնի փիլիսոփաներից մեկը՝ Հերբերտ Հարտը, որն իրավաբանական պոզիտիվիզմի կողմնակից էր, մատնանշում էր պետական հարկադրանքի առկայության պատճառով իրավունքի նորմին հետևելու բնության մոտեցման անկատարությանը, քանի որ սա օրենքի հանդեպ վատ տղայի մոտեցում է, որը վախենում է պատժից, այն դեպքում, երբ քաղաքացիները հետևում են իրավունքի նորմերին նրանց ճանաչման պատճառով, այսինքն՝ նրանց հետ համաձայնելու դեպքում [7, p. 69-70]: Գ.Բերմանը իրավունքի նորմերին հետևելու մասին հարցին պատասխանում է հետևյալ կերպ. պատասխանը, որը սովորաբար տալիս են այս հարցի գործիքային տեսության կողմնակիցները, ուղղորդվում է դեպի այն, որ մարդիկ հետևում են օրենքին, քանի որ վախենում են հարկադիր սանկցիաներից, որոնք հակառակ դեպքում կկիրառվեն իրավակիրառիչ իշխանության կողմից [8, c. 18-19]: Իրավունքում էության և հարկադրանքի խնդիրն է մատնանշում Ժ.Կարբոնիեն՝ քննադատության ենթարկելով իրավունքի՝ որպես նորմերի հասկացումը, որոնք սահմանվում են պետության կողմից: Կարբոնիեն խոսում է իրավունքի նորմերի իշխանական հարկադրանքի միջոցով յուրահատկության հասկացման անբավարարության մասին: Նա նշում է, որ «այս չափանիշը կաշառում է իր բյուրոկրատական պարզությամբ» [9, c. 165]: Նշված չափանիշի անբավարարությունը, ըստ ֆրանսիացի գիտնականի, այն է, որ պոզիտիվիստական հիմնադրույթներն իրավակիրառության ոլորտում ցանկանում են գտնել իրավական նորմերի սպեցիֆիկա, իսկ խնդիրը իրավունքի այն էական գծերի որոնման մեջ է, որոնք պետք է սահմանեն նրա իրացման բնույթը:

Ա. Պոլյակովն արդարացիորեն նշում է, որ «հարկադրանքը հանդես է գալիս որպես իրավունքի նպատակների ձեռքբերման միջոց, բայց ոչ որպես նրա գոյաբանական էություն» [10, c. 193]: Նա իր հետազոտություններում մանրամասն ուսումնասիրում է հարկադրանքը իրավունքում և նրա նշանակությունները իրավունքի օնթոլոգիական բնույթի հասկացման համար: «Իրավունքի ընդհանուր տեսություն» աշխատանքում նա գրում է. իրավունքը, որը դիտարկվում է որպես որոշ սուբյեկտների սոցիալականորեն արդարացված ձգտում այլոց կողմից իրենց իրավական պարտականությունների կատարման հանդեպ, միշտ էլ հոգեբանորեն հարկադրական է: Ֆիզիկական հարկադրանքի հնարավորությունն իրավունքում սահմանափակ է և կապված է իրավախախտումների որոշակի տեսակների հետ: Ի՞նչ են նկատի ունենում, երբ խոսում են իրավունքում պետական հարկադրանքի հնարավորության մասին: Պարզ է, որ իրավունքի գործարկումը հարկադրանքի հետ կապ չունի: Իրավասությունների կիրառությունն իրավունքի հենքն է, որը անհատների ազատության ոլորտ է և չի կարող ունենալ հարկադրական բնույթ: Գործն այլ է՝ կապված պարտականությունների հետ: Պարտականությունները պետք է կատարվեն, քանի որ ապահովվում է սուբյեկտների իրավունքները: Պարտականության չկատարումը հանդիսանում է հակաիրավական ակտ, հակարժեք, որն առաջացնում է բացասական էմոցիաներ և ձգտումներ՝ կապված խախտված իրավունքի վերականգնման հետ: Դրա համար էլ առկա է տրամաբանական և հոգեբանական կապ պարտականությունների չկատարման ու իրավական հարկադրանքի միջև, որը կարող է կրել հոգեբանական, սոցիալական, պետական-կազմակերպչական բնույթ: Պետական հարկադրանքը չի հանդիսանում իրավունքի գործարկման անհրաժեշտ պայման: Նորմերի մեծամասնությունը սուբյեկտների մեծամասնության կողմից իրականացվում է առանց հատուկ պետական հարկադրանքի: Բայց կարող է պատահել, որ այն սահմանվում է այդպիսի հարկադրանքի վտանգի առկայությամբ դրված պարտականությունների չկատարման դեպքում: Բայց այսպիսի իրավիճակը ոչ միշտ է տեղի ունենում, բայց և այն դեպքում, երբ խոսքը պարտականությունների կատարման մասին է, իրապես հարկադրանքի վտանգի ներքո անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խոսքը վերաբերում է սանկցիաների կիրառման վտանգի մասին իրավախախտման դեպքում, և այս իմաստով վտանգը, որը հարկադրում է պարտականությունների կատարում, միշտ կրում է հոգեկան բնույթ: Հոգեկան հարկադրանքը սուբյեկտիվ գիտակցության վրա ազդեցություն է, որը հարկադրում է նրան ընտրել վարքագծի որոշակի տարբերակ: Այս միջավայրի համար կարևոր տարր է

լեզվատիմությունը, քանի որ յուրաքանչյուր իշխանություն չի սահմանափակվում միայն մերկ բռնության կամ հարկադրանքի կիրառությամբ ու կարիք ունի նրան կամավոր կամ հարկադրանքով ենթարկվող ճանաչման մեջ: Իշխանական կամարտահայտումը պետք է համընկնի էկզիստենցիալիստական որոշման հետ, որը հասունանում է ժողովրդական ոգու հիմքերում, բռնությունը, որը բնորոշ է իշխանությանը, այստեղ համատեղվում է համաձայնության հետ [11, c. 5-6]: Դրա համար էլ լեզվատիմությունը սահմանված կարգի համապատասխանությունն է քաղաքական իշխանական պահանջին ու ենթակաների քաղաքական պատկերացումներին, որի առնչությամբ իր նշանակությամբ այն լեզվությունից, այսինքն՝ ըստ բնույթի ֆորմալ օրինականությունից բարձր է, լեզվատիմությունը նման է արհեստավարժ արհեստավորի, ով ստեղծում է նոր կարգ, լեզվությունը մնում է դրա հետ կապված որպես տվյալ կարգի ընթացակարգային ձևակերպում: Այժմ կան իրավունքի բնության հանդեպ տարբեր մոտեցումներ: Իր հերթին, Ա.Պոլյակովը հիմնավորում է, որ «իրավունքի նախանշանների միասնությունը բացահայտում է կեցության կառուցվածքը և սահմանում է նրա գոյաբանական կարգավիճակը»: Չնայած տարբեր մոտեցումներին՝ գիտնականների վերոնշյալ կարծիքներից, որոնք չեն կիսում իրավունքի հանդեպ պոզիտիվիստական մոտեցումը, երևում է, որ նորմերի սանկցիավորումը պետության կողմից, հարկադրանքի ուժով նորմերի ապահովումը չեն հանդիսանում գլխավոր բնորոշիչը, որը կարող է սահմանել էության յուրահատկությունը և իրավունքի իրացումը: Իրավունքի գործողության մեխանիզմի կարևոր տարր է նրա սոցիալ-իրավաբանական լեզվատիմացիայի մեխանիզմը» [12, c. 15]:

Իրավունքի էյդոսը արտահայտվում է նրա կառուցվածքում, որը ներկայացնում է իրավասությունների և իրավապարտականությունների կոռելյատիվ կապ, որոնք արձանագրվում են համընդհանուր և համապարտադիր իրավական նորմով միջսուբյեկտիվ կոմունիկացիայի գործընթացում: Իրավունքի էյդետիկ կենտրոնը կայանում է իրավասության մեջ. իրավասությունը հանդիսանում է այնպիսի կետ, որից դուրս են գալիս իրավական իմաստի ճառագայթները, որոնք ձևավորում են իրավունքի էյդոսը: Որպեսզի իրավունքը լինի գործող, անհրաժեշտ պայման է նրա լեզվատիմությունը իրավական հարաբերությունների սուբյեկտների համար, որպեսզի տեղի ունենա օրենքի լեզվատիմացիայի գործընթաց:

Հետևաբար, անհրաժեշտ է ճանաչել լեզվատիմությունը կամ հասարակական ճանաչումը պոզիտիվ իրավունքի էական նախանշանով: Նորմերը դառնում են իրավական, հետևաբար նաև լեզվատիմ, այն ժամանակ, երբ

նրանք օրյեկտիվորեն ստանում են ճանաչում հասարակության կողմից որպես սուբյեկտների իրավունքների և պարտականությունների հիմքեր ու վերջիններս ընձեռում են նրանց: Առանց իրավունքի լեգիտիմության հարցերի, որպես սոցիալական նորմերի տեսակի հասկացման, չի կարելի պատասխանել այն հարցին, թե ինչպես են ձևավորվում նորմատիվ կարգերը, որոնք ունեն անհատների կամքը կապելու, նրանց վարքագիծն ուղղորդելու ուժ:

Մարտ, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ստեփանյան Հովհ.*, Իրավունքի փիլիսոփայություն, Երևան, 2016:
2. *Киреева С.А.*, Понятие и механизмы легитимации политических режимов // Правоведение, 1996, №4.
3. *Поляков А.В., Тимошина Е.В.*, Общая теория права, СПб., 2005.
4. *Честнов И.Л.*, Постклассическая теория права, СПб., 2012.
5. *Вопленко Н.Н.*, Законность и легитимность // Новая мысль, 2003, №1.
6. *Петражицкий Л.И.*, Теория права и государства в связи с теорией нравственности, СПб., 2000.
7. *Hart H.L.A.*, The Concept of Law, Oxford, 1961.
8. *Берман Г.Дж.*, Вера и закон: примирение, права и религии, М., 1999.
9. *Карбонье Ж.*, Юридическая социология, М., 1986.
10. *Поляков А.В.*, Общая теория права: курс лекций, СПб., 2001.
11. *Исаев И.А.*, Легитимность и легальность в конституционном процессе// История государства и права, 2012, №6.
12. *Поляков А.В.*, Коммуникативная концепция права: вопросы теории, СПб., 2003.

ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊՈԶԻՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ

Միսակ Մարգարյան

Ամփոփագիր

Հոդվածում դիտարկվում են լեգիտիմության հասկացությունը, էությունը, առանձնահատկությունը՝ որպես պոզիտիվ իրավունքի բնութագրիչ հատկանիշ: Հեղինակը գտնում է, որ լեգիտիմությունը հանդիսանում է պոզիտիվ իրավունքի իրականացման կարևորագույն պայմաններից մեկը: Մատնանշվում է, որ առանց լեգիտիմության՝ ցանկացած իրավական ակտ (օրենք, ենթաօրենսդրական ակտ) դառնում է դեկլարատիվ բնույթի փաստաթուղթ:

**ЛЕГИТИМНОСТЬ КАК ХАРАКТЕРНАЯ ОСОБЕННОСТЬ
ПОЗИТИВНОГО ПРАВА**

Мисак Маргарян

Резюме

Статья рассматривает понятие, сущность и специфику легитимности как характерную особенность позитивного права. Автор считает легитимность одним из важнейших условий осуществления позитивного права. Более того, автор указывает, что без легитимизации какой-либо правовой акт (закон, подзаконный акт) лишен законности и становится декларативным бумажным документом.

LEGITIMACY AS A CHARACTERISTIC FEATURE OF POSITIVE LAW

Misak Margaryan

Resume

The article considers the concept, essence and specificity of legitimacy, as a characteristic feature of positive law. The author believes legitimacy is one of the most important conditions for the exercise of positive law. Moreover, the author indicates that without legitimacy any legal act (law, sub-legislative act) is deprived of legality and becomes a declarative, paper-based document.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

*Վահե Պողոսյան**

Բանալի բառեր՝ քաղաքական կուսակցություն, առաջնորդ, հասարակական կարծիք, հետխորհրդային հասարակություն, ընտրություն:

Քաղաքական կուսակցությունները ժողովրդավարական կարևոր ինստիտուտներից են, որոնց գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ կուսակցության ծրագրային դրույթներով, տեղեկատվական արշավներով և այլն, սակայն զարգացող ժողովրդավարական հասարակություններում, որտեղ այս ինստիտուտները դեռ վերջնականապես չեն ամրապնդվել և ձևավորվել, կուսակցության հաջողության կարևորագույն գործոններից մեկը քաղաքական առաջնորդն է, որը հաճախ նույնանում է կուսակցության հետ:

Քաղաքական կուսակցությունները կարևոր դեր ունեն իշխանության ինստիտուտների կենսագործունեության ապահովման համար, քանի որ ապահովում են սահմանադրական ինստիտուտների գոյությունն ու որոշակի կայունություն հաղորդում քաղաքական ինստիտուտներին, հետևաբար պետք է եզրակացնել, որ կուսակցության գործունեությունը անքակտելիորեն կապված է երկրի քաղաքական կյանքի հետ: Այս համատեքստում կուսակցության գործունեության հաջողությունը պայմանավորված է տվյալ կուսակցության իմիջով, որը երբեմն նույնանում է կուսակցության առավել հայտնի ներկայացուցչի կամ առաջնորդի իմիջի հետ: Կուսակցության իմիջը կուսակցության հոգեբանական պատկերացումն է հանրային գիտակցության մեջ, որը որոշակի կարծրատիպային ընկալում ունի և ձևավորվում է իշխանության հասնելու և երկրի քաղաքական էլիտայի կազմում ներգրավվելու համար [1]: Ընդհանրապես, քաղաքական կուսակցության

* ԵՊՀ ուսանող:

ամբողջական կերպարի ձևավորման վրա մեծ մասամբ ազդում են հետևյալ բաղադրիչները.

- Լիդերի իմիջքը, որն արտահայտվում է ոչ միայն կուսակցության առաջնորդի, այլև կուսակցության այլ լիդերների անհատական կերպարով, որոնցից յուրաքանչյուրն իր անհատական ազդեցությունն է ունենում կուսակցական իմիջի վրա
- Կուսակցության գաղափարախոսությունը
- Կուսակցության քաղաքական դիրքորոշումն ու սոցիալական բազան
- Քաղաքական լիդերների անցած ճանապարհը, վարքն ու հեղինակությունը
- Կուսակցության քաղաքական և այլ ռեսուրսները:

Այստեղից կարող ենք փաստել, որ վերոնշյալ բաղադրիչների առկայության պայմաններում քաղաքական կուսակցության իմիջն առավել անձնավորվում է, այսինքն՝ կուսակցությունը և նրա առաջնորդը սկսում են նույնականացվել:

Կուսակցության կերպարը ձևավորվում է քաղաքական հաղորդակցության միջոցով, որն իշխանության և դրա իրականացման համար պայքարի գործընթացում տեղեկատվության փոխանակման միջոցով քաղաքականության սուբյեկտների փոխազդեցության իմաստային կողմ է հանդիսանում: Այն կապված է տեղեկատվության ուղղորդված տրամադրման և ընտրազանգվածի կողմից դրա ընկալման հետ, առանց որի հնարավոր չէ քաղաքական գործընթացի իրականացումը: Ռուս քաղաքագետ Յուրի Իրխինը նշում է. «Հաղորդակցման միջոցով իրականացվում են քաղաքական հաղորդակցության երեք հիմնական տեսակներ.

- Հարկադրական
- Բուն տեղեկատվական (հնարավոր կամ իրական տեղեկատվություն)
- Փաստական (քաղաքականության սուբյեկտների միջև կապերի հաստատման և պահպանման հետ կապված տեղեկատվություն) [2]:

Այս համատեքստում բավական դյուրին է ընկալել քաղաքական առաջնորդի կերպարը՝ որպես այդ տեղեկատվության հեղինակ, և ընկալված տեղեկատվության համատեքստում գնահատել նրա ներկայացրած կուսակցությունը: Որպես կանոն, ընտրողները, գործ ունենալով քաղաքական լիդերների վերբալ կամ վիզուալ կերպարի հետ, նրանց անմիջականորեն գնահատելու հնարավորություն չունեն: Նշենք նաև, որ կուսակցության

լիդերի անձի ընկալման վրա սովորաբար մեծ ազդեցություն են ունենում քաղաքական ընտրազանգվածի տարիքային, սոցիալական և այլ չափանիշները: Հետևաբար, կուսակցության հաջողության համար կարևոր է ընտրողների քաղաքական ակտիվության դրդապատճառները հաշվի առնելը:

Տեսաբանները քաղաքական լիդերների կերպարների կառուցվածքի բնութագրերը բաժանում են հինգ հիմնական գործոնների (սովորաբար կին և տղամարդ քաղաքական գործիչ-կուսակցության առաջնորդների մոտ այս գործոնները տարբեր են լինում): Ե՛վ կին, և՛ տղամարդ լիդերների համար առավել կարևոր է քաղաքական գործչի մասնագիտական որակների գործոնը: Տղամարդ առաջնորդի համար հաջորդ կարևոր գործոնը ներառում է տղամարդկային հաստատակամությունը, անշահախնդրությունն ու բաց լինելը, կանանց համար՝ նրբությունը, ճկունությունը, կարգապահությունը, բարությունն ու մարդկայնությունը: Հատկանշական է, որ ընտրազանգվածի կողմից ընկալման առումով արտաքին տեսքի գործոնը կանանց համար առավել կարևոր է, քան տղամարդկանց [3]:

Հետխորհրդային հասարակություններում կուսակցությունների ընկալումը մեծապես պայմանավորված է առաջնորդի հոգեբանական բնութագրումներով, իսկ կուսակցության և նրա առաջնորդի դրական իմիջն արդեն իսկ ընտրություններում ընտրողների ձայները ստանալու կարևոր հանգամանք է, ինչպես նաև կուսակցության կամ իշխանության համակարգում նրա առաջնորդի գործունեության օրինականացման գրավական: Մա պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակչության մեծ մասը հեռու է իրական քաղաքական գործընթացներից, բավական աղոտ պատկերացում ունի կուսակցությունների ծրագրային դրույթների մասին, կուսակցության գործունեության արդյունավետության հնարավորությունների մասին դատում է ոչ թե ելնելով ծրագրային դրույթներից, այլ կուսակցության ներկայացուցիչների իմիջից, չի նույնականացնում կուսակցությունները որպես հասարակության որոշակի խմբերի շահերի արտահայտողի: Իսկ կուսակցության կամ նրա առաջնորդի իմիջը հաճախ էականորեն տարբերվում է պարզ իրականությունից: Բնական է, որ դա էապես ազդում է կուսակցության գործունեության հաջողության վրա: Այս հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ են իրականացրել Դ.Քոլը, Ռ.Մակքենզին, Ջ.Մարտորին, Պ.Բերդը և այլք, որոնց հետաքրքրում էր քաղաքացիական հասարակության ինստիտուտների և կառույցների ձևավորման համատեքստում կուսակցությունների դերի հարցը: Բերդը նշում է. «Ցանկացած կազմակերպություն ունի իր սեփական իմիջը, որը հասարակությանը փոխանցում է առաջին հերթին ՋԼՄ-ի

միջոցով» [4]: Քաղաքական գովազդի մասնագետ Ս.Լիսովսկին նշում է, որ ընտրողները հազվադեպ են մանրամասն վերլուծության ենթարկում քաղաքական կուսակցությունների և շարժումների ծրագրերը: Մարդիկ շատ ավելի գնահատում են քաղաքական առաջնորդին՝ առաջին հերթին նրա մասին կարծիք կազմելով հեռուստատեսային «ծանոթության» տպավորության տակ: Պ.Շամպանը գրում է. «ՁԼՄ-ն, հատկապես տեղեկատվության աուդիտ-տեսողական միջոցները, խորհրդանշական ազդեցություն ունեն, դա արտահայտվում է այս կամ այն խնդիրները ձևակերպելու, խոսքի ուժով ստեղծվող երևույթներ ստեղծելու, այսինքն՝ զանգվածներին որոշակի աշխարհայացքային տեսողություն պարտադրելու հնարավորության մեջ, ինչին հնարավոր է լինում հասնել լայն հանրության վրա տեսողական կերպարների արդյունավետ կիրառման շնորհիվ» [5]: Այսինքն՝ կուսակցության առաջնորդի կամ ներկայացուցչի դրական իմիջն արդեն իսկ տվյալ կուսակցության համար ընտրողների համակրանքը շահելու և առավել շատ ձայներ ստանալու գրավական է:

Ցանկացած ընտրողին դիմելու և լսարանին ցանկալի թեկնածուին նախընտրած կերպով էկրանին պատկերելու հնարավորությունն էական առավելություն է տալիս մնացած բոլոր միջոցների համեմատությամբ: Հեռուստատեսության տեխնիկական միջոցները հնարավորություն են տալիս շտկել թեկնածուի արտաքին թերությունները, նրան ավելի դրական և կոմպետենտ դարձնել:

Թեկնածուի կերպարի ստեղծումը ներկայացնում է ոչ թե նրա նկարագրությունը, այլ «իրական ֆիզիկական հատկանիշների համապատասխանեցումը առկա սոցիալական կողմնֆիկացիայի համակարգին, հնարավոր ավելի դրական կամ բացասական տարրերի բացահայտումը, որոնց հիման վրա էլ կառուցվում է իմիջը» [6]:

Հասարակության հետ կապերի ձևավորման տեխնիկական օգտագործվել է բոլոր ժամանակների քաղաքական գործիչների կողմից: Արիստոտելը առաջինն էր, որը նշեց քաղաքական գործունեության հաղորդակցական կողմը՝ այն մեկնաբանելով որպես շփման բարձրագույն ձևերից մեկը. քաղաքականությունը ծառայում էր հանրային շահին, որի շարժիչ ուժը ըստ էության հանրային կարծիքի ձևավորումն ու կառավարումն էր [7]: Ներկայում հանրային կարծիքի ձևավորման լավագույն միջոց է հանդիսանում սոցիալական ցանցերում թեկնածու-առաջնորդին գովազդելը, ինչը, ըստ մասնագետների, մեծ ազդեցություն է գործում առաջնորդի իմիջի ձևավորման և ընտրողների հոգեբանության վրա: Ցիցերոնը, իր հերթին, գտնում էր,

որ քաղաքական շփման նպատակը «համընդհանուր կարգուկանոնի» սահմանումն է, փաստորեն նրա տեսանկյունից քաղաքական հաղորդակցությունն իրավական տեսք է ստանում:

Ընդհանրապես, քաղաքական լիդերության և քաղաքական լիդերի կերպարի միջև երբեմն կարող են հակասություններ նկատվել.

- Այսօր հասարակությունը պահանջում է քաղաքացիական պատասխանատվություն ունեցող արհեստավարժ լիդերներ, որոնք կարող են դիմակայել ՏՏ զարգացող ոլորտի մարտահրավերներին, որոնք կարողանում են հստակ քաղաքական նպատակներ դնել և հասնել դրանց (հասարակության համար այդքան էլ կարևոր չէ՝ արդյոք այդ նպատակը և դրա իրականացումը պայմանավորված են կուսակցության ծրագրային դրույթներով, թե ոչ, կարևորը տվյալ լիդերի նկատմամբ վստահության առկայությունն է): Այսօր հետխորհրդային հասարակությունների ներսում տեղի է ունենում ավանդական արժեքների վերարժևորում, ինչի շրջանակում էլ քաղաքական լիդերների նկատմամբ նոր պահանջներ են սահմանվում:
- Ցածր քաղաքական մշակույթը նպաստում է քաղաքական լիդերի դրական իմիջի ձևավորմանը՝ որպես կուսակցության գործունեության հաջողության գրավական: Մա տեղի է ունենում, երբ հասարակության ներսում գրեթե բացակայում են արժեքային կողմնորոշիչները՝ քաղաքական լիդերության իրական դրդապատճառների գիտակցումը, քաղաքական նվիրվածությունը, քաղաքական արդյունավետությունը: Սրանց առկայությունը կարևոր է նրա համար, որպեսզի հասարակությունը կառավարվի ոչ թե սեփական շահի, այլ հանրային բարեկեցության համար, որի դեպքում էլ առաջին պլան է մղվում հանրային կարծիքը: Այստեղ տեղին է նշել գերմանացի քաղաքագետ Է.Նոել-Նոյմանի կարծիքը, որն առանձնացնում է հանրային կարծիքի ձևավորման երկու հիմնական աղբյուր՝ մարդու կողմից իրավիճակին անմիջականորեն հետևելը, այս կամ այն երևույթին հավանություն տալը կամ չտալը և ԶԼՄ-ն ու նրանց «ժամանակը», որը նրանք ծնում են [8]:
- Որպես սոցիալ-հոգեբանական ֆենոմեն՝ հանրային կարծիքը հանդիսանում է սոցիալական երևույթների և զանգվածների գործողությունների ակտիվ խթանիչ, որն ընդունակ է վերջիններիս լայն ընդարձակում կամ կայունություն տալ տարբեր, հաճախ բավական երկար ժամանակ: Հանրային կարծիքի ձևավորման գործունեությունը կապված

է որոշակի տեղեկատվական դաշտի ստեղծման հետ: Օրինակ, սոցիալականացման տարրերից մեկն է հանդիսանում այդ դաշտում անհատին ներգրավելը: Հասարակական կարծիքը հանրային կյանքում կարևոր սոցիալական երևույթ է, որն ի վիճակի է փոխել կամ ազդել որդեգրած քաղաքականության վրա, և հետագայում գործընթաց՝ որոշակի քաղաքական ուղղության կամ նպատակի համար ձևավորել կոնկրետ հասարակական կարծիք: Ըստ էության, քաղաքական փորձ և զարգացած քաղաքական մշակույթ չունեցող հասարակությունների առկայությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ քաղաքական լիդերները կոչ են անում կոնկրետ քաղաքական գործողությունների՝ հանդես գալով այս կամ այն սոցիալական խմբի անունից, և ձևավորում հասարակության կողմից ընդունելի հավաքական կերպար, որը հստակեցում չի դնում կուսակցություն-կուսակցության առաջնորդ հասկացությունների միջև:

Միևնույն ժամանակ, պետք է ընդգծել, որ քաղաքական լիդերության խնդրի ընկալման մեջ որոշակի փոփոխություններ են տեղի ունենում: Եթե նախկինում լիդերն ընկալվում էր՝ ելնելով լոկ իր սոցիալական դերից՝ որպես կուսակցության կամ ազգային առաջնորդ, ապա այսօր շեշտադրվում է լիդերի անձը:

Հասարակության համար կարևոր նշանակություն է ստանում, թե այս կամ այն քաղաքական գործիչն ինչպիսի անձնային որակներով է օժտված, ինչ խորհրդանիշներ, զգացմունքներ, գաղափարներն են ասոցացվում նրա հետ: Այս երևույթը կապված է քաղաքականության տեղեկատվական ռեսուրսի զարգացման հետ, որը քաղաքական գործչին, կուսակցության առաջնորդին ներկայացնում է նրա վարքի, անձնական ոճի, անձնական հմայքի և այլ տեսանկյուններից, ինչպես նաև «հանրային քաղաքականությանը» անցմամբ իր օրինաչափություններով:

Ընդհանրացնենք: Կուսակցության հաջողության համար կարևորագույն նշանակություն ունի նրա քաղաքական առաջնորդի կերպարը, քանի որ արդիականացող հասարակություններում ժողովրդավարական ինստիտուտների անկատարության և կայացած քաղաքացիական հասարակության բացակայության պայմաններում ընտրազանգվածի հիմնական մասի համար կարևորվում է ոչ թե կուսակցության քաղաքական դրույթների, ծրագրային նպատակների և գործունեության ուսումնասիրումը, այլ այն, թե դա ինչպես է ներկայացվում տվյալ կուսակցության առաջնորդի կողմից՝

հաշվի առնելով առաջնորդի ընկալման հոգեբանական չափանիշները, թե ինչպես է լիդերը ներկայացվում հեռուստա-տեղեկատվական տարբեր տեխնիկական միջոցների կողմից: Այս հասարակություններում կուսակցությունը և նրա առաջնորդը հիմնականում նույնանում են՝ դրանով իսկ պայմանավորելով կուսակցության իմիջի ընկալման անմիջական կապը նրա առաջնորդի ձևավորած իմիջի հետ:

Մարտ, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Захарова С.Е.*, Психологические особенности имиджа ведущих политических партий Российской Федерации, 19.00.05, Москва, 2002, с. 5.
2. *Ирхин Ю.В., Зотов В.Д., Зотова Л.В.*, Политология, М., Юрист, 2001, с. 308.
3. *Отц Е.В.*, Имидж политического лидера и социально-психологические особенности его влияния на отношения электората, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук, М., 2005, с. 18.
4. *Berd P.*, Sell yourself, London, 1994, p. 114.
5. *Шампань П.*, Двойная зависимость. Несколько замечаний по поводу соотношений между полями политики, экономики и журналистики // Socio-Logos'96, М., 1996, с. 209.
6. *Лисовский С.Ф.*, Политическая реклама. М., ИВЦ «Маркетинг», 2000, <http://evartist.narod.ru/text7/04.htm>
7. *Аристотель*, Политика// Аристотель, Сочинения в 4-х т., М., Мысль, 1983, Т. 4, с. 376-644.
8. *Ноэль-Нойман Э.*, Общественное мнение, Открытие спирали молчания, М., Прогресс-Академия, 1996, с. 351.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Վահե Պողոսյան

Ամփոփագիր

Հոդվածում հիմնավորվում է այն գաղափարը, որ հետխորհրդային հասարակություններում քաղաքական լիդերները հիմնականում նույնանում են իրենց ներկայացրած կուսակցությունների հետ, ինչի արդյունքում քաղաքական լիդերի հանրային դրական կերպարի ձևավորումը ՉԼՄ-ի միջոցով հանդիսանում է տվյալ կուսակցության կողմից ընտրողների քվեների ստացման կարևոր գրա-

վական: Բացի այդ, դրական քաղաքական կերպարը նպաստում է իր ներկայացրած կուսակցության հանրային լեգիտիմ ընկալմանը, որը կուսակցությանը վստահեղու կարևոր գրավական է:

ПОЛИТИЧЕСКИЙ ЛИДЕР КАК ЗАЛОГ УДАЧИ ПОЛИТИЧЕСКОЙ ПАРТИИ

Vare Pogosyan

Резюме

В статье обосновывается идея, что в постсоветских обществах политические лидеры в основном ассоциируются с политическими партиями, представителями которых они являются, а создание положительного политического имиджа с помощью СМИ является залогом получения голосов избирателей в пользу данной партии. Также с помощью положительного имиджа лидера формируется общественное доверие к партии и к ее деятельности.

THE POLITICAL LEADER AS A POLITICAL PARTY'S KEY TO SUCCESS

Vahe Poghosyan

Resume

The article substantiates the idea that in the post-soviet societies the political parties are mostly identified with their political leaders, and the creation of a positive political image with the help of the mass media is the key to securing the electorate's votes in favor of the party. Also, with the help of a positive image of the leader, public confidence towards the party and its activities is formed.

«21-ԴԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 22.05.2018թ.
Թիվ 2 (78), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում